




# ԶԱՄԻԱԾԻՆ





Ի Ը  
Տ Ա Ր Ի



# ԷԶՄԻԱԾԻՆ

ՈՐ. 15.458




ՊԱՇՏՆԱԿԱՆ  
ԱՄՍԱԳԻՐ  
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ  
ԱԹՈՌՈՒՅ  
Ս. ԷԶՄԻԱԾՆԻ

ԿՈՄ ԵՐ Կ

1972






ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

|  | Էջ |
|--|----|
| ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ցավակցական կոնդակը հայ մեծ նկարիչ Մարտիրոս Սարյանի մահվան առթիվ . . . . .                          | 3  |
| ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ—Աստուծու խոսքի գործությունը . . . . .   | 5  |
| Հաղորդագրություն . . . . .   | 8  |
| Ինումին օրթողոքս եկեղեցու պատվիրակությունը Մայր Աթոռում . . . . .  | 9  |
| Հանգիստ Մարտիրոս Սարյանի . . . . .   | 15 |
| Մարտիրոս Սարյանի նամակը Գարեգին վարդապետ Հովսեփյանցին . . . . .  | 17 |
| ՄԱՅՐ ԱԹՈՒՌՈՒՄ . . . . .  | 19 |
| ՌՈՒԲԵՆ ՔԱՀԱՆԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ—Մարդու հարությունը որպես կենսաֆաստատ փիլիսոփայություն Ավետարանի մեջ . . . . .              | 21 |
| ԱՐՏԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍՄԲԱՏՅԱՆՑ—Սուրբ Էջմիածնի միաբանության գրական-կրթական գործունեությունը և Մայր Աթոռի տպարանը . . . . . | 27 |
| Սկսուածք ութ-ձայների (նոտաներ) . . . . .   | 43 |
| ՄԵՍՐՈՊ ՎԱՐԴԱՊԵՏ ՄԱՔՍՈՒԴՅԱՆՑ—Կենդանագրի ծագումն ու զարգացումը հայ մանրանկարչության մեջ . . . . .                      | 48 |
| ՄԻՀՐԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՄՈՒՐԱԳՅԱՆ—Հայրենասեր ճղճարական տ. Հովհաննես քահանա Տիր-Մկրտչյան . . . . .                          | 57 |
| Օ. Ս. ԵԳՆՅԱՆ—Սարգիս արքեպս. Ջալալյանցի «Մանապարհորդությունի ի Մեծն Հայաստան» գրքում հիշատակվող ձեռագրերը . . . . .   | 60 |


**ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ  
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ, ԷՋՄԻԱԾԻՆ  
«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин».  
Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine, Arménie, URSS



Հանդիսանում է արտադրության 5/VI 1972 թ., Ստորագրված է տպագրության 8/VI 1972 թ.:  
Տպագրական 4 մամուլ, թուղթ 60x84<sup>1</sup>/<sub>8</sub>, պատվեր 354

Մայր Աթոռ և Էջմիածնի տպարան, 1972 թ.



Հ Բ Ա Մ Ա Ն Ա Ի

**Տ. Տ. Վ Ա Զ Գ Ե Ն Ի Ա Ռ Ա Զ Ն Ո Յ**

Վ Ե Զ Ա Փ Ա Ռ Ի Ե Ի Ս Ր Բ Ա Զ Ն Ա Գ Ո Յ Ն Կ Ա Յ Ո Ղ Ի Կ Ո Ս Ի  
Ա Մ Ե Ն Ա Յ Ն Հ Ա Յ Ո Յ

Մ Ա Մ Ա Բ Ո Յ Ո Ւ Մ  
Գ Դ Ր Ա Ս Ս Ա Մ  
Մ Ա Կ Ա Յ Վ Ի Ր Կ Ի Գ Տ Ա Ն  
Յ Ո Ռ Ռ Ռ Ա Ս  
Վ Ե Ր Ա Մ Ի Ե Զ Ի Ս



1972





ՎԵՀԱՓԱՌԻ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՅԱՎԱԿՅԱԿԱՆ ԿՈՆԴԱԿԸ  
ՀԱՅ ՄԵՇ ԿԿԱՐԻՉ ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐՅԱՆԻ  
ՄԱՀՎԱՆ ԱՌԹԻՎ

ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՎՇՏԱՀԱՐ ՏԻԿԻՆ ԼՈՒՍԻԿ ՍԱՐԵԱՆԻՆ  
ԵՒ ՍԳԱԿԻՐ ԸՆՏԱՆԻՔԻՆ, Ի ԳԱՀԷ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱԻՈՐՉԻ  
ԵՒ Ի ԳԱՀԱԿԱԼԷ ՆՈՐԻՆ

Ե Ր Ե Ի Ա Ն

Հայկական և կարչական արուեստի մեծանուն Վարպետը, Մարտիրոս Սարեանը, իր լոյս աչքերը փակեց ու խաղաղութեամբ անցաւ միւս ափը կեանքին, յաւեո ապրելու համար:

Սուրբ Էջմիածնի սեղանի առաջ ծնկաչոք Մենք աղօթում ենք նրա հոգու համար և հաւատում ենք նրա անմահութեան:

Փայլուն շնորհներով օժտուած Վարպետ Մարտիրոսը, ստեղծարար աշխատանքի ճանապարհով որոնեց ու հասաւ իր հարազատ ժողովրդի կեանքի ու հոգու ամենախոր ակունքները և դարձաւ նրանց վաւերական ու ինքնատիպ արտայայտիչը իր արուեստի գործերով, իր մտածումի ու զգացմունքի խոյանքներով և իր ժայռակերտ հայրենասիրութեամբ:

Այսօր բոլորս, թէև սգաւոր, սակայն անհունօրէն մխիթարուած ենք որ Սարեանը ծնունց մեր ժողովրդի ծոցում, և մեր «փոքր ածուն», նրա գործով ու համբաւով մի անգամ ևս բարձրացաւ համամարդկային արժէքների կատարին:

Մխիթարուած ենք նաև այն գիտակցութեամբ թէ անմահացած Վարպետը, յետ այսու առանել հզօրութեամբ պիտի շարունակէ բոցավառել սրտերը մեր նոր սերունդների, իր ոգու հրդեհով: Այն ոգու, որով նա տենչում էր երկընքի արևները իջեցնել վերածնունած Հայոց աշխարհ ու իր պաշտելի ժողովրդին բաշխել՝ աւելի լոյս, աւելի միասնական ինքնագիտակցութիւն ու աւելի արդար ապագայ:

Մեր օրերի և գալիք ժամանակների համար Մարտիրոս Սարեանը միշտ պիտի մնայ, իբրև մարդ՝ սուրբ յիշատակ, իբրև արուեստագէտ՝ յաղթական մի կամար հայ ոգեկանութեան, իբրև Հայաստանի քաղաքացի՝ անլռելի պատգամ:

Օրհնութիւն նրա հոգուն, նրա գործին, նրա երազանքներին:

Օրհնութիւն նաև ձեզ, տիկին Լուսիկ, և ձեր բոլոր հարազատներին, հոգւոյ մխիթարութեամբ ու խաղաղութեամբ: Ամէն:

Տուա կոնդակս ի 10-ը մայիսի  
1972 փրկչական ամի,  
և ի տումարիս հայոց ՌՆԻԱ,  
ի մայրավանս սրբոյ Էջմիածնի  
ՀՄՐ. 782

*Կապույտ*

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԱՐԷ ԵՒ ԿԱՌՂԻԿՈՍ  
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ





## Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

ԱՍՏՈՒԾՈՒ ԽՈՍՔԻ ԶՈՐՈՒԹՅՈՒՆԸ

(Հոգեգալստյան տոնի առիթով)

Աստվածաշնչի առաջին էջում, Ծննդոց գրքի մեջ (Ա 1—31), գեղեցիկ ու պատկերավոր կերպով նկարագրվում է տիեզերքի վեցօրյա արարչագործության և ապա մարդու ստեղծման սրտատուչ պատմությունը.

«...Եւ երկիր էր աներևոյթ և անպարատ, և խաւար ի վերայ անդնոց. և Հոգի Աստուծոյ շրջէր ի վերայ ջուրց: Եւ ասաց Աստուած. Եղիցի լոյս»...

Ողջ համագույքը ստեղծվում է **Աստուծոյ խոսքի զորությամբ**: Աստված հրամայում է և նյութը՝ հնազանդվում իր Արարչին, որ «ածն ի չգոյէ ի գոյ զչգոյսն եւ եցոյց յոչնչէ զչէսն» (Եզեկի):

Տիեզերքը իր բանական ստեղծագործությամբ, իր հրաշալի կարգ ու կանոնով Աստուծոյ մեջ «ի գործութեան» եղած խոսքի մարմնավորումն է, զգալի և շոշափելի տեսակների բազմազան ձևերի և կերպերի մեջ, տեսակներ, «որք իրեանց փոփոխմամբն ցուցանեն զհրեանց սպասաորոյթիւնն ըստ սահմանելոյն» (Հանախապատում):

Հին աշխարհի մեծ մտածողներից սաղմուներգու Դավիթ մարգարեան տիեզերքի ստեղծագործության հրաշալի իրողությունը. նույնպես վերագրում է Աստուծոյ խոսքի զորությանը և ներգործությանը: Աստված «Ասաց և եղեն, հրամայեաց և հաստատեցան» (Սաղմ. ԺԽԸ 5):

«Ամենայն կենդանութեան աղբիւր» Աստուծոյ խոսքը ներշնչել և առաքելության էր կոչել Հին կտակարանի բոլոր նահապետներին և մարգարեներին: «Եղև Բան Տեառն առ իս և ասէ»:

Ավետարանները հաստատապես վկայում են **Քրիստոսի խոսքի մեծ ազդեցության** մասին մարդկային հոգիների, մտքերի և մարդկանց սրտերի վրա. «Ժողովուրդն ամենայն կախեալ կային զմմանէ լսել» (Ղուկ. ԺԹ 48) և միշտ «ամենայն ժողովուրդն կանխէր ընդ առաօտս առ նա ի տանարն լսել ի նմանէ» (Ղուկ. ԻԱ 38), որովհետև «ոչ երբեք այնպէս խօսեցաւ մարդ» (Հովհ. Է 46), ինչպէս խոսում էր Քրիստոսը:

Հեթանոսաց մեծ առաքյալը՝ Պողոսը, ժամանակակից հելլենիստական աշխարհը նրվանում է իր աստվածատուր խոսքի հզորությամբ: Հեթանոսները քարոզության ժամանակ լսելով նրա խոսքը Փոքր Ասիայում, Աթենքում, ասում էին. «Աստուածք նմանեալք մարդկան իջին առ մեզ... և կոչէին զՊաղոս՝ Հերմէս, քանզի նա էր առաջնորդ քանին» (Գործք ԺԴ 10—11):

Քրիստոսի համբարձումից տասն օր հետո, քրիստոնեական առաջին եկեղեցին հաստատվում է Երուսաղեմում Աստուծոյ խոսքի քարոզչության զորությամբ:

Այս անգամ Աստուծոյ խոսքը հրաշալի

արդարև քննարկում և հարգում է ոչ թե «աներե-  
մելի», անպատրաստ» նյութի վրա, ոչ թե  
բնության մեջ, այլ մարդկային հոգիների,  
տղամտերի և կամքերի աշխարհին վրա:  
Հասնա՞նք մեզ մենու անարարները լցվում են  
վերաբերման մեջ Աստուծո խոսքի գորու-  
թյամբ և զորում անվեհեր քարոզները  
անկարողների հրկույթներ, Շջմարտության  
կենտարարներ քրիստոնեական վեհ սկզբ-  
ունքներով: Եվ այդ քարոզչության «այսպես  
հանն Աստուծոյ աներ և գորսնայր»:

Այդ, Աստուծո խոսքի գորությունը...

Այդ գորությունն է ազդում առաքյալների  
բանականության վրա, այդ գորության ներ-  
գործությանը պայծառանում են նրանց հոգի-  
ները, կամքերը ամրապնդվում վաղվա մեծ  
գործի համար. «Եւ լցան անեմեքին Հոգով  
սրբով և սկսան խօսել յայ լեզուս, որպէս և  
Հոգին տայր նոցա բարբառել» (Գործք. Բ  
4):

Ս. Հոգու էջքը Երուսաղեմի Վերնատան  
մեջ, առաքյալների վրա, Քրիստոսի համ-  
բարձումից տասն օր հետո, տոնն է ամենից  
առաջ Աստուծո խոսքի հզորության, ներ-  
գործության, ս. Հոգու միջոցով շնորհաբաշ-  
խության և առաջնորդության:

Աստուծո խոսքը ս. Հոգու էջքով զինում է  
առաքյալներին, վկայությունը տալու իրենց  
հավատքի ճշմարտության, Քրիստոսի իսաչի  
և հարության խորհրդի պատմականության:

Աստուծո խոսքով զինված, առաքյալների  
ճշմարտության Չայնը հնչում է բոլոր եր-  
կինքների տակ, բոլոր երկրներում և բոլոր  
ազգերի մեջ. «Եւ ընդ ամենայն երկիր ել  
բարբառ նոցա ի միևչև ի ծագս աշխարհի  
են խօսք նոցա» (Սաղմ. ԺԸ 5):

Եթե Բաբելոնյան աշտարակաշինությանը,  
լեզուների խառնակումով, նշում են ս. Գրոց  
մեկնիչները, մարդկային ազգը բաժանվեց,  
սոսիա, ուրեմն, Հոգեգալստյան տոնին Աս-  
տուծո խոսքի մեջ վերստին վերամիավոր-  
վեց մարդկությունը, գԱստված որոնելու իր  
սրտագին ճիգերի մեջ:

Հոգեգալստյան տոնը կամ Պենտեկոստեն  
նորակազմ քրիստոնեական եկեղեցու մեծա-  
գույն և առաջին իրադարձությունն է, որի հի-  
շատակը տոնվում է ամեն տարի Հիմանց  
հիսուններորդ օրվա կիրակիին:

Հոգեգալստյան տոնը եկեղեցու ս. Հոգով  
մկրտության և հաստատման օրն է. «Զի  
Յովհաննէս մկրտեաց ի ջուր, այլ դուք մկրտ-  
տիցիք ի Հոգին սուրբ» (Գործք Ա 5): Ս. Հո-  
գու մշտական ներկայությունը եկեղեցու մեջ,  
եկեղեցու կենսունակության և գոյության ե-  
րաշխիքն է:

Քրիստոնեական եկեղեցին, առաքելական  
օրերից, նշել է ս. Հոգու գալստյան տոնը,

որպես Աստուծո խոսքի ներգործության,  
հոգևոր տվչության և շնորհաց օր:

Հայ եկեղեցին, սակայն, ավելի մեծ հան-  
դիսություն է տվել Հոգեգալստյան տոնին, ս.  
Ներսես Շնորհալի Հայրապետի կարգադրու-  
թյամբ: Հնում բոլոր եկեղեցիները, այդ թվում  
նաև մերը, միօրյա հանդիսությամբ էին տո-  
նում Հոգեգալուստը, ինչպես օրթոդոքս եկե-  
ղեցին մինչև այսօր: Ս. Ներսես Շնորհալին  
տնօրինել և սահմանել է, որ մի ամբողջ յոթ-  
նյակի ընթացքում տոնվի Հոգեգալուստը,  
«երգօք և ընթերցումովք» (Գիրք Ճաջոց,  
Վաղարշապատ, 1872, էջ 474), հակառակ  
այն իրողության, որ այդ յոթնյակը «եղիա-  
կան պահքի» և կամ «ամարան աղուհացքի»  
շրջանն է:

Հայ եկեղեցին, արդարորեն, այնքան մեծ  
կարևորություն և հանդիսավորություն է նվի-  
րել այս տոնին ոչ միայն զուտ կրոնական,  
հոգևոր իմաստով, այլ նաև ազգային-եկեղե-  
ցական տեսակետից, որովհետև Հոգեգա-  
լստյան տոնի հանդիսությունը սկիզբն է  
հայ եկեղեցուն միայն հատուկ ազգային-ե-  
կեղեցական հիշատակներին նվիրված այն  
մի շարք սրտագրավ, անկյունադարձային  
նշանակություն ունեցող տոներին, որոնց նը-  
պատակն է շեշտել հայոց հողի վրա և հայ  
հոգիների մեջ Աստուծո խոսքին էջքը, Հա-  
յաստանում Ավետարանի քարոզության ար-  
մատավորումը, հայ ժողովրդի պատմական  
ու ամբողջական դարձը դեպի քրիստոնեու-  
թյուն, տոներ, ինչպիսիք են, ըստ մեր եկե-  
ղեցական օրացույցի, ս. Հռիփսիմյանց, ս.  
Գայանյանց կույսերի նահատակության հան-  
դիսությունը, ս. Գրիգոր Լուսավորչի «Ելանե-  
լոյն ի վիրապէն» տոնը և ապա «Տօն Վա-  
թուղիկէ եկեղեցույ սրբոյ Էջմիածնի»:

Ս. Հոգին անձնավորում է Աստուծո խոս-  
քը, աստվածային իմաստությունը, հոգևոր,  
բարոյական այն շնորհները, որոնցով ղեկա-  
վարվում է եկեղեցին:

Քրիստոնեական եկեղեցին իր երկուհա-  
զարամյա պատմությունը անցել է ս. Հոգու  
ղեկավարությամբ, Աստուծո խոսքի գորու-  
թյամբ: Վասնզի, նա՛ է, որ «քննէ գխորս Աս-  
տուծոյ... Նա է, որ իր կենդանարար գորու-  
թյամբ «գամենայն պարզես ի մեզ ծաղկեալ  
և անեցեալ, որ ձեռնադրես առաքեալս, լցու-  
ցանես մարգարէս, ուսուցանես վարդա-  
պետս» (Նարեկացի):

Ներսես Լամբրոնացին իր հոյակապ «Ներ-  
բող ի գալուստ ամենասուրբ Հոգույն սրբոյ»  
ճառին մեջ, որն ընթերցվում է Հոգեգալստու-  
յան օրը, երեկոյան ժամերգությունից հետո,  
խոսում է ս. Հոգու առաջնության մասին ե-  
կեղեցու և հավատացյալի կյանքում. «Եւ որ





## Հ Ա Ղ Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Նորին Սրբություն S. S. Վազգեն Ա Ամենայն Հայոց Հայրապետի հրավերով և Նորին Սրբություն Ռումինիայի Ժուստինիան Պատրիարքի կարգադրությամբ սույն թվականի մայիսի 16-ից մինչև 24-ը Մայր Աթոռ ս. Էջմիածին այցելեց Ռումին օրթոդոքս սուրբ եկեղեցու մի պատվիրակություն, որի կազմում էին նորին սրբազնություն Բանատի միտրոպոլիտ 'Նիկոլայե Դերմյանուն, պատրիարքական փոխանորդ նորին սրբազնություն Անդիմ 'Նիկա եպիսկոպոսը, աստվածաբան-դասախոս արժանապատիվ Ենե Բրանիշտե քահանան՝ ողեկցությամբ հոգեշնորհ տ. Զարեհ ծ. վրդ. Պարոնյանի՝ Բուխարեստի հայոց ս. Հրեշտակապետաց եկեղեցու հոգևոր հովվի՝ որպես թարգման:

Ռումին օրթոդոքս եկեղեցու պատվիրակությունը եղբայրական ջերմ սիրով է ընդունվում Ամենայն Հայոց Հայրապետի, ս. Էջմիածնի և Երևանի եկեղեցիների հոգևոր դասի կողմից:

Ռումին բարձրատիճան հոգևորականները մայիսի 20-ին, շաբաթ օրը, երեկոյան, մասնակցում են ժամերգությանը և մայիս 21-ին, կիրակի օրը՝ սուրբ պատարագին, ս. Էջմիածնի Մայր տաճարում, ուր Հայոց Հայրապետի և Մայր Աթոռի միաբանության և հայ հոգևորականության հետ միատեղ աղոթում են Գրիստոսի սիրույն մեջ բոլոր եկեղեցիների միության և համայն աշխարհի խաղաղության համար:

Ռումին օրթոդոքս եկեղեցու պատվիրակությունը այցելում է պատմական սրբատեղիները՝ ս. Հովհաննես, ս. Գայանե, ս. Գեղարդ, Օշական, ինչպես նաև Երևանի ս. Սարգիս եկեղեցի, ս. Մեսրոպ Մաշտոցի անվան ձեռագրաց Մատենադարան, Պատմության թանգարան և 1915 թվականի հայ նահատակաց հուշարձան:

Բարձրատիճան Ռումին հյուրերը այցելություն են տալիս նաև Մայր Աթոռի հոգևոր ճեմարանին, ուր արժանապատիվ պրոֆեսոր Ենե Բրանիշտե քահանան երկու դասախոսություններ է կարդում ուսանողությանը:

Ռումին օրթոդոքս եկեղեցու պատվիրակության սույն բարեկամական այցելությունը հանդիսանում է մի երջանիկ առիթ ևս՝ խորացնելու հայ և Ռումին երկու եկեղեցիների միջև անկեղծ բարեկամությունը և փոխադարձ գնահատանքը պետարանական և Էկումենիկ ոգով:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՒՒ

24 մայիսի 1972 թ.,

Ս. Էջմիածին





ՌՈՒՄԻՆ ՕՐԹՈԴՈՔՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ  
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

ԺԱՄԱՆՈՒՄ

Հայոց Հայրապետի եղբայրական և սիրալիր հրավերով ու ումին օրթոդոքս եկեղեցու Նորին Արքայություն **Տ. Ժուստինիան Պատրիարքի** կարգադրությամբ սույն թվականի մայիսի 16-ին, երեքշաբթի օրը, երեկոյան ժամը 22-ին, բարի կամքի այցելությամբ ուխտավորաբար Մայր Աթոռ է ժամանում ումին օրթոդոքս եկեղեցու պատվիրակությունը, որի կազմումն էին՝ նորին սրբազնությունն **տ. Նիկողայե Գորնչանու միտրոպոլիտը** Բանադի (պատվիրակության ղեկավար), նորին սրբազնությունն **տ. Անդիմ Նիկա եպիսկոպոսը՝** պատրիարքական փոխանորդ, և արժանապատիվ **տ. Ենե քահանա Բրանիշտեն՝** Բուխարեստի աստվածաբանական ինստիտուտի պրոֆեսոր: Ռումինացի հարգարժան հյուրերին ընկերակցում էր Մայր Աթոռի միաբան և Բուխարեստի հայոց ս. Հրեշտակապետաց եկեղեցու հոգևոր հովիվ հոգեշնորհ **տ. Զարեհ վրդ. Պարոնչանը՝** որպես թարգման:

Երևանի օդանավակայանում, հանուն Հայոց Հայրապետի, ումին օրթոդոքս եկեղեցու պատվիրակությանը դիմավորում և բարի գալուստ են մաղթում Մայր տաճարի լուսարարապետ **տ. Հուսիկ եպս. Սանթրոպյանը** և Մայր Աթոռի միջեկեղեցական հարաբերությունների վարիչ **տ. Արսեն վրդ. Բերքչանը:**

Այնուհետև հարգարժան հյուրերը ավտոմեքենաներով առաջնորդվում են Երևան՝ հայրապետական վիլլան, որպես Հայոց Հայրապետի և Մայր Աթոռի թանկագին հյուրեր:

**Մայիսի 17-ին, չորեքշաբթի օրը,** առավոտյան ժամը 11-ին, պատվիրակությունը, **տ. Արսեն վարդապետի** ուղեկցությամբ, ժամանում է Մայր Աթոռ:

Մայր տանարի գլխավոր մուտքի առաջ Մայր տանարի լուսարարայետ տ. Հուսիկ եպիսկոպոսը, շրջապատված Մայր Աթոռի միաբանությամբ, հանուն Հայոց Հայրապետի, ողջունում և բարի գալուստ է մաղթում հարգարժան բարձրաստիճան հյուրերին և առաջնորդում դեպի Իջման ս. սեղան, ուր ծնրատիր տ. Նիկողայե Գորնյանու միտրոպոլիտը, տ. Անդիմ եպիսկոպոսը, տ. Ենե քահանան և տ. Զարեհ վարդապետը իրենց աղոթքն են կատարում երկյուղած բարեպաշտությամբ:

Այնուհետև հարգելի հյուրերը առաջնորդվում են Վեհաբան՝ ողջունելու Հայոց Հայրապետին և Նրան հաղորդելու ռումին օրթոդոքս եկեղեցու Տ. Ժուստինիան Պատրիարքի եղբայրական ողջույններն ու հարգանքները:

Հայոց Հայրապետը Վեհաբանում, Իր ընդունելության արանում, հոգեկան բերկրանքով և արտագին ուրախությամբ ողջունում է ռումին պատվիրակության ժամանումը Մայր Աթոռ և բարի գալուստ մաղթում: Հայոց Հայրապետի և տ. Նիկողայե միտրոպոլիտի, տ. Անդիմ եպիսկոպոսի միջև տեղի է ունենում ջերմ գրույց՝ արտագին մթնոլորտում, որին ներկա են լինում նաև տ. Հուսիկ եպիսկոպոսը, տ. Արսեն, տ. Զարեհ վարդապետները և տ. Ենե քահանան:

Տ. Նիկողայե միտրոպոլիտը, հանուն ռումին եկեղեցու պատվիրակության, իր զգացված շնորհակալությունն ու երախտագիտությունն է հայտնում Հայոց Հայրապետին՝ Նրա հրավերով առաջին անգամ լինելով ս. Էջմիածին ուխտի եկած լինելու և ջերմ դիմավորության համար:


Ժամը 15-ին հարգարժան հյուրերը Վեհաբանում սեղանակից են լինում Հայոց Հայրապետին և ապա այցելում Մայր տանար, եկեղեցական արվեստի թանգարան ու Հին Վեհաբան:

#### ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՈՒՆՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆ

**Մայիսի 18—20 օրերին** ռումին օրթոդոքս եկեղեցու պատվիրակությունը, ս. Էջմիածնում գտնված օրերին, դիտում է մայրաքաղաքի տեսարժան վայրերն ու հուշարձանները, այցելում ս. Մեսրոպ Մաշտոցի անվան ձեռագրաց Մատենադարան, ուր հիացմունքով ծանոթանում է հայ մշակույթի և արվեստի անկրկնելի գանձերին, Ծիծեռնակաբերդ՝ հայ նահատակաց հուշարձան, ապա Օշական, ս. Մեսրոպի գերեզման ու դամբարան՝ իրենց հարգանքը մատուցելու մեծ վարդապետի գործին և հիշատակին:

Հարգարժան հյուրերը այնուհետև այցելում են պատմական Վաղարշապատի հնագույն եկեղեցիների հուշարձաններ՝ ս. Հռիփսիմե տանար, ս. Գայանե և Զվարթնոցի ավերակներ:

**Մայիսի 19-ին, ուրբաթ օրը**, ռումին եկեղեցու պատվիրակությունը, ընկերակցությամբ տ. Հուսիկ եպիսկոպոսի, տ. Արսեն, տ. Զարեհ վարդապետների, մեկնում է ս. Գեղարդի պատմական վանք: Նարեկ վարդապետը և վանքի հոգևորական միաբանները ու պաշտոնեությունը հարգալի ուրախությամբ ընդունում են բարձրաստիճան հյուրերին և միատեղ աղոթում գլխավոր եկեղեցու մեջ: Ապա հյուրերը ծանոթանում են հանգամանորեն վանքի պատմությանը և եկեղեցական կառույցների առանձնահատուկ ճարտարապետությանը և վերջին 7—8 տարիների ընթացքում Վեհափառ Հայրապետի նախաձեռնությամբ կատարված շինարարական և վերանորոգչական աշխատանքներին: Այնուհետև հարգարժան հյուրերը և նրանց ողնեկող անձինք մեծարվում են ս. Գեղարդի վանքի նորակերտ վանատանը:



Դեպի Երևան իրենց ճանապարհի վրա ռումին եկեղեցու պատվիրակությունը այցելում է նաև պատմական Գառնի տաճար:

Երեկոյան ժամը 20-ին մեր հարգարժան հյուրերը Երևանում, Հայֆիլհարմոնիայի համերգային մեծ դահլիճում, ներկա են լինում սիմֆոնիկ համերգի:

### ԱՅՑ ՀՈԳԵՎՈՐ ԾԵՄԱՐԱՆ

**Մայիսի 20-ին, շաբաթ օրը**, առավոտյան ժամը 10-ին, ռումին եկեղեցու պատվիրակությունն այցելում է Երևանի պ. Սարգիս եկեղեցի, Պատմության թանգարան և Էրեբունի և ժամը 15-ին ժամանում Մայր Աթոռ:

Ժամը 18.30-ին Հայոց Հայրապետը եկեղեցական թափորով հանդիսավորապես առաջնորդվում է Մայր տաճար՝ ընկերակցությամբ տ. Նիկոլայե միտրոպոլիտի, տ. Անդիմ, տ. Կոմիտաս, տ. Հուսիկ եպիսկոպոսների, Մայր Աթոռի միաբանության և քահանայից դասի՝ նախագահելու հոգեգալստյան կիրակամյո՞ւ ժամերգությանը և այս առթիվ կատարվող Էկումենիկ աղոթքին:

Ժամը 20.30-ին, Հայոց Հայրապետի գլխավորությամբ, ռումին եկեղեցու պատվիրակությունը այցելում է հոգևոր ճեմարան, ուր «Հայր մեր»-ի թիվ արտասանությունից հետո տեսուչ տ. Հովհաննես քհն. Մարությանը, հանուն դասախոսական կազմի և ուսանողության, սրտագին ուղերձով ողջունում է Հայոց Հայրապետի և Նրա թանկագին հյուրերի ներկայությունը և համատուտակի խոսում ճեմարանի նպատակի, ուսումնական ծրագրի, աշակերտության թվի և ուսանողական ստորյայի մասին:

Այնուհետև գործադրվում է գեղարվեստական մի կոկիկ ծրագիր:

Հյուրաբար Մայր Աթոռում գտնվող պրոֆ. Եմե ռումին քահանան հանդես է գալիս ռումին եկեղեցու ներքին և արտաքին առաքելությանը նվիրված բանախոսությամբ, որի թարգմանությունը կատարում է տ. Զարեհ վրդ. Պարոնյանը:

Ռումինահայ երկու ուսանողներ՝ Ա. լսարանից, հանդես են գալիս ռումիններեն արտասանությամբ: Քերոք Արթինյանը արտասանում է ռումին նշանավոր բանաստեղծ Միխայիլ Լմինեսկուի «Հարություն» քերթվածը: Հրանտ Աղաջանյանը ընթերցում է Գրիգոր Նարեկացու «Մեղքերի խոստովանություն» հատվածը՝ Նարեկից՝ Վեհափառ Հայրապետի ռումիններեն թարգմանությամբ:

Ճեմարանի երգչախումբը, տ. Մասիս արղ. Գալստյանի ղեկավարությամբ, կատարում է «Էջ Միածինն ի Հօրէ», «Գովեա, Երուսաղէմ, զՏէր» շարականները, «Երևան բաղ եմ արել» և «Ազգ փառապանծ» խմբերգերը:

Ճեմարանի նվագախումբը հանդես է գալիս հետևյալ ծրագրով. «Ով գարնանայի», «Այագյագ», «Ռումինական երգ», «Պոլյուշկա պոլե» և «Գլորիա ալելուիա»: Ծուբերտի «Ավե, Մարիա»-ն դաշնամուրի և իոնիկայի վրա միասին կատարում են Վրեժ արկ. Նաջարյանն ու Հրանտ Աղաջանյանը: Ի. Ս. Բախի «Պրելյուդ լյա միևոր»-ը դաշնամուրի վրա կատարում է Կիրակոս Հովհաննյանը:

Տեսչի հրավերով հանդիսության ժամանակ ողջույնի և օրհնության խոսքով հանդես է գալիս ռումին պատվիրակության անդամ տ. Անդիմ եպս. Նիկան, որը ջերմ շնորհակալություն է հայտնում հոգևոր ճեմարանի հարկի տակ, Հայոց Հայրապետի ներկայության, Մայր Աթոռի միաբանության, դասախոսական կազմի և ուսանողության հետ այս հաճելի հանդիպման համար և շեշտում, որ ռումին պատվիրակությունը ոչ թե այցելության է եկել ստու-



Հայոց Հայրապետը Իր թանկագին հյուրերի հետ Վեհարանի այգում XV դ. խաչքարի առաջ

վաճառչական Հայոց աշխարհ ուս. Էջմիածին, այլ ուխտագնացության, ս. Գրիգոր Լուսավորչի հետքերով, և իր խոսքն ավարտում Միխայիլ Էմինեսկուի «Ինչ եմ ես ցանկանում քեզ, քաղցր Ռումինիա» բանաստեղծությունից փոխ առնված և Հայոց երկրին ուղղված հետևյալ իղձով. «Ինչ եմ ես ցանկանում քեզ, քաղցր Հայաստան... փառավոր անցյալիդ արժանի փառավոր ապագա»:

Հոգևոր ճեմարանի հարկի տակ հանդիսությունն ավարտվում է խմբովին երգված Տերունական աղոթքով:


Այնուհետև Վեհափառ Հայրապետը հյուրերին է Աերկայացնում հոգևոր ճեմարանի հոգևորական և աշխարհական դասախոսներին:

#### ՀԱՆԴԻՍԱՎՈՐ Ս. ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՔԱՐՈՋ

**Մայիսի 21-ին, կիրակի: Հոգեգալուստ:** Օրվա մեծ տոնի առիթով Մայր տաճարում հանդիսավոր ս. պատարագ է մատուցում լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթրոյանը:

Ժամը 12-ին Վեհափառ Հայրապետը, ընկերակցությամբ տ. Նիկողայե միտրոպոլիտի, տ. Անդիմ և տ. Կոմիտաս եպիսկոպոսների և ուղեկցությամբ Մայր Աթոռի միաբանության և քահանայից դասի, առաջնորդվում է Մայր տաճար:

Մայրավանքի շրջափակում Աերկա բազմահազար հոծ բազմությունը հավատացյալի ջերմ և սրտագին արտահայտություններով ողջունում է Հայոց Հայրապետին և Մայր Աթոռի թանկագին հյուրերին՝ ռումին օրթոդոքս եկեղեցու Աերկայացուցիչներին:



ՀԱՅՈՑ ՀԱՅՏԻՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՈՐԻՆ ՄՐԱԲԱՆՏՆՈՒԹՅՈՒՆ Տ. ՆԻԿՈԼԱՅԵ ՄԻՏՐՈՊՈԼԻՏԻՑԸ ԺՈՂՁՄԱՏՎԱԾ ՀԱՅ ԵՎ ՌՈՄԻՄԻՆ  
ՄԹԹՈՐԻՈՒԹՅԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՆԵՐՈՎ

Մայր տաճարը լիքն է աղոթավոր հավատացյալ բազմությամբ: Ա. պատարագը հանդիսավոր վեհության մեջ շարունակվում է մինչև «Հայր մեր»:

**Հայոց Հայրապետը** առաջնորդվում է Ավագ սեղան և «Ամենքեան լցան հոգով սրբով» բնաբանով քարոզում է Հոգեգալստյան տոնի պատմական և հոգևոր խորհրդի և նշանակության մասին քրիստոնեական եկեղեցու կյանքում:

Այնուհետև Հայոց Հայրապետը մասնավոր սիրով և գոհունակությամբ ողջունում է Մայր տաճարի մեջ ներկայությունը ուսմին օրթոդոքս սուրբ եկեղեցու պատվիրակության, խոսում հայ և ուսմին ժողովուրդների և եկեղեցիների դարավոր, բարեկամական, եկեղեցական, մշակութային հարաբերությունների մասին և շեշտում մանավանդ այն պարագան, որ 1915 թվականի հայ ժողովրդի տարագրության և նահատակության օրերին ուսմին հայրենիքը եղբայրորեն իր գիրկը բացեց հայ ժողովրդի բեկորների առաջ: Հայոց Հայրապետը մասնավոր երախտագիտությամբ է հիշում այս հանգամանքը և իր ողջույնի խոսքն ավարտում Ռումինիայի, նրա ժողովրդի է՛լ ավելի բարօրության և երջանկության և ուսմին օրթոդոքս եկեղեցու պետ Ն. Սրբություն ժուստինիան Պատրիարքի արևշատության և է՛լ ավելի արդյունավոր հովվապետության բարեմաղթություններով:

Ավագ սեղանի առաջ, Հայոց Հայրապետի կողքին, **տ. Նիկողայե միտրոպոլիտը** հանդես է գալիս պատասխան ողջույնի և շնորհակալության խոսքով:

Նորին սրբազնությունը համառոտակի կանգ է առնում ս. Գրիգոր Լուսավորչից սկսած Մայր Աթոռ ս. Էջմիածնի կատարած նախախնամական մեծ առաքելության մասին հայ ժողովրդի հոգևոր, մշակութային և ազգային կյանքում, ապա մեծ գնահատանքով է անդրադառնում հայ և ուսմին ժողովուրդների, մշակույթների և եկեղեցիների սրտագին կապերին և որպես ուսմին օրթոդոքս եկեղեցու պատվիրակներ և Տ. ժուստինիան Պատրիարքի ներկայացուցիչներ ջերմ շնորհակալություն և երախտագիտություն հայտնում Հայոց Հայրապետին՝ ս. Էջմիածին այցելության այս բացառիկ առիթի համար և ապա կանգ առնում անցնող 16 տարիների ընթացքում հայ եկեղեցու կյանքում Հայոց Հայրապետի կատարած հոգևոր, մշակութային և շինարարական-վերանորոգչական մեծ աշխատանքների, ինչպես նաև աշխարհի խաղաղության ի նպաստ և միջեկեղեցական հողի վրա, Էկումենիկ ոգով Նրա կատարած մեծ ծառայության վրա: Նորին սրբազնությունը ջերմ ու բարի մաղթանքներով ավարտում է իր սիրո խոսքը:

### ՀՅՈՒՐԵՐԸ ՀՐԱԺԵՇՏ ԵՆ ԱՌՆՈՒՄ

Ժամը 15-ին վեհաբանում, ի պատիվ ուսմին պատվիրակության, տրվում է հրաժեշտի ընդունելություն, որին ներկա է լինում նաև ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ **Ս. Գասպարյանը**:

Ընդունելության ժամանակ ելույթներով հանդես են գալիս **Վեհափառ Հայրապետը, տ. Նիկողայե միտրոպոլիտը, տ. Կոմիտաս եպիսկոպոսը**:

ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ **Ս. Գասպարյանը** իր ելույթի մեջ ջերմորեն ողջունում է Հայոց Հայրապետի թանկագին հյուրերի՝ ուսմին օրթոդոքս եկեղեցու պատվիրակության ներկայությունը ս. Էջմիածնում և հայոց հողում, որպես մի

նոր և բարի վկայություն հայ և ռումին ժողովուրդների, մշակույթների և եկեղեցիների համագործակցության, նաև որպես մի նպաստ ժողովուրդների բարեկամության և աշխարհի խաղաղության ամրապնդման:

Երեկոյան ժամը 20-ին հարգելի հյուրերը Երևանի օպերայի և բալետի սկալաբեմական թատրոնում դիտում են Արամ Խաչատրյանի «Սպարտակ» բալետը:

**Մայիսի 22-ին, երկուշաբթի օրը**, առավոտյան ժամը 10.30-ին, ռումին օրթոդոքս եկեղեցու պատվիրակությունը, ուղեկցությամբ տ. Հուսիկ եպիսկոպոսի և տ. Արսեն վարդապետի, այցելում է Խորվիրապի վանք:

**Մայիսի 23-ին, երեքշաբթի օրը**, առավոտյան ժամը 10-ին, Մայր Աթոռի բարձրատիճան հյուրերը, մայրաքաղաքում մի պտույտ կատարելուց հետո, ժամը 13-ին ժամանում են Մայր Աթոռ և մասնավոր տեսակցություն ունենում Հայոց Հայրապետի հետ:

Երեկոյան ժամը 19-ին արժ. տ. Ենե քահանա հոգևոր ճեմարանում իր երկրորդ դասախոսությունն է կարդում ուսանողությանը, «Հայ և ռումին օրթոդոքս եկեղեցիների ծիսական ընդհանրությունները» թեմայի շուրջ, և պատասխանում ներկաներից ոմանց հարցերին: Դասախոսությունն ունկընդրվում է շահեկանությամբ:


Ժամը 21-ին Վեհարանում ռումին եկեղեցու պատվիրակությունը դիտում է «Արբալույս մետոնի օրհնությունը Մայր Աթոռում» (1969 թ.) և «Հայոց Հայրապետը Վատիկանում» (1970 թ.) ֆիլմերը:

Երեկոյան, ընթրիքից հետո, ռումին օրթոդոքս եկեղեցու պատվիրակությունը հրաժեշտ է առնում Հայոց Հայրապետից և հաջորդ առավոտյան վաղ մեկնում դեպի Բուխարեստ:

Երևանի օդանավակայանում Հայոց Հայրապետի թանկագին հյուրերին ճանապարհում են տ. Հուսիկ եպ. Սանթուրյանը, տ. Արսեն վրդ. Բերբերյանը, Հակոբ սրկ. Գյուկչյանը, «Էջմիածին» ամսագրի խմբագիր Ա. Հատիսյանը և միջեկեղեցական հարաբերությունների ընդհանուր քարտուղար Պ. Շահբազյանը:

Էկումենիկ շարժման այս ժամանակահատվածում մի նոր էջ ևս արձանագրվեց հայ և ռումին եկեղեցիների պատմության մեջ՝ ռումին օրթոդոքս եկեղեցու պատվիրակության Մայր Աթոռ ս. Էջմիածին կատարած այցելությանը, Հայոց Հայրապետի հետ նրա ունեցած ջերմ հանդիպումների և սրբուսագին զրույցների միջոցով:





ՈՂԲԱՑՅԱԿ, ԽԱՐՏԻՐՈՍ ՍԱՐՅԱՆ



ՊՐ. 15.458

**ՀԱՆԳԻՍ**  
**Մ Ա Ր Տ Ի Ր Ո Ս Ս Ա Ր Յ Ա Ն Ի**  
(1880—1972)

Գաղարեց սիրտը բարասելուց հայ ժողովրդի տաղանդավոր զավակ, մեր ժամանակի մեծագույն նկարիչ, պետական մրցանակների դափնեկիր, ակադեմիկոս Մարտիրոս Սարյանի:

Մ. Սարյանը ծնվել է 1880 թվականի փետրվարի 28-ին Նոր Նախիջևանում: Նախնական կրթությունը իր ծննդավայրում ստանալուց հետո, պատանի Մարտիրոսը մեկնում է Մոսկվա և փայլուն հաջողությամբ ավարտում տեղի գեղանկարչության և բանդակագործության ակադեմիան:

Սարյանի արվեստի սկունքները սկիզբ են առնում բազմադարյան արվեստ, բնության ինքնատիպ գեղեցկություն ունեցող իր հարազատ Հայաստանից, որին այնքան սիրեց, պաշտեց և իր ողջ իմացականն ու հոգեկանը նվիրեց մեծ արվեստագետը:

Մ. Սարյանն իր կախարդական վրձնով դարձավ հայ արվեստի երկնակամարի ամենաշողջողուն աստղերից մեկը:

Վարպետի արվեստը, խոր ազգային լինելով հանդերձ, նաև համամարդկային է և սահմաններ չունի: Նրա գույները առանձնահատուկ են, արտասովոր, և դրանով իսկ նա ունի չափազանց յուրահատուկ ոճ, որը միայն իրենն է՝ սարյանական: Ահա սրա մեջ է Սարյանի մեծությունն ու ժողովրդայնությունը:

Մարտիրոս Սարյանը եղել է նաև մեծ հայրենասեր: 20-րդ դարի սկզբին երբ հայ ժողովուրդը մեծ ողբերգություն էր ապրում Արևմտյան Հայաստանում, ամաչացել էին մեր քաղաքներն ու գյուղերը, նկարիչը թողնում է անձնական բարօրությունը և ընտանիքով բնակություն հաստատում երբեմնի ողբի ու որբի երկրի մայրաքաղաք Երևանում, սիրով կապվում իր տառապած


ժողովրդին ու կիսավեր երկրին, իր հրաշալի արվեստը ներդնում հարազատ ժողովրդի վերածնության գործին:


Մ. Սարյանը խորապես ապրում է հայ ժողովրդի դարասկզբի ողբերգությունը և, չնայած իր ստեղծագործությունների մեջ այդ թեմային մասնավոր կերպով չի անդրադարձել, սակայն միշտ խոստովանել է, որ ամեն մի հայի նկարելիս նրա դեմքից թախծի մի երանգ է անցկացրել, վշտի մի կաթիլ ծորացրել և դրանով նման կերպարների մեջ շարունակ արտահայտել է իր հոգեկան ապրումները:

Մ. Սարյանը ոչ միայն ստեղծագործել է, այլև ուսուցանել. անցրել է նկարիչների մի մեծ սերունդ, որը մեծ հաջողությունների է հասել կերպարվեստի բնագավառում և անսահման երախտագիտությամբ է լցված Վարպետի հիշատակի ստաջ:

Մարտիրոս Սարյանը մեծ գիտակ էր արվեստի պատմության: Նրա բնատուր տաղանդը, երկար տարիների աշխատասիրությունը հնարավորություն էին ընձեռել նրան ուսումնասիրելու հին աշխարհի ժողովուրդների մշակույթից սկսած մինչև ժամանակակից քաղաքակիրթ ազգերի արվեստը, և բոլորովին էլ պատահական չէ, որ իր կրտավներում նա արտահայտել է մարդկային հոգու գեղեցկության առաջընթացի ալֆան և օմեգան: Թերևս այդ էր պատճառը, որ Վարպետը որևէ դարի որևէ արվեստագետի բնորոշելիս ուներ իր սեփական և բնորոշող գնահատականը: Այս տեսակետից էլ Սարյան—արվեստագետը անհատականություն էր:

Մարտիրոս Սարյանը խոսքի մեջ ևս արվեստագետ էր: Նրա լեզուն և ոճը մտածության գեղեցիկ քանդակներ էին:





Վեհափառ Հայրապետը, տ. Ծնորհք պատրիարքը և Մարտիրոս Սարյանը այլ հյուրերի հետ Մայր Աթոռում

Հանգուցյալը մեծ բարեկամն էր Հայոց Հայրապետի և Մայր Աթոռ ս. Էջմիածնի: Նա երկար տարիներ եղել է Մայր Աթոռին առընթեր ճարտարապետների հանձնաժողովի պատվավոր նախագահը: Մարտիրոս Սարյանը հաճախ խորունկ հուզումով Մայր տաճարի մեջ ներկա էր լինում սուրբ պատարագին, հաիշտակված լսում եկեղեցական երաժշտություն, Վեհարանում ընդունելության սեղանների շուրջ, Հայոց Հայրապետի կողքին իր համակրելի ներկայությամբ և հայրենասիրական ելույթներով խանդավառում և խանդավառվում էր:

Մարտիրոս Սարյանի մահվան տխուր առիթով Հայոց Հայրապետը խորունկ վշտով բաժանում է հայ ժողովրդի մեծ կորուստը հանգուցյալի վշտակիր կնոջ՝ տիկին Լուսիկ Աղայանին, և հարազատներին գրած ցավակցական կոնդակով, որը տպագրվել է «Էջմիածին» ամսագրի սույն համարում (էջ 3):

Հանգի ստ հայ ժողովրդի տաղանդավոր զավակ, մեր ժամանակի մեծագույն գեղարիչ Մարտիրոս Սարյանի ոսկորներին և լույս ու օրհնություն՝ նրա պաշտառ հիշատակին:





ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏ (Գործ՝ Մարտիրոս Սարյանի)



Եվ այս տխուր տարիներին պատկվել...  
թող լինի մեր պատկը ավելի խորհրդավոր,  
առանց թեթև ուրախության:

Ես անվերջ սիրում եմ իմ հայրենիքը, իմ  
մարտիրոս ազգը, իմ հայրենիքի սիրտը՝  
Էջմիածինը: Ծառ խորն է մտել մեր սրտերի  
մեջ, հայր սուրբ, ձեր անկեղծ խոսքերը.

«Ես ձեզ պիտի պատկեմ Հոփսիսիստում,  
դուք պետք է լինեք իմ ժողովուրդը». այն-  
քան մոտ երևացին մեզ Լուսիկի հետ այդ  
խոսքերը, որոնք դուք զգալով ասացիք,  
երևի ուրիշին դուք չէիք ասի այդ բանը:

Հայր սուրբ, ես գիտեմ, որ դուք շատ եք  
զբաղված, և դա կարող է ձեզանից առան-  
ձին ժամանակ խլել, խնդրում եմ չի բաշվե-

լով գրեցեք, արդյոք կարո՞ղ եմք Լուսիկի  
հետ գալ ձեզ մոտ Զատիկի շաբաթներին:

Լուսիկը շատ-շատ բարևում է ձեզ և Սու-  
րենյանցին:


Ձեզ անկեղծորեն սիրող՝


ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐՅԱՆ

Հասցե՝

Թբիլիսի, Կիրպիչևի նրբանցք,  
տուն № 13, Արտյունովի բնակարան,  
Մ. Ս. Սարյանին

1916, մարտի 28





Մ Ա Յ Ր Ա Թ Ո Ռ Ո Ւ Մ

**Մայիսի 1-ին, երկուշաբթի.**—Այսօր Դամակոսից ուխտավորաբար Մայր Աթոռ է ժամանում տ. Մաշտոց քին. Թյուֆենկյանը:

\*  
\* \*

**Մայիսի 7-ին, կիրակի.**—Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Նշան քին. Բեյերյանը:

Ս. պատարագին ներկա է լինում Վեհափառ Հայրապետը:

\*  
\* \*

**Մայիսի 10-ին, չորեքշաբթի.**—Այսօր, երեկոյան, Վեհարանում տեղի է ունենում Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստը՝ նախագահությամբ Վեհափառ Հայրապետի:

Նիստին ներկա է լինում նաև ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող, Մելքունի և շրջակայքի հայոց հոգևոր հովիվ տ. Ոսկան ծ. վրդ. Գալբակյանը, որը և տեղեկություններ է հաղորդում իր համայնքի եկեղեցական, մշակութային և ազգային կյանքի մասին:

\*  
\* \*

**Մայիսի 11-ին, հինգշաբթի.**—Համբարձումն Զրիստոսի.

Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Հովհաննես քին. Մարությանը և ս. պատարագի ավարտին քարոզում «Ամբարձեալ զձեռս իր օրհնեաց զնոսա... եւ վերանայր լերկինս: Եւ անցա երկիրպագեալ նմա՝ դարձան լերուսաղէմ ուրախութեամբ մեծաւ» (Ղուկ. ԻԿ 50—52) բնաբանով:

Քարոզից հետո Իջման ս. սեղանի առաջ, Վեհափառ Հայրապետի հանդիսարություններ, կատարվում է հայրապետական մարդանք՝ ի «յիշատակ փոխադրութեան Հայրապետական Աթոռոյն հայոց ի Սոյ ի ս. Էջմիածին, յամի Տեառն 1441»:

\*  
\* \*

**Մայիսի 12-ին, ուրբաթ.**—Այսօր Մայր Աթոռ է ժամանում Լոնդոնի ս. Սարգիս եկեղեցու նախկին հոգևոր հովիվ տ. Արսեն վրդ. Բերբերյանը:

Մայր տաճարում իր ուխտն ու աղոթքը կատարելուց հետո տ. Արսեն վարդապետը ներկայանում է Վեհափառ Հայրապետին:

\*  
\* \*

**Մայիսի 14-ին, կիրակի.**—Երկրորդ Ծաղկազարդ.

Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Ոսկան ծ. վրդ. Գալբակյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Ձի ամենայն տուրք բարիք եւ ամենայն պարգեւք կատարեալք ի վերուստ են իջեալ առ ի քէն» բնաբանով:

Ս. պատարագին ներկա է լինում Վեհափառ Հայրապետը:

Այսօրվա հանդիսավոր ս. պատարագին ներկա են լինում նաև ուխտավորաբար ս. Էջմիածին ժամանած պոլսահայ հիսուն ուխտավորներ, որոնք Մայր տաճարում երկուրդած քարեպաշտությամբ կատարում են իրենց ուխտն ու աղոթքը:

Հավարտ ս. պատարագի Վեհափառ Հայրապետը Վեհարանում ընդունում է այցելությունը պոլսահայ ուխտավորների:

Հանուն ուխտավորների որդիական երախտագիտության սրտագին խոսք է արում Կարպիս Օղույանը.

«Վեհափառ Տեր,

Ձեր իսթանպոլսահայ զավակները խոր կարոտով եկած են խնդրելու Ձեր հայրական սուրբ օրհնությունը:

Դարերու ընթացքին մերթ ազգային գոյատևման ծանր մտահոգություններուն, մերթ ալ փրկության ուրախություններուն վկա եղած այս կամարներուն տակ, տիրանալ հայրական Ձեր օրհնություններուն՝ մեզի պիտի ըլլա վերամկրտություն մը կամ

աղբյուր մը՝ ցարդ անձանոթ սրբազան  
ներշնչումներու»:

Իր խոսքի վերջում, հանուն ուխտավորա-  
կան խմբի, Կ. Օղուլյանը Հայոց Հայրապե-  
տին ցանկանում է քաջատղջություն, արև-  
շատություն, երկար և բարձր հովվապետու-  
թյուն՝ ի փառս Մայր Աթոռ ու Էջմիածնի և  
հայ եկեղեցու բարգավաճման:

Պոլսահայ ուխտավորներից Աստղիկ Քեհ-  
յալանը կարդում է մի սրտաբուխ բանաս-  
տեղծություն՝ նվիրված Մայր Աթոռ ու Էջ-  
միածնին և Հայոց Հայրապետին:

«Սուրբ խորանի առջև այսօր ես ծնրադիր  
ուխտավոր,  
Կմաղթեմ, որ լուսավորես դեռ սերունդ-  
ներ բյուրավոր:  
Դու դարավոր, դու ալևոր, կանգուն մնաս  
միշտ հզոր,  
Հրաշափառ խորհուրդ խորին Էջմիածնա  
Մայր Աթոռ»:

Հայոց Հայրապետը, խորապես հուզված  
պոլսահայ ուխտավոր և հավատացյալ Իր  
զավակների արտահայտած սրտագին ու  
անկեղծ զգացմունքներից և սիրուց, օրհնում  
է նրանց, հետաքրքրվում նրանց եկեղեցա-  
կան-համայնքային կյանքով և Իր հայրա-  
պետական օրհնությունն ու ողջույնը հա-  
ղորդում պոլսահայությանը:

Բոլոր ներկաները աջահամբույրով ստա-  
նում են Հայոց Հայրապետի օրհնություննե-  
րը, հոգեպես մխիթարված ու երջանիկ:

\* \* \*

**Մայիսի 22-ին, երկուշաբթի.**—Այսօր հո-  
գեվոր ճեմարանում սկսվում են 1971—1972  
ուսումնական տարվա ամսվերջի բանավոր  
ու գրավոր քննությունները, որոնք կշարու-  
նակվեն մինչև հունիսի 7-ը:

\* \* \*

**Մայիսի 27-ին, շաբաթ.**—Այսօր, երեկո-  
յան, ուխտավորաբար Մայր Աթոռ է ժամա-  
նում Ավստրալիայի և Նոր Զելանդիայի թե-  
մի առաջնորդ տ. Գարեգին եպս. Գազանձ-  
յանը:

Սրբազան հորը Երևանի օդանավակալա-  
նում դիմավորում են Մայր տաճարի լուսա-  
րարապետ տ. Հուսիկ եպս. Սանթրոյանը,  
տ. Ոսկան ծ. վրդ. Գալբակյանը, տ. Մուշեղ  
վրդ. Պետիկյանը, տ. Մամբրե վրդ. Մար-  
գարյանը և Հակոբ սրկ. Խաչատրյանը:

Մայր տաճարում իր աղոթքն ու ուխտը  
կատարելուց հետո տ. Գարեգին եպիսկո-  
պոսը Վեհարանում ներկայանում է Հայոց  
Հայրապետին:

\* \* \*

**Մայիսի 28-ին, կիրակի.**—Յիշատակ Ե-  
դիայի մարգարէին:

Մայր տաճարում ու պատարագ է մատու-  
ցում տ. Աղան վրդ. Բալիոզյանը և «Հայր  
մեր»-ից առաջ քարոզում «Քանգի յոժ գո-  
րատր են աղօթք արդարոյ յօգնականութիւն»  
(Յակոբ. Ե 16) բնաբանով:

Ս. պատարագին ներկա է լինում Վեհա-  
փառ Հայրապետը:

\* \* \*

**Մայիսի 29-ին, երկուշաբթի.**—Տօն սրբ-  
բոց կուսանացն Հռիփսիմեանց:

Այսօր տեղի է ունենում «եկեղեցական  
հանդէս ի վանս արքունոյ կուսին Հռիփսիմ-  
եայ»:

Ս. Հռիփսիմե տաճարում ու պատարագ է  
մատուցում ու Հռիփսիմե վանքի վանահայր  
տ. Եղիշէ քնն. Բաղրամյանը և «Հայր  
մեր»-ից առաջ քարոզում ու Հռիփսիմյանց  
կույսերի նահատակության խորհրդի մասին:

Ս. պատարագին ներկա է լինում Մայր  
Աթոռի միաբանությունը, Հոգևոր ճեմարա-  
նի ուսանողությունը՝ գլխավորությամբ տ.  
Հուսիկ եպս. Սանթրոյանի:

Հավարտ ու պատարագի տեղի է ունենում  
հոգեհանգստյան պաշտոն ու Հռիփսիմե  
վանքի բարեարարներ Հյուսիսյան և Մանուկ-  
յան գերդաստանների անջեցյալների հիշա-  
տակին:

\* \* \*

Երեկոյան ժամը 19-ին Վեհարանում գու-  
մարվում է Գերագույն հոգևոր խորհրդի հեր-  
թական հիստը՝ Վեհափառ Հայրապետի  
նախագահությամբ:

Նիստին մասնակցում է նաև ուխտավորա-  
բար Մայր Աթոռում գտնվող Ավստրալիա-  
յի և Նոր Զելանդիայի առաջնորդ տ. Գա-  
րեգին եպս. Գազանձյանը:

\* \* \*

**Մայիսի 30-ին, երեքշաբթի.**—Տօն սրբոց  
կուսանացն Գայիանեաց:

Այսօր տեղի է ունենում «եկեղեցական  
հանդէս ի վանս արքունոյ կուսին Գայիանե-  
եայ»:

Ս. Գայանե տաճարում ու պատարագ է  
մատուցում տ. Նշան քնն. Բեյլերյանը:

Ս. պատարագին ներկա է լինում Մայր  
Աթոռի միաբանությունը, հոգևոր ճեմարա-  
նի ուսանողությունը:





ՌՈՒԲԵՆ ՔԱՀԱՆԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

## ՄԱՐԴՈՒ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԿԵՆՍԱՀԱՍՏԱՏ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ ԱՎԵՏԱՐԱՆԻ ՄԵՋ

«Ես իսկ եմ յարութիւն եւ կեանք...»  
(Յովն. ԺԱ. 25)

Դարեր շարունակ և նույնիսկ հազարամյակներ, մարդկային միտքը, հատուն բանականությունը անընդհատ և անընդմեջ խորհել և փիլիսոփայել է կյանքի և մահվան գաղափարի շուրջը: Անդրշիրիմյան կյանքի ամենապատկերավոր և ճոխ երևակայությունները ունեին դեռևս հին հույները, եգիպտացիները, ասորեստանցիները, հայերը և պարսիկները:

Հեթանոս աշխարհի պատկերացումների մեջ անդրաշխարհային կյանքը բացարձակ շարունակումն էր իրական կյանքի: Փարավոնների շքեղ պալատական կյանքը մահվան պահին կարծեք մի ակնթարթ ընդհատվում էր և ապա շարունակվում նույն շքեղությամբ, ոսկե կառքերի և ձիասարքերի սուկայությամբ, նավերով ճամփորդությամբ և իրական երկրային կյանքի ամենահարմար կահավորմամբ: Այդ եւս վկայում փարավոնների դամբարաններից հանված բազմաթիվ նյութական մշակույթի իրերէն ապացույցները:

Այդպես էր և հին հայկական նախաքրիստոնեական պատկերացումների մեջ: Հայերը նույնպես թագավորների և իշխանների հետ թաղում էին կառքեր, ասորյա գործածական կարևոր կենցաղային իրեր, զենք, զրահ և նույնիսկ արցունքի սրվակներ, լի արցունքով ի նշան հարգանքի և սիրո ստ թագավորը կամ իշխանը, որը այն աշխարհում պիտի գնահատեր իրենց:

Հին հրեաները նույնպես հավատում էին մեռելների հարությանը, բայց այդ նրանց

մոտ դեռ որոշակի չէր, տարտամ պատկերացումներից այն կողմ չէր անցնում:

Չարի և բարու անդրշիրիմյան թագավորությունների մասին որոշակի պատկերացումներ ունեին նախաքրիստոնեական շրջանի բոլոր կրոնները: Դրանցից «Զրուանի» և «Արհմնի» դասական քննադատության ենք հանդիպում եզնիկի հոշակավոր «Եղծ ադանդոց»-ում:

Քրիստոնեության հաղթական մուտքը հին աշխարհ եկավ հիմնովին հեղաշրջելու հին և ծերացած հասկացողությունները և հեքիաթանման պատկերացումները մարդու մասին ընդհանրապես:

Քրիստոսի վարդապետության առանցքը կազմեց մարդը իր բազմաբեղուն բարոյ, անչափելի և անսահման կյանքի շտապիլով: Քրիստոնեությունը աշխարհը և իրերը սկսեց չափել և գնահատել մարդով և մարդկանցով:

Քրիստոսը հենց սկզբից իրեն անվանեց «Որդի մարդոյ» ...աշխարհը սկսեց պայմանավորվել մարդով:

Մարդը սկսեց դիտվել բոլորովին մի նոր անկյունից, ընկած, արհամարհված, ճգնված ստրուկի մեջ քրիստոնեությունը տեսավ մարդուն, բոլոր մարդիկ հավասար են անկախ ցեղից, անկախ ազգությունից, սեռից և գույնից»: «...2իք խտիր, ոչ հրէի և ոչ հեթանոսի, ոչ ծառայի և ոչ ազատի, ոչ արուի և ոչ իգի. զի ամենքեան դուք մի էք ի Քրիստոս Յիսուս»:

(Առ գաղատացիս գլ. Գ. 27)

Սա մեծագույն, եւ կասեի, հանճարեղա-

գումն արտահայտությունն է մարդկային հասարակության պատմության մեջ քրիստոնեության վաղ արշալույսին ասված: Աշխատանքի հավասարություն... մարդու կյանքը իմաստ ունի աշխատանքով, չպետք է ուտեն նրանք, ովքեր չեն աշխատում. «Թե որ ոչն կամիցի Կործել՝ և կերիցէ մի՛» (Առ թեսաղ. Գ 11).

«Եւ ոչ ձի գործք հաց կերաք, այլ ջանիւ եւ վաստակով...» (Բ թեսաղ. Գ 7):

Ահա վաղ միջնադարի ամենահամարձակ և հեղափոխական միտքը:

Քրիստոնեությունը, ինչպես սասցի վերելում, մարդուն դիտում է բոլոր կողմերից, ինչպես մի բազմանկյուն պրիզմա: Մարդու և նրա կյանքի գեամատման, բոլոր հին չափանիշները վերանայված են, հին օրենքը այն աստիճանի լրացված է, որ այն անձնաչելի է արդեն: Մեղքի բոլոր արմատները արմատահան անելու, մեղքի առաջացման, սոցիալական, հոգեբանական, տնտեսական մանրակրկիտ վերլուծություններ կան Ավետարանում:

Քրիստոնեությունը առաջին անգամ ցույց տվեց մեղքից ձերբազատվելու ինքնավերլուծության, ինքնահայեցողության և ինքնաքննադատության մեթոդները և ձևերը: Քրիստոնեությունը առաջին անգամ այնքան բարձր գեամատեց մարդու խիղճը, որը կարծեք չէին տեսնում նախնի շատ փիլիսոփաներ:

Քրիստոնեությունը եկավ զատորոշելու և պարզորոշ դարձնելու դասակարգային հարաբերությունները—Ավետարանի սկզբից մինչև վերջ իրար հակոտնչա կանգնած են մարդկային դասակարգեր իրենց տարբեր հակումներով և հայացքներով: Մի կողմից մեր առջև են դպիրների, սաղուկեցիների, փարիսեցիների և այլ մեծահարուստների հպարտ, ամբոխին վերից նայող, անգործ, փտած, անառողջ և աղավաղված մի կատա մարդիկ, որոնք հասարակ պարզ աշխատավոր մարդուն ունեն համարձակություն ասելու՝ «չուն և անիրա» «Ընտրյալների» մի խումբ, որոնց ազահ աչքերում երևում է նրբանց հոգու ողջ դատարկությունը, իսկ մյուս կողմից մեր առջև են պարզ կյանքի մարդիկ, Այրի կինն ու մաքսավորը, Ջաքեոնն ու պոռնիկ կինը, աղքատ Ղազարոսը և նրա քույրերը և ուրիշ բազմահազար մաքուր, անարատ հոգիներ, որոնք սայթաքում են մեղքի բավիղներում, բայց երբեք չեն կորցնում հավատը Աստուծո և մարդու նրկատմամբ: Սրանք հարստահարվածներն են, ճնշվածները և արհամարհվածները, բայց որոնք ունեն մեծ մարդկային արժանապատվություն, ճշմարտախոս են և առաքինի: Ո՛րտեղ է կանգնած Քրիստոս այս երկու դասերի մեջ, արհամարհված ամբոխի մեջ է նա,

ամբոխի հետ, ամբոխի շահեր պաշտպանող, նրան սիրող և համակրող: Ըստ շատերը ստանց խոր վերլուծության մեղադրել են քրիստոնեությունը որպես պատիվ և չմարտնչող գաղափարախոսություն: Դա բացարձակ անհեթեթություն է: Քրիստոսի ուսմունքը ամենամարտնչող կրոնն է, նա իր ողջ էությունը հակադրվում է ընդդեմ չարիքի, անարդարության, կեղծիքի և ամեն տեսակ ճշմարտությունները խեղաթյուրողների: Բավական է կարդալ Ավետարանի մի շարք գլուխներ (Մատթ. գլ. ԻԲ 34), որպեսզի պարզ դառնա, թե Քրիստոսը ինչպիսի շատաչուն վայեր է կարդում, ստանց ամենափոքր երկյուղի, Իսրայելի այն ժամանակվա ընտրանիի գլխին: Ահա այսպիսի հակասական խայտաբղետ մարդկային տարածքի վրա սկսեց տարածել իր աստվածային ճշմարիտ ուսմունքը մեծ տեսանողն ու վարդապետը, որը այլ բան չէր, քան մարդու փրկագործության ուսմունք նրան հարություն տալու միջոցով:

\* \* \*

Մինչև քրիստոնեությունը մարդու մասվան հասկացողությունը ֆիզիկական մասվան հասկացողությունից այն կողմ չէր անցնում: Կային հատ ու կենտ փիլիսոփաներ, որոնք զգում էին բարոյական մահը, բայց քրիստոնեությունը ամենից շատ և ամենից որոշակի տեսավ մարդու անկումը, մարդու ոչնչացումը և մահը խորը բարոյական ստումով: Կորած մարդկանց հսկայական մի շարան կա Ավետարանում, նրանք մի պահ անհույս են թվում, թվում է, որ մարդկային արժանապատվության ոչ մի ճշույն չկա այլևս նրանց մոտ. «Անառակ որդին» հոր հարստությունը վատնում էր անառակ կանանց հետ շքեղ խնճույքներում, հիշո՛ւմ էր այդ պահերին նա արդյոք, թե խեղճ հայրը ինչպիսի դառը քրտիներով էր աշխատել այդ «դահեկանները», որ հիմա նա շարտում էր իր չորս կողմը, հիմա նա թքել էր ամեն ինչի վրա, նրան ապրել էր պետք, վայելել ամեն գնով կյանքը: Մեր աչքերի առջև առկա է մարդկային անասման էգոիզմը, անտարբեր ցինիկությունը և խղճի բացարձակ քաջակայություն:

Մեռած է բարոյական մարդը, բայց կենդանականը շարունակվում է: Ահա դասական մեռած մարդու օրինակ Ավետարանից:

Վերցնենք մի այլ օրինակ:

Երբ տարի անընդմեջ Մեծ վարդապետի հետ շրջել էր Պետրոսը, լսել, խոսել հետը, հավատարմության և վստահության բոլոր քննությունները հաճճել էր կարծեք նա մի պահ, «Թեպետ և ամենեքին զայթալկեսցին, այլ ես ոչ», (Մարկ. Ժ.Դ 29—30), բայց Մեծ

տեսանողի աչքից չէր վրիպել Պետրոսի փոքրագությունը, երկչոտ վարանումները և նա գուշակում է, «թե դու իսկ յայսմ գիշերի մինչև հառու խօսեալ իցէ երիցս ուրասցիս զիս» (Մարկ. գլ. ԺԴ. 30):

Եվ ահա կանգնած է Պետրոսը տանարի դռանը, ցուրտ է, ոսկորները սառչում են, ծառաները կրակ են վառել, ինքն էլ ակամայից մոտեցել է կրակին և տաքանում է, ականջին է հասնում ապտակի շառաչյունը, Քրիստոսին են ապտակում, բայց նա խուլ է, չի լսում, մեռած է Պետրոսի հոգին, այն կծկվել է քարի նման, իրեն ինչ, իրեն չեն ապտակում, կրակի մոտ հաճելի է: Աղախիններից մեկը հարցնում է. «Դ՛ո՛ւ էլ Հիսուս Նազովրեցու հետ էիր», «Ես չեմ ճանաչում, ես չգիտեմ այդպիսի մարդու»: Ահավոր պատասխան, ահավոր ուրացում, ինչպե՞ս չկարկամեց Պետրոսի լեզուն... բայց ինչպես պիտի կարկամեր մեռած, բարոյապես ընկած մարդու լեզուն, մարդ, որի խիղճը քար էր:

Քրիստոնեությունը իր առջև ամենամեծ հարցն էր դրել՝ փրկել մարդուն անվերապահ կործանումից, հարություն տալ մեռածներին, ընկածին շարժել տեղից, լքվածին օգնել բարձրանալու, բայց ինչպե՞ս... օգնել նրանց զգալու դեռ չհանգած իրենց խիղճը, ցույց տալ, որ նոքա դեռ պահած ունեն իրենց հոգում մարդկային արժանապատվության նշույլ և այն կարելի է գտնել, հուսադրել ընկածին, խրախուսել ելնողին և որպեսզի նրանք ավելի ցայտուն և որոշ տեսնեն իրենց անկման խորությունը, ցույց տալ նրանց անսահման ներողամտության, անսահման բարության և Մեծ Սիրո օրինակներ, ցնցել բնածներին, **հարության** հույս ներշնչել:

Անատակ որդու մեջ զարթնել էր մարդկայինը, նա որոշում է ապավինել հոր գթասրբտության: Երկուսուտեք մեծ, խոր տառապանք կա. հայրը ամբողջ գիշերներ է լուսացրել, որդու մասին մտածելով, մարդկային այդ մեծ տառապանքի միջից ծնվել է անսահման սիրո և մարդկայնության խոր զգացումները—Հոր ներողամտության և սիրո առջև Անատակ որդին սկսում է զզվել իր անմիաստ անցյալ կյանքից և սկսում է նորը, գեղեցիկը, իմաստալիցը և կորածը գտնվում է և **մեռածը հարություն** առնում:

Ահա թե ինչ դեղերով է բուժում հիվանդին քրիստոնեությունը:

Նույնն է պարագան Պետրոսի հարության խնդրում:

Գեներալների գեղեցիկ հայելանման արիին ձուկ են որսում աշակերտները: Օրը պարզ է, և անկրկնելի գեղեցիկ, ձկան առատ որս ունեն, ուրախ են և գոհ, Հիսուսը իրենց հետ է, լուռ ճաշում են, ոչ ոք չի ցանկանում խախ-

տել այդ գեղեցիկ և բազմիմաստ լուսությունը, յուրաքանչյուրը մտորում է յուրովի և հանկարծ այդ աստվածային լուսության միջից լքվում է Տիրոջ խորհրդավոր ձայնը. «Սիմովն Յովնանու, սիրե՛ս զիս...» (Յովն. ԻԱ. 15):

Պետրոսը կախել էր գուլպը, լարվածությունից պայծառ էին ականջի թմբուկները, նա չի կարողանում նայել վարդապետի աչքերին, այս ինչ է, ոգի է, Աստծո պատժող ձեռքը, թե ահեղ դատավոր, միտքը սկսում է փոթորկվել, հիմա ամեն ինչ պարզ է իրեն համար... «Տէր, և դու գիտես՝ զի սիրեմ գրե՞գ...» (Յոհ. ԻԱ. 17):

Արտասանում է բառերը, բայց շրթունքները այրվում են:

Երկրորդ անգամ հնչում է ձայնը վարդապետի, այնքան քնքշանք կա, այնքան ներողամտություն այդ ձայնի մեջ հիմա, «Սիմովն Յովնանու, սիրե՛ս զիս, ասէ ցնա: Այո Տէր, և դու գիտես՝ զի սիրեմ զքե՞գ...» (Յովն. ԻԱ. 17):

Եվ ապա երրորդ անգամ, անհիշաչար և անսահման սիրով լեցուն:

«Սիմովն Յովնանու, սիրե՛ս զիս...»:

Տրտմել էր Պետրոսը, արցունքները կախվել էին աչքերից, աչքերի առջևից անցնում էին այն խավար և անհանգիստ գիշերվա տազանապալի պատկերները, մի բուռ քար էր դարձել սիրտը, ամեն ինչից առաջ եկել բազմել էր իր եսը, կուպիտ և վախկոտ եսը, երեք տարվա վարդապետությունից ոչինչ չէր հիշում, դիպկնացած և սառած էր, ոչ թե մարմինը, այլ **հոգին**:

Ու հիմա, երբ թափվում էին արցունքները, տեսնում էր նա ինքն իրեն ավելի քան որոշակի իր հոգու ամբողջ սևությունն ու այլանդակությունը, իր ընկածությունը և իր բարոյական մահը:

Եվ այս բոլորից հետո Տերը իր հետ հավասարի պես այդքան ներողամիտ, զիջող, անհիշաչար հարցնում էր: Սիրտը տվայտում էր, ինքն իր իսկ առջև կանգնած էր այնքան ընկճված, հոգևած և հուսաբեկ և հագիվ շղջում է. «Տէր՝ դու զամենայն գիտես և դու իսկ զամենայն ճանաչես, և եթե սիրեմ զքե՞գ...» (Յովն. գլ. ԻԱ. 17):

Եվ ահա մեր աչքերի առջև, հոգու սրբազան տվայտանքների միջից, ազնիվ տառապանքների միջից ծնվում է նոր մարդը, **հարություն** է առնում մեռածը, գտնվում է կորածը, սրբվում է անմաքուրը և միայն դրա վստահությանը է, որ Քրիստոս վստահում է նրան ասելով. «Արածեա զոչխարս իմ...»: Եվ իսկապես միայն այդ պահից էր, որ Պետրոսը դարձավ վեմ, դարձավ քրիստոնեական այն մեծ վարդապետության վեմն ու անկյունաքարը, որով յաշխարհը լուսավորվեց,

Պետրոսը դարձավ մարտիկ, նահատակ և առաքյալ:

Մենյալ Պետրոսը լսեց Աստծու որդու ձայնը և ապրեց «Յորժամ մեռեալք լսիցեն ձայնի Որդոյն Աստուծոյ և որք լսիցենն, կեցցեն» (Յովհ. Ե 25):

Քրիստոս երբ մտավ Երուսաղեմ, ամբողջ քաղաքը դրդողում էր, փարիսեցիները կըրճտացնում էին ատամները, ամբոյսը վազում էր Հիսուսի հետևից, Օլսասնաններից թնկում էր օղբ և ուլքեր էին Օլսասնա կանչողները, դրանք հարություն առածներն էին՝ Անտաակ որդին և Մաքսավորը, Ջաքետն ու պոռնիկ կինը, հոգով կուրերն ու խուլերը, որոնք հիսուս տեսնում էին և լսում և որոնք ընկած վիճակից ելել կանգնել էին և հարություն առած վազում էին Տիրոջ հետևից—Լույսի հետևից:

Հարությունը մեծ խորհուրդ ունի, նրա մեջ արտացոլված են մարդու վերապրող, մարդու ինքնաճանաչման, ինքնավերլուծության, ինքնավարագնաման և ինքնավերագուման սուրբ զգացումները:

Ավետարանի մեջ մարդու հարության գաղափարախոսությունը կենսահաստատ փիլիսոփայություն է: Մարդու իրական անցնելիք կյանքով է պայմանավորված նրա հարությունը: Մարդու հարությունը կրկնվում է ամեն օր, ամեն ժամ մեր կյանքում, մեր շրջապատում, եթե միայն հեռավոր օրերի հուշով սպասելիք հարության, մեր կյանքը կդառնար շատ միօրինակ, գուցե և անհետաքրքիր, բայց քրիստոնեության վսեմ նրպատակն է, ամեն օր, ամեն ժամ, հավատացյալին մտածել տալ հարության մասին: Հավիտենական կյանքի գաղափարական ըմբռնումն իսկ անպայմանորեն կապված է մեր առօրյա և առունին գործերի հետ, մեր աշխօրվա ապրած կյանքն է, որ պիտի նշի մեր հետագա հոգեկան վիճակը, մեր հոգու անմահությունը պայմանավորված է մեր բարի, ազնիվ, շիտակ և առաքինի կյանքով, մեր վերջին հույսը մեր անցած լիարժեք և օգտակար կյանքի հետևանքն է, իսկ հույսը «ուչ ամաչեցուցանել», գրում է առաքյալը, այսպիսով բարի աշխատանքն է, որ աշխարհը շենացնում է, իմաստնացնում և ցրում խավարը:

Քրիստոնեական հարության ուսմունքը ամենամեծ բարոյակրթիչ խթանն է մարդկային հասարակության և ընդհանրապես քաղաքակրթության:

Ծջմարտության ճանապարհն է այն, որ ստիպում է մարդուն զգալ, հասկանալ նախ իրեն, մարդուն մղում է ինքնատիրապետման և ինքնաճանաչման, մարդը սկսում է թոթափել իրենից սուտն ու կեղծիքը, տգեղն ու անմաքուրը և ձգտում է կատարյալին, գեղեցիկին, ճշմարտին և ազնիվին, ձգտում այն

մեծ իդեալին, որ կոչվում է քրիստոնեական կյանք, որն, ինչպես աասցի, ձեռք է բերվում դառը զոջումով, ինքնամոռաց տառապանքով և ըստ պահանջել հարկին նաև նահատակման ոգով Պետրոսի նման:

Ավետարանական օրինակները մեզ բացարձակ համոզում են մեր վերը առածներին:

Երկնավոր թագավորը անա թե ինչ է ասում արդարներին.

«Եկաք օրհնեալք հօր իմոյ, ժառանգեցէք զպատրաստեալ ձեզ զարքայութիւնն ի սկըզբանէ աշխարհի: Ջի քաղցեալ և ետոք ինձ ոտել, ծարաւեցի և արքուցիք ինձ: Օտար էի՝ և ժողովեցիք զիս, մերկ՝ և զգեցուցիք զիս, հիւանդ էի՝ և տեսէք զիս ի քանտի էի՝ և եկիք առ իս» (Մատթ. ԻԵ 34—35):

Տեք, ասում են նրանք, ե՞րբ տեսանք քեզ այդ վիճակում և ապա գեղեցիկ պատասխանը՝ «Որովհետև արարիք միում յեղբարցոս այսոցիկ փոքրկանց՝ ինձ արարիք» (Մատթ. ԻԵ 40):

Քրիստոնեությունը մարդու կյանքը դիտում է մինչև մահը և մահվանից հետո, ինչպես վերը ասվեց, մահվանից հետո զալիք հոգեկան երանական վիճակը պայմանավորված է մարդու մինչև մահը անցած կյանքով:

Ըստ քրիստոնեական ուսմունքի ուշ չէ ամեն մի զոջում, զոջումով գտնվում է մարդը և արժեքավորվում, ընդ որում քրիստոնեությունը տարբերություններ չի դնում շատ և քիչ բարի անվանումներով մարդկանց, յուրր փրկվածները բարի են հավասարապես: Մեկը իր ամբողջ կյանքը ազնիվ և առաքինի է անցկացրել, բարի և օգտաշատ մի կյանք կա մեր առջև, իսկ մյուսը երբ ունեցել է մի ամբողջ անարդյունք, շվայտ ու ցուփ կյանք, իր կյանքի վերջալույսին դառնապես զոջում է, ափսոսում իր անցած կյանքի համար, վերածնվում է հոգով, տվախտանքի և երկունքի միջից ծնվում է նորը, միթե Քրիստոս կարող է մերժել վերածնվածին, որքան էլ այն ուշ լինի, նրանք երկունս էլ Աստծո առաջ բարի են, անկախ նրանց ծառայությունների չափից, նրանք բարի են և ընդունելի մարդկության խղճի առջև, քանի որ զոջումն ու վերստին ծնունդը տեղի է ունեցել մեր իրական կյանքում, Աստծու և մարդկանց վկայությամբ:

Ահա նման գիտակցությամբ է, որ Մեծ Նարեկացին իր աղոթանկեր Մատչանում շենջում է. «Որ զանտակ որդին մերձեցոյց ի հայրենի ժառանգութիւնն եւ զպոռնիկսն յառաջեցոյց յերկնային արքայութիւնն...» (Բան. ԼԳ 5):

Ամեն մի վերին «Քալարանի» գաղափարախոսություն բացարձակ կեղծիք է, ինքնախաբեություն, ինքնահանգստացում: Չոջումն

ու լացը և այրվող տառապանքը միայն այս կյանքում է ընդունելի և որով միայն անմահության և հավիտենականության հույս կունենանք:

Այսպիսով ոչ մի վերին և ներքին կարգեր չկան, չկան բարի ծառայության ժամկետներ. կան հավիտենականության դասեր սպասող հավասարապես բարի մարդիկ:

Հիշեցեք Ավետարանի այգու մշակներին, որոնց Տերը վարձատրում է հավատարապես, չնայած նրանք տարբեր ժամերի էին եկել աշխատանքի, նրանք բոլորն էլ բարի գործ էին արել և արժանացան հավատար վարձատրության, բայց կան չարերը, որոնք նույնպես սպասում են:

Ավետարանում սքանչելիորեն երկու տողով բոլոր սպասողներին պատասխանված է և այդ պատասխանը սպասիչ է. «Որոց գրարիս գործեալ իցէ՛ ի յարութիւն կենաց, և որոց գշար արարեալ իցէ՛ ի յարութիւն դատաստանաց» (Յովհ. Ե 29):

\* \* \*

Մահվան դեմ հազարամյակներ շարունակ մարդկությունը կռվել է: Կռվել է անէացման, կործանման, ոչնչացման դեմ: Աշխարհի շատ մեծերի մահվան դեմ ունեցած մեծ ընդվզումների արդյունքը եղել է նրանց բեղուն և մեծ ստեղծագործական կյանքը (Բեթհուլեն, Գյոթե, Մոցարտ, Շեքսպիր և Նարեկացի):

«Թե՛պետ վախճան ընկալաց իբր գմահացու, այլ յարակայութեամբ բանի այսր սփերի գրեցայց կենդանի...» (Մատ. ողբերգ. բան 2թ):

Մահվան, փոշիացման դեմ ինչով ասեք չեն կռվել, միայն թե «անմահանան», հիշվեն հեթանոսական փառահեղ դամբարանների և բուրգերի շինարարությունները: Մեծ բռնակալները ստիպել են ստեղծել անմահական ջուրը կամ գտնել այն, ժողովրդական շատ հեքիաթներում տեսնում ենք ձգտումը, ձեռք բերելու անմահական խնձոր, թռչուն, ջուր և այլն: Սրանք ջանքեր են, ճիգեր, որոնք ապարդյուն են անցել դարեր շարունակ, նույնիսկ եղել են բռնակալներ, որոնք մեծ չարիքներ գործելով ուզեցել են՝ անմահանալ: Հիշենք Ներոնին, որը այրեց Հռոմը:

Բայց անհ գալիս է քրիստոնեությունը՝ տալով հավիտենականության բանալին մեզ. «Ես եմ հացն կենդանի, որ լերկնից իջեալ էթէ՛ յոք ուտիցէ ի հացէ յաշմանէ՛ կեցցէ ի յաիտեան» (Յովհ. Ջ 50):

Որն է այդ հացի էությունը, որն է Քրիստոսի ուսմունքի հիմքը: Սերն է, «Սիրեցէք զմիմեանս», քրիստոնեության հավատամքն է այս, սկիզբը և վերջը, մարդը պիտի սիրի իր նմանին, մարդու նկատմամբ ունեցած սիրով է, որ պիտի ճանաչենք Աստծուն և որ-

պեսզի Աստված ապրի մեր մեջ և մենք Աստծու, պիտի սիրենք մարդուն անխտիր: Աստված այնտեղ կա, ուր սեր կա, չկա Աստված, ուր չկա սեր:

Քանի որ Աստված սեր է.  
(Յովհ. առաքել. ի կաթող. 1 թղթ. գլ. Դ 7):

Եվ երբ մեկը որդեգրել է սիրո այս մեծ գաղափարը, նա անվարան կանցնի կյանքի խորդ ու բորդ ուղին:

Պատկերացրեք մարդուն, որի կյանքը համակ սեր է, համակ անմահացորդ նվիրում իր նմաններին, նա լույս է տարածում իր չորս կողմը, հասնում է ընկածին, օգնում է լքվածին, հույս է տալիս և ապաքինում ուրիշի ցավերը, նա չունի անձնական կյանք, նա կարծեք չունի ես, նա ձուլված է համընդհանուրին, նա օրե օր սպասվում է, և որքան սպասվում է, այնքան լույսը շատանում է իր չորս կողմը, իր ցանած բարի սերները ծրում են, և սկսում է մեռնել Ավետարանի հատիկի պես «բնդ միոյ 60 և ընդ միոյ 100» արդյունավորելով և մի՞թե դա մահ է:

Մահվան մահնում մի վերջին պահ առկայծում է իր աչքերի առջև իր ողջ անցած կյանքը, նա գոհ է իրենից, խղճի վրա չկա ոչ մի ծանրություն և բեռ, հոգին թեթև է և մաքուր, հույսը մինչև վերջ չի լքում իրեն, հեշտ է բաժանվել կյանքից, երբ պարտք չունեն և բիժ չունեն հոգուդ վրա, խաղաղ և երջանիկ անդորր մահ է դա, հավատացյալի հոգում մի վերջին պահ շողում է գիտակցությունը, որ ինքը հավիտենականության նախադրանքն է և սկսվում է «նիրվանան»:

Իսկ ոճրագործը, բռնադատիչը, մարդասպանն ու մանկասպանը, գողն ու հափշտակողը, անիրավն ու նենգավորը, մատնիչն ու ուրացողը, վերջին պահին երբ մի պահ զարթնում է խղճի խայթը, սկսվում է ներքին համավոր պայքարը, բզկտվում է հոգին, ահավոր ուժերը ծվատում են սիրտը, ամեն ինչ արյունոտ և սև է երևում նրա աչքերին, նրա հայացքը սարսափ և ահ է արտահայտում, վախն ու անորոշությունը ճգնում են նրան, սմբած է էությունը, ուշացած զղջման վերջին տարտամ ցուանքները չեն օգնում նրան ազատվելու մղձավանջային տեսիլքներից, սկսվում է դաժան հոգեվարքը, դրժոխքի սարսափները և տանջալից մահը:

Ես այս երկու հոգեվանդները նկարագրեցի ցույց տալու համար, թե ուր կարող է տանել մեր վարած առօրյա կյանքը մեզ, երբ այն առաջին դեպքում կանոնավորված է քրիստոնեական ուղիղ և ճշմարիտ վարդապետությամբ և երկրորդ դեպքում, երբ չկա քրիստոնեական ուսմունքի տառն անգամ, երկու դեպքում էլ մարդը հասնում է մահվան, բայց ինչպիսի էական տարբերություն-

ներ կան այդ կյանքերի մեջ, այնպես էլ մահվան և հետմահու հոգեկան հավիտենակամության մեջ:

Եթե նույնիսկ երևույթներին նայենք մեր առօրյա կյանքի չափանիշներով, ապա արդար, առաքինի և ազնիվ մարդու անմահությունը իր իսկ ստեղծած բարիի մեջ է, քանի կա իր բարի գործը և գաղափարը, ինքը հենց այդ բարիից մաս կունենա, և բարձրագույն բարի ոգու հաղթանակի մեջ կհավերժանա հենց այդ ոգու մաս կազմող մարդը:

\* \* \*

Այսպիսով, ինչպես տեսանք, քրիստոնեությունն էլ իր ողջ էությունը պայքարում է մահվան դեմ և ամենից առաջ բարոյական մահվան դեմ, հաստատելով կյանքը և կյանքի օրինաչափությունները մարդու հարությունը:

Կրոնը բնական օրինաչափ զգացում է, դեռևս մեծ ֆիզիոլոգ Պապլովը արտահայտել է այն մեծ և հոյակապ միտքը, որ «Կրոնը բնագո է»: Բնության անբացատրելի մեծ և ահեղ երևույթները, ասում է նա, միլիոնավոր դարեր նախամարդու մեջ առաջացրել են վախ և երկյուղածություն իրենից դուրս գտնվող ուժերի նկատմամբ և միլիոնավոր դարերի ընթացքում այն դարձել է մարդու բնագոյը:

Հետևաբար ամեն մի ծնվող երեխայի մոտ անկախ նրա ստանալիք դաստիարակությունից կա կրոնական նախնական բնական զգացումներ, որոնց մեծք տալիս ենք որոշակի և կոնկրետ ուղղություն, տվյալ դեպքում քրիստոնեական:

Հարության գաղափարախոսությունն էլ լինելով կրոնական, հետևաբար և՛ բնական է, և՛ օրինաչափ: Մենք ամեն տարի գարնան և ձմռան օրերին տեսնում ենք, թե ինչպես մեռնում է բնությունը և զարթնում է գարնան ավետարեր շնչով, ուր կա մահ, կա և հարություն: Հարությանը հաստատվում է կյանքը:

Եթե չլիներ հարությունը, կյանքը կմահանար և կգար ամեն ինչի վերջը, բայց հարությունը կյանքի զարկերակն է: Մարդկանց, ազգերի և ժողովուրդների համառ հարատևությունն էլ հենց հարության գաղափարին նրանց հավատալու լավագույն իրողությունն է և հետևանքը:

Քրիստոսի հարությունը շարժիչ զարկերակն է մարդ անհատի, ինչպես և ազգերի կյանքում:

Հայ ժողովուրդը շատ վաղուց հավատաց հարության կենսաբեր ուժին, քանի-քանի անգամներ անագորույն թշնամիք մահվան դուռը հացքրին մեզ, ուզեցին մեր ոգին սպանել, ուզեցին մեր տոհմիկությունը ա-

ղարտել, մեր պայծառ երազները մեռցնել և, ամենակարևորը, ցանկացան, որ մենք չունենանք հարության հույս:

Հայերեն խոսող լեզուները կտրվեցին, Արեգակը խավարեց այրվող մագաղաթների ծխից, Ալփ-Ալվանը արյան լոգանք էր ընդունում Հայաստանում, բայց հարության անուզայթը չէր լքում մեզ: Մեռելների մեջ սկսեցին մեզ փնտրել, բայց հուժկու մի ձայն երկրներից, թե երկրի ընդերքից, ժայթքող հրաբուխների միջից, ծփացող Վանա անհանգիստ ծովակից, թե Սույաց անտառից ոլորդեցնում էր օդը. «Չէ աստ այլ յարեա»:

Նախահրները, ոճիրները ամենաանմարդկային շարչարանքները և լլկումները, չաղարտեցին մեր հոգու բարությունը, զարմանալիորեն մենք այդ բոլորից հետո երբեք չար և մարդատյաց չդարձանք, որքան շատացան մեր տառապանքները և վերքերը, մենք այնքան շատ սիրեցինք մարդկանց, ազգերին և ժողովուրդներին, անչար և բարի էր մեր հոգին և որպես կենդանի մի անհատակ կանգնեցինք արևելքի և արևմուտքի քառուղիներում միշտ քաղաքակրթության դրոշը ձեռքներին, անկյուն, հպարտ և անկոտրում: Մեզ քանի անգամ ուզեցին դուրս շարտել մեր իսկ հոգու տաճարից, բայց մենք համառ էինք և անկյուն և մեր պատասխանը եղավ. «Չենք դուրս գա տաճարից, չենք ուրանա Հիսուսին» (Սալաթ-Նովայի վերջին խոսքերը):

Եվ նորից այնգարդ գրիչը դողողոջ ձեռքերով շարունակեց իր մագաղաթյա հնօրյա տարեգրությունը, նորած Անվո Մայր տաճարում, ուրախ անդաստանի երգն էր թեվածում, նորից հերկվում էր սևահողը, իսկ Դվինում օրվա զարմացք խոսքն այն էր, որ Սոնա անունով հարսը երեք արու գավակ էր ծնել միանգամից, Ծողակաթ ս. Էջմիածնից հրաշք զանգերը ավետում էին անընդմեջ, հայոց աշխարհին հանուր. հարյալ Քրիստոս, հարյալ ի մեռելոց:

— Մեր հինավուրց ժողովուրդը մի բուռ հողի մեջ աշխատանքով և տառապանքով այնքան հարուստ և ամենից շատ թանկ արյունով, հարություն առած, մեռնել-ապրելու փիլիսոփայությանը զինված, կերտում է և պիտի կերտի իր նորոգ կյանքը: Հանեցեք այդ անհատակ, բայց հերոս ժողովրդի հոգու միջից ապրելու և միշտ և մշտանորոգ ամեն րոպե, ամեն օր ու տարի հարություն առնելու մեծ հավատքը, նա կցամաքի, կհատնի և կմեռնի, ուրեմն կեցցե Քրիստոսի կենսաևորոգ հարությունը, մեզ ուժ և ավիշ տվող կենսաևորոգ ավյունը, խինդը, հույսը: Կեցցե մարդու վերանորոգման, վերահաստատման և ինքնահաստատման ամենամեծ գրավականն ու հույսը՝ Քրիստոսի ս. Ավետարանը:

**ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ  
ԳՐԱԿԱՆ-ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ  
ՄԱՅՐ ԱԹՈՒԻ ՏՊԱՐԱՆԸ\***

Բ

Քրիստոնեությունը Հայաստան մուտք գործելուց հետո, հայի միտքը լուսավորողը, հայության մեջ գրագիտություն տարածողը և խավարի մեջ լուսատու նրազ հանդիսացողը վանքերն են եղել իրենց վանականներով ու վանական դպրոցներով: Հայ ժողովրդի թե՛ կաթողիկոսներն ու առաջնորդները, թե՛ պատմագիրներն ու վարդապետները, վանքերում սնված ու մեծացած հոգևորականներ են եղել և կամ թե նույն այդ վանական դպրոցներում իրենց կրթությունն ստացած աշխարհական անձինք: Դարերից ի վեր վանքերը միմի դպրոց են եղել, որոնք մրցել են միմյանց հետ իրենց մեջ ծաղկեցրած գիտություններով ու արվեստներով:

Սակայն մեր ազգի պատմության վրա մի ակնարկ ձգելը բավական է, հասկանալու համար, թե քաղաքական իշխանությունը կորցնելուց հետո ԺԴ դարից սկսած, բռնությունն ու սրածությունը ինչպիսի ավեր են գործել Հայաստանում և ժողովուրդը մոնղոլական հրոսակների ձեռքից ինչպիսի նեղություններ ու տանջանքներ է քաշել: Բարգավաճ քաղաքների հետ հետզհետե ավերվում և ամալանում էին նաև գրագիտություն տարածող վանքերը: Բռնության երեսից վանականները թողնում էին վանքերը և ապաստանում այլ տեղ, վանքերի ունեցած-չունեցածը, գույքը, տրանց հետ և ձեռագրերը, հափշտակվում և անհետ կորստյան էին մատնվում:

Վանքերի ավերվելովը՝ պակասում էին բնականաբար ձեռագիր ստանաներ պատրաստող ձեռքերը, իսկ ձեռագիրներն էլ, մյուս կողմից ժամանակի ընթացքում հնանում էին ու մաշվում: Ձեռագիրներն արտագրողներն էլ տեսնելով, որ իրենց աշխատանքը չի վարձատրվում ինչպես որ սկեսքն է, հոգեպես թուլանում էին և դրանց թիվն էլ հետզհետե պակասում էր, իսկ այդ տեսակ արվեստագետների պակասելովը՝ ձեռագիրների արժեքն էլ բարձրանում և ժողովրդի համար անմատչելի էր դառնում: Չհայած այդ ծանր պայմաններին, եկեղեցիների բարեգարդության և աստվածային պաշտամունքի անթերի կատարման համար թե՛ եկեղեցական և թե՛ վարդապետական գրքերի կարևորությունը շատ մեծ է՝ եղել, ուստի աստվածային պաշտամունքը յուր բարձրության և վեհության վերա պահելը դառնում է մի գլխավոր անհրաժեշտություն տպագրական արվեստի տպագրության և տարածման համար: Ինչպես որ Գյուտտենբերգի միակ ցանկությունն էր, որքան կարելի է արագ կերպով տարածել Աստուծո խոսքը ժողովրդի մեջ, այնպես էլ նույն այդ գաղափարն է գերակշռում նաև հայերի մեջ և ժողովրդի համար առաջին անգամ տպագրվում են Սաղմոսն ու Տոմարը: Հասկանալի է, թե ինչո՞ւ Էջմիածնի կաթողիկոսների աչքից չի վրիպում Եվրոպայում սկսված ու արագությամբ ընդարձակ ծավալ ստացող տպագրությունը:

\* Ծարունակված «Էջմիածին» ամսագրի 1972 թվականի № 7-ից:



Էջեր Ագաթանգեղոսի առաջին տպագրությունից (1709 թ., Կ. Պոլիս)

Գ.

Տպագրության արվեստի մասին հայ կաթողիկոսները առաջին տեղեկությունները ստանում են առևտրական գործերով Եվրոպայի զանազան քաղաքներում բնակություն հաստատած հայ վաճառականների միջոցով:

Քաղաքական իշխանությունը կորցնելուց հետո հայը սկսել էր Եվրոպա գաղթել: Այդ գաղթն ավելի ընդարձակ ծավալ է ստանում երկրի անապահով դրության պատճառով: ԺԱ դարից սկսվում են սելջուկների արշավանքները Հայաստան, որոնց հետևում են մոնղոլ և թաթար ցեղերի ասպատակությունները:

Այսպիսի ծանր վիճակից ազատվելու համար հայը թողել էր տուն ու տեղ և հեռանալով հայրենիքից՝ պանդխտության է դիմել, բայց յուր սիրտն ու հոգին մայրենի հողից չի կտրել, նրա ուշքն ու միտքը միշտ էլ դեպի հայրենիքն

է եղև ուղղված: Հայր աշխատել է օտար երկրից անգամ ծառայել ու օգտակար լինել յոր հայրենիքին: Պարզ է, որ Եվրոպայի քաղաքներում յուր մասնավոր գործերով շրջող սրտացավ հայը, տեսնելով տպագրական արվեստի առաջ բերած լուսավորությունն ու առաջադիմությունը իբրև ճշմարիտ գաղթական չարատանջ հայ ժողովրդի, պետք է աշխատեր նույն լուսավորության պտուղները մայրենի երկիր տեղափոխել:

Ահա թե ինչն է պատճառը, որ Եվրոպայի զանազան քաղաքներում բնակություն հաստատած հայի աչքից վրիպել չէր կարող տպագրության գյուտի արվեստը, որի մասին և անմիջապես հաղորդում են ժամանակակից կաթողիկոսներին:

Հայ հոգևորականության համար կյանքի խնդիր է դառնում ըստ կարելվույն օգտվել տպագրության գյուտից և ծառայեցնել այն հօգուտ ժողովրդի: Որչափ էլ որ այդ արվեստը յուր տված արդյունքով հրապուրիչ էր ու ցանկալի հայ կաթողիկոսների համար, նույնչափ էլ նրանց համար առայժմ մայրենի հողի վերա այդ արվեստը հաստատելու անհնարավորությունը ըմբռնելի էր: Եթե աչքի առաջ ունենաք, թե որչափ դժվար է նույնիսկ այժմ տպարան հիմնելը և պահելը, դորա անհնարավորությունը հասկանալի կդառնա այն ժամանակի համար, երբ արվեստն անկատար էր, ամեն նյութ թանկ էր ու բազմաթիվ խոչընդոտներ կային տպարան բաց անելու համար: Հարկավոր էին կարող, ձեռներեց, ճարտար, հանճարեղ ու տոկուն անձինք, որոնց միջոցով կարելի լիներ Եվրոպայում տպարան բաց անել և գյուտի արդյունքը հայրենիքին ընծայել, մինչև որ հայրենիքում իրերի դրությունը կփոխվեր և տպարան հաստատելը այնտեղ հնարավոր կդառնար\*:

Տպագրության արվեստը Գերմանիայից անմիջապես տարածվում է շրջակա երկրների մեջ և ամենից առաջ հաստատվում է Վենետիկում: Վերջինս արևելքի և արևմուտքի համար Միջերկրական ծովի ամենանշանավոր առևտրական կենտրոններից մեկն էր: Ուստի և յուր դիրքի և քաղաքականապես խաղաղ կյանքի շնորհիվ ավելի շփում ուներ բոլոր երկրների և ազգերի հետ: Այդ է պատճառը, որ ամենից շուտ Վենետիկում ծաղկեց տպագրության արվեստը: Տպագրության գյուտից սկսած մինչև ԺԵ դարի վերջը Վենետիկում այնքան էին բազմացել տպագրիչները, որ նրանց թիվը բավական շատ էր, նրանց մեջ եվրոպական բոլոր ազգերն էլ իրենց ներկայացուցիչներն ունեին:

Այդ պատճառով, երբ վաճառական հայն էլ է կամենում տպագրությամբ յուր ազգին ծառայություն մատուցանել, նա էլ է գերադասում Վենետիկ դիմելը, քան մի ուրիշ տեղ:

\* Աղեքսանդր Երիցյանը յուր՝ «Պատմական տեսություն հայ տպագրության» աշխատության մեջ այդ առթիվ հետևյալ խորհրդածություններն է անում. «Տպագրության գյուտը որքան մեծ է և օգտակար, այնուամենայնիվ եվրոպական ազգությանց շատերի մեջ մուտ գործելիս մեծ հաղածման և ընդդիմության է հանդիպած, մասնավոր հոգևորականության կողմից: Մեր մեջ, ինչպես հետո կտեսնենք, բոլորովին հակառակն է եղած: Գեոնես ԺՋ դարում հայ տպագրության առաջին փորձերը Եվրոպայում մեծ համակրություն են գտնում Էջմիածնա հոգևորականությունից: Կաթողիկոսները, որոնք այդ միջոցներում թշվառության մեջ էին, հանդերձ յուրյանց Աթոռով և Արարատյան աշխարհով, զարմանալի եռանդ են ցույց տալիս հայ տպագրությունը հառաջ մղելու համար և անդադար վարդապետներ են ուղարկում հեռավոր և յուրյանց անձանոք Եվրոպան նոր տառեր ձուլելու, նոր տպարաններ հաստատելու համար և այդպեսով մի փառավոր տեղ է բռնում Էջմիածինը հայ տպագրության պատմության մեջ: (Ընդգծումները մերն են. Տես Աղ. Երիցյան, Պատմական տեսություն հայ տպագրության մինչև ԺԹ դարը, Տիփսիս, էջ 1):



Ներսես Շնորհալի. «Յիսուս Որդի» (1660 թ., Ամասերդաս)

### Դ

Մինչև ժժ դարի կեսը բոլոր բանասերների ընդհանուր կարծիքն այն է եղել, որ ժՁ դարում Միքայել կաթողիկոսի դեսպանությամբ Եվրոպա գնացած Եվդոկիացի Աբգարն է եղել առաջինը, որ 1565 թվին տպագրությունը մտցրել է հայոց մեջ: Դորան վկա էին բերում Աբգարի ձեռքով վեցնետիկում տպագրված **Սաղմոսը**: Սակայն ժժ դարի վերջին բառորդին կատարված հետազոտություններն ու նորանոր գյուտերը փոխել են տալիս այդ կարծիքը և հայկական տպագրության ժամանակը հասցնում են 1512 թվականը: Այս և հաջորդ 1513 թվից մնացել են հինգ հատ գրքեր կրոնական բովանդակությամբ: Այս գրքերի տպագրողն է Հակոբ անունով մեկը, որ իրեն «Մեղապարտ» է կոչում: Գրքերը տպված են վեցնետիկում:

Աչքի առաջ ունենալով այն ժամանակ տպարան հիմնելու դժվար պայմանները և կաթողիկոսյան հարուցած հալածանքները օտարազգիների դեմ, դժվար է ընդունել, որ հենց առաջին անգամ հայ տպարան է գոյություն ունեցել հայ տպարանատերով: Ուստի և առաջին գրքերը տպվել են օտարազգի տպարաններում:

Հայերեն գրքի առաջին տպագրությունից հետո անցնում է 50 տարի, մինչև որ հանդես է գալիս Աբգարը, որից հետո էլ տպագրությունը շարունակվում է ընդհատումներով բավական ժամանակ: Այստեղ պետք է շեշտել հայ առաջին տպագրիչների ցուցադրած եռանդը: Տպագրական գործի հետ կապված այն ժամանակվա բոլոր արգելափակումները հանգամանքներն աչքի առաջ ունենալով, մարդու զարմանք է պատում, երբ կարդում ենք Աբգարի, Հովհաննես Տերզեցու, Հովհաննես Անկյուրացու, Մատթեոս Ծարեցու, Կարապետ Ադրիանացու, Ոսկան վարդապետի և այլ անձանց պատմությունները, նրանց եռանդուն գործունեության մասին: Նրանք մեծ հոգու տեր անձինք լինելով՝

կանգ չէին առնում ոչ մի նյութական զոհաբերության առաջ, իրենց նպատակին հասնելու համար: Եվ այսօր մարդկանց զարմացնել կարող են նրանց չանքերի շնորհիվ եղած տպագրությունները, որոնք արվեստի ճաշակի ու գեղեցկության կողմից իրենց ժամանակվա համար կատարելություն են ներկայացնում: Նոցա գործունեության գունավոր նկարագրություններ գտնվում են իրենց ձեռքով տպած գրքերի հիշատակարաններում:

Կարապետ վարդապետ Ադրիանացին՝ 1661 թվին Ամստերդամում, յուր տպագրած Սաղմոսի հիշատակարանում գրում է. «...Յիշեսչիք ...նախ գԾաբեցի Մատթեոս սարկաւազն, որ հանգուցեալ է առ Աստուած, որ էր նօտար Փիլիպպոսի ճգնազգեաց կաթողիկոսի ...որ բազում ջանիք և երկամբք քանդակել էտ և նորակերտեաց զազնի և զպատուական գիրս...»\*:

Թովմա եպիսկոպոս Վանանդեցին 1696 թվին Ամստերդամում տպագրած Թովմա Քենփացու «Յաղագս համահետևմանն Քրիստոսի» գրքի հիշատակարանում ասում է. «Ուստի ես հէքս և ողբոց բազմաց ստորակայեալս, անճաշակ և անհպաւոր այնքանեաց բազմունակ և ամենալի երախանաց և արտաքսեալ չերամաց, և ի դասուց որդոց առագաստի՝ Թօմաս եպիսկոպոս... զքաղցրաճաշակ Գիրս Թօմասու Քենփացույ տպագրել յիմում Գործարանում գոր յարմարեցի և կազմեցի վշտօք անթուելեօք: Այլև՝ ծախս նոցունց՝ յիմոց ընչից»<sup>3</sup> և այլն:

Փրկչական 1709 թվին Կ. Պոլսում տպված Ագաթանգեղոսի պատմության հիշատակարանում կարդում ենք. «...Իսկ ես յամենից նուաստ, վիրաւորեալս մեղօք Գրիգոր դպրիս... մեծա փափագանօք, երկամբք և տաժանելի աշխատանօք». և այլն:

1785 թվին Էջմիածնի տպարանում տպված Ատենի ժամագրքի հիշատակարանում գրված է. «...Չոր և ըստ յոգնաթախանձ խնդրոյ Քրիստոսասէր և բարեշան Չուղայեցի ի Տէր հանգուցեալ Պօղոսեան մահտեսի Խաչիկ աղային տպագրեցաք, նորակերտ գրովք, և տոկուն թղթովք, խորհրդաւոր պատկերօք և նրբաքանդակ խորանօք, կանոնօք և ծաղկմամբք: Որում գործաւնութեան թէպէտ և յոյով ձախորդութիւնք ընդդիմակայեալք յամեցուցին, այսինքն՝ պակասութիւն հարկաւոր պիտոյիցն ըստ ամին, զորս ի յաղքատ վարոջս ոչ գտանելով, ի հեռուատ դժուարութեամբ առձեռն քերեմք: Նաև յառնակութիւնք կողմանցս յանտիրութենէ, որք և զսուրբ Աթոռս և զմեզ խոտկեն և անհանգիստ առնեն...» և այլն:

Վերոգրյալ մի քանի օրինակներից էլ ընթերցողը կտեսնի, որ հայ տպագրության անձնավեր առաջին այդ մշակները համեստության քողն երեսներին, իրենց տանջալից աշխատանքը աչքի առաջ ունենալով հանդերձ՝ իրենց անվանում են «անարհեստ», «անպիտան», «անիմաստ», «սպերախտ», «անճաշակ» և այլն:

Կաթոլիկ աշխարհի հալածանքների առաջ Էջմիածինը և հայ տպագրիչները թեև չվհատվեցին, բայց ստիպված եղան հայ տպագրությունը երբեմն Ամստերդամ, երբեմն Լիվոնոն, Մարսել, Փարիզ, Վենետիկ, Կ. Պոլիս և այլ բաղաբներ տեղափոխել: Հայրենիքին ծառայելու պատրաստ այդ անձինք համարյա բոլորն էլ մեծամեծ պարտքերի տակ ընկան: Բայց նրանց տոկուն չանքերի շնորհիվ հայկական տպագրությունը չընդհատվեց, այլ շարունակաբար գործեց, մինչև որ ժամանակների ու հանգամանքների փոքր ի շատե

\* Այս և ստորև բերված ընդգծումները մերն են: Ա. Ե. Ա.:

նպաստավոր դառնալովը մայրենի հողի վերա յոր համար նա հիմնավորելու հող գտավ:

Հայկական տպագրության ծաղկման ու զարգացման մասին հոգս են քաշում հետագայում առհասարակ հայոց կաթողիկոսները: Նորա սկզբնական շրջանի պատմության մեջ մեծ դեր են խաղացել Միքայել կաթողիկոսը, Աբգար դպիրը, Հակովբ Ջողապետի կաթողիկոսը, Ոսկան Երևանցի վարդապետը, Կարապետ վարդապետ Ադրիանացին, Վանանդեցի եղբայրները և այլոք, որոնք Եվրոպայում Էջմիածնի անվամբ և օժանդակությամբ տպարաններ հիմնեցին ու պահեցին, իսկ վերջը մեծ դեր է խաղում Միսեոն կաթողիկոսը՝ հենց Էջմիածնում տպարան հիմնելով:

## Ե

Տասներեքից տասնվեցերորդ դարը հայոց պատմության մեջ ծանր ժամանակներից մեկն էր ներկայացնում օսմանցիների հանդես գալով և Կ. Պոլիսին տեղ դառնալովը եվրոպական բոլոր պետությունները խիստ ահաբեկման են ենթարկվում և օր ավոր սպասում էին սուլթան Բայազիտ Բ-ի Եվրոպա արշավելուն: Սակայն տասնչորսերորդ դարի վերջերին Թեմուրլենգի երևալը արևելքում և դեպի Փոքր Ասիա առաջ խաղալը՝ հույս էր ներշնչում եվրոպական պետությանց, թե Թեմուրի հետ դաշն կապելով՝ կարող պիտի լինին Եվրոպային սպառնացող օսմանցիների արշավանքները ոչ միայն կանգնեցնել, այլև նրանց ուժը իսպառ խորտակել: Ուստի և այդ պետությունները աշխատում են օր առաջ դեսպաններ ուղարկել Թեմուրի մոտ և իրենց հպատակությունը ցույց տալ:

Թեմուրլենգը, որը մի անգամ Հայաստանի վերայով արշավել էր մինչև Անգորա, որտեղ 1402 թվին հաղթել էր օսմանցոց և Բայազիտ Ա-ին գերի վերցրել և Սամարղանդ վերադարձել, իրեն այնքան հզոր էր ընդունում ու ճանաչում, որ երբ Իսպանիայի թագավորի դեսպաններին 1403-ին ընդունում է Ռույ Գոնցալես Կլավիխոյի գլխավորությամբ, հարցնում է նորան՝ «Ինչպես է իմ որդին՝ ձեր թագավորը, առո՞ղջ է, նա» և ապա յոր մոտի ազնվականներին դառնալով՝ ասում է. «Տեսեք, այս դեսպաններին ուղարկել է իմ որդին՝ Սպանիայի թագավորը...»\*: Եվ Ասիայի հռչակավոր աշխարհակալը յոր «հայրական» օրհնությունն է ուղարկում նրան, իրեն հնազանդություն ցույց տալու համար:

Չնայած Թեմուրի այս հզորության, նրա դեմ ապստամբում է թաթարների խան Թոխթամիշը և արշավելով՝ գրավում Ատրպատականն ու Վերին Հայաստանը: Բայց երբ լսում է, թե Թեմուրը իրեն դեմ է գալիս, խանը ետ է դառնում ու գնում Թաթարիստան՝ ավերելով գյուղեր ու ավաններ:

«Նա հասավ (Ատրպական) նահանգը, ասում է Կլավիխոն (1403—1406) և գրավեց Թավրիզը ու վերին Հայաստանի բոլոր շրջանները: Ծատ բաղաքներ կողոպտվեցին, շատ բերդեր ավերվեցին և իր բանակները քարուքանդ արին գյուղերը, ինչպես մենք դեսպաններս տեսանք այս մասերում ճանապարհորդելիս, մասնավորապես երբ մենք եկանք Սուրմարի քաղաքը: Նույնը վիճակվեց նաև Միսական շրջանի գլխավոր քաղաքին, ինչպես նաև Հայաստանի մյուս երկրներին»\*\*:

\* Հ. Հակոբյան, Ուղեգրություն, հատ. Ա, Երևան, 1932, էջ 70:

\*\* Նույն տեղում, էջ 124, տես նաև անդ, 109, 110, 134, 135, 139:

Ուրբ.  
 Եւ զքով իւրով : այլ Եւ իշու  
 սակաւ արքարչն : որ այն  
 արն արչաւորչէաց զէրիբ  
 բաւոր Թագաւորութեանս  
 Ազգսնիս : Եւ զաւանդեաց  
 զանձնս թագաւորութեն : Եւ  
 զրեւան յերանկէտն յաւա  
 ի-ր . օարեւալ եղև . Եւ զրո  
 զարեւուստ արդիւնքն օճւա  
 կաւիմ արաւորն Եւ իմարու  
 Հոյն : Եւ յամսեղիս Հրա  
 չակեցաւ անուն երանկէտն  
 Եւրոսէի : Եւ զանձնսն  
 շարժեաց Համբաւ իր իյոթ  
 զարուստ արաւորն : Եւ  
 Հայր աստիկ թագաւորն  
 զպատմուիս զայս զորչւոյ  
 Թագաւորացն երկուսն .  
 յասորոց իմիս : Եւ ասան  
 քնցն ու խախտեալ Եւ զգոճի  
 զեան . որով լուծեալ զարս  
 սրբոցն . Կայս օճուալ լինի  
 քնցն ի յազարաւորչէան . որ  
 զի Ին յանձն ասին զամաւո  
 բուսն . զի բարեխօսուի Կո  
 ճին արժանի շեղուս պա  
 կացն իցին ի քի յիմեանս .  
 որ ուժ քանք յաւեանս  
 յաւեանննց անն :

Պարտուի Եւ զարք երանկէի  
 կամաւոր արքաւորչեւոյն զի  
 Ին . որչւոյ Թագաւորին  
 Հասմայ :

**Ա** Ր Գ Ե Ղ Ա Մ Ի Գ Ե Ի

Քանք լուարուք զպատմուի  
 աննայ որք ու թագաւորին  
 Հասմայ . որ զամ քան ար  
 իսարչիս . Եւ զանուր . Եւ զ  
 պատիւ Թագաւորութեն ար  
 չամարչեաց սքսաստ զա  
 ձս զով քչուրտի ալ սիրուն  
 Ին . զայն իարձեալ որ ի Ին  
 Եւ . որ զանձն ունայնորոյ  
 որ Թորն քանաց զի Եւ իմ  
 քանաւորնցն . զի այլորն  
 իրք

Վարդապետաց սաքաւնն ի ք  
 զի . Եւ յարօն թագաւորու  
 Եւ թէ յամսեղիս լինի .  
 Եւ զանոց զեղեաւոր զբաղ  
 ձաւս . զի միշտ արթնիւք  
 Եւ այ իստեւուն զան . ան  
 ցե իմարուք միտ իւր Եւ ի  
 նեւ լինի . զի լինի իսրչե  
 լով ուր Եւ ի իս իս ի յար  
 Ազգեանս Կար ծանկեաց Ե  
 Ին յան . զի յոր ծամ գայ  
 ցե կեանքն մի Ին . յայն  
 ծամ աս Եւ իմա յայտնեցի  
 քանօք . Եւ եղև պաշտպան  
 արժան զգայարանաց իսրոյ  
 Հակն լով զԻմն ասալին .  
 Ազգեղբորն . Եւ երբորն .  
 զի իգալ Եւ իս ին Եւ անա  
 տեանս պարտաւոր զի իս  
 նալ զգո . Եւ իմայն Եւ . Ե  
 քանայն իս կանն արքայու  
 Եւ ին երկնից . Սազեաց Եւ  
 մարտն իս անապատ իսր  
 Եւ Եւ լուսանն . Եւ իմ Եւ  
 քեւլ Եւ անտեւ իմ իմ զոյ .  
 Հարս Եւ մարտն . զորն օ  
 Եւ ան արքայ երբորն .  
 Օքանս երբորն Եւ իմար  
 սրու . Եւ անիսար Եւ ան  
 արձամարչեայ . զանկար Ե  
 լանն լինի իմն ուր ին  
 զով սրբոցն յարձան ի  
 քանս . Եւ օճ զք կարչե  
 արձանս պիտ զարայս պա  
 մի . զանարիս . որ կր  
 նունն իս ծանկեաց կի  
 թի . անայն մի իսր իստ  
 ասարուք ու լուս Եւ իսր  
 երկն . Եւ օք իսրայիս  
 կոտորին . Եւ իս . Եւ ի  
 իսր իս իս Եւ անար Եւ ան  
 երկն իսր իսր Եւ ան .  
 Եւ իս իմնացն ալ Եւ քան  
 քեւլ Եւ իսրայիս Եւ ան  
 արչեայ Եւ իս իս Եւ ան  
 կան արքայու . Եւ օք  
 զայրն զաւալ . Եւ օք  
 անուր Եւ քանս Եւ անար

Մի էջ «Հարանց վարք»-ից (1641 թ., Նոր Հուլիս)

Պարսկաստանից դեպի Էրզրում-Տրապիզոն, Կ. Պոլիս տանող անապարհի վերա միջին դարերում ամենահարուստ և բազմածողովորդ քաղաքը՝ իրեն անտրական կենտրոն, Ջուլֆան էր, որ նկարագրում են մեծ հիացմունքով բոլոր Եվրոպայի անապարհորդները: Ջոն-Նիուրեի (1578—1581), որ եղել է այնտեղ, ասում է, թե Ջուլֆան ուներ 3000 տուն բնակիչ\* (ըստ Ջոն Բուրթոնայթի—2000 տուն): Սակայն այդ բոլոր հարստությունը ժէ դարի սկզբին ժողովրդի հետ միասին ոչնչանում է:

Կարծեք թե մի տեսակ՝ ավերածությանց մեջ մրցություն էր սկսված մի կողմից Եգիպտոսի սուլթանների\*\*, մյուս կողմից էլ օսմանցիների և պարսից

\* Հ. Հակոբյան, Ուղեգրություն, հատ. Ա, էջ 453, 460. Ճան. 3:  
 \*\* Ուղեգրութ., Ա. հտ., էջ 64:

մեջ, որոնք աշխատում էին մեկը մյուսից ավելի ավերել ու քանդել՝ հակառակորդի ձեռքը ոչինչ չընկնելու համար:

«Թագավորի ուժը կայանում է նրանում,—ասում է Վինչեցո դ'Ալեքսանդրին՝ խոսելով օսմանցիների մասին,—որ նա երկիրը ավերակ է դարձրել թրքական սահմանի վերա՝ ամեն կողմ վեց օրվան ճանապարհ հեռավորությամբ և շրջանում քանդած է բոլոր ամրոցները, որպեսզի զորացնե յուր դիրքը և թուրքերը հակում չունենան գրավելու և պահելու այն»\*:

Մահմեդական իշխանապետների այս թատերաբեմը խելճ Հայաստանն էր, որը հյուժվում էր ու քայքայվում հետզհետե:

Այդ ժամանակի Էջմիածնի կաթողիկոսը Ստեփաննոս Ե Սալմաստեցին էր, որ շատ զարգացած ու լեզվագետ մի մարդ էր: Գիտեր նաև լատիներեն լեզուն: Մայր երկրում տիրող բռնություններից խույս տալու համար նա իրեն օգնական կաթողիկոս է ձեռնադրում Միքայել Սեբաստացուն, ու ինքը Եվրոպա անցնում, քաղաքական որոշ նպատակ ունենալով: Նա երկար մնում է Վենետիկում, Հռոմում, անցնում է Գերմանիա, Լեհաստան և վերադառնում հայրենիք: Այդ շրջագայության ժամանակ, թեև յուր նպատակներին չի հասնում, բայց նորա ուշադրությունը գրավում է այն հեղափոխությունը, որ առաջ էր բերել Գյուտտենբերգի գյուտը: Եվ հայրենիք վերադառնալով՝ տպագրության մասին յուր տեսածն ու լսածը անպայման պատմում է Միքայել Սեբաստացուն, պարտք դնելով երևի նորա վրա, որ նա աշխատի հայոց մեջ ևս այդ հրաշալի արվեստը մտցնե ու ընդհանրացնե:

Միքայել կաթողիկոսն էլ կամենալով մի կերպ ազատվել Էջմիածնին շրջապատած թշվառություններից, նեղություններից ու ճնշումներից, իրեն աթոռակից ընտրելով Բարսեղ եպիսկոպոսին ու նորան հանձնելով Էջմիածնի կառավարությունը, 1562 թվին ինքն է անցնում հայրենիք՝ Սեբաստիա, մի քիչ ազատ շունչ քաշելու համար: Ահա այստեղ նա ծանոթանում է եվդոկիացի (թոքասոցի) Աբգար անունով մի մարդու հետ, որ «դպիր» պատվանունն էր կրում: Աբգարը գրչագրության արվեստի մեջ յուր նարպակությամբ շատ նշանավոր էր: Ինչպես պատմում են, ոչ միայն տեսակ-տեսակ գրել գիտեր, այլև ծածկագրություններ էր հնարում, ձախ ձեռքով գրում էր այնպես՝ ինչպես աշուղ և այլն\*\*:

Աբգարի հետ ծանոթանալով՝ Միքայել կաթողիկոսի մեջ միտք է հղանում մի պատգամավորություն ուղարկելու Հռոմ, հայ ժողովրդի համար օգնություն խնդրելու: Պատգամավորության գյուխն էր Աբգար դպիրը, որին միացել էր յուր որդին՝ Սուրթանշահը և Աղեքսանդր անունով մի քահանա: Պատգամավորությունը յուր հետ տանում էր Միքայել կաթողիկոսի հատուկ գիրը Հռոմի Պապ Պիոս Դ-ին հանձնելու համար: Այդ թղթի մեջ կաթողիկոսը ի միջի այլոց խնդրում էր Պապին սիրով ընդունել Աբգարին և Հռոմում ինչ որ տեսնելու արժանի արվեստների հրաշալիքներ կան, ցույց տալ նրան:

Պիոս Պապը հաճությամբ է ընդունում Աբգարին և հայոց եկեղեցուն ավելի մոտիկից ծանոթանալու համար հայոց եկեղեցու դավանությունն է խընդյունում, որը և տալիս է Աբգարը: Պապի և Աբգարի միջև տեղի ունեցած մի տարի տևող բանակցությունները ինչ հետևանք ունեցան՝ հայտնի չէ՝ սակայն Աբգարի Հռոմում մնալը ապարդյուն չի անցնում: Նա օգտվում է հանգամանքից և յուր ուշադրությունն է դարձնում տպագրության գյուտի վերա: Նորա ջանքերով 1565 թվին տպվում է հայերեն Սաղմոսը:

\* Նույն տեղում, էջ 852:

\*\* Աղեք. Երիցյան, Պատմական տեսություն հայ տպագրության, Տիփլիս, էջ 3—4:

Այդ ժամանակ տպագրության իրավունքն ու վերահսկողությունը գտնվում էր կաթողիկոսականության ձեռքում: Այդ պարզապես երևում է Աբգարի տպագրած Սաղմոսի հիշատակարանից: Սաղմոսի վերջը դրված է կարդիանալների և մի եպիսկոպոսի պատկեր, որոնց մեջտեղը բազմած է Պիոս Դ Պապը եռակարգյան խոյը գլխին, Պետրոսի բանալիները ձախ ձեռքին, իսկ աջով օրհնում է հայ նոր գիրը, որ Աբգարը ծունկ չոքած ներկայացնում է Պապին:

Աբգարը տեսնելով, թե պապական կղերի ազդեցությունը որքան ճնշում է իրեն, մյուս կողմից էլ երևի լավ արվեստագետներ չգտնելով, Վենետիկի հասարակապետության պաշտպանությանն է դիմում, կամենալով այնտեղ առաջ տանել հայկական տպագրությունը: Նա ներկայանում է Վենետիկի դուքսին և խնդրում է հովանավորել իրեն և յուր տպագրությունը: Այդ երևում է Աբգարի տպագրած Սաղմոսի մեջ դրված երկրորդ պատկերից, ուր Աբգարը և յուր Սուլթանշահ որդին ներկայանում են Փրիալի Հերոնիմոս Դոմին, հրաման ստանալու Սաղմոսը տպելու համար: Գրքի վերջը հետևյալ հիշատակարանն է դրված.

«...կազմեցաւ սուրբ երգարանս Դատի լաւ և լընտիր արինակէ Գաւնեցոյ վարդապետի... ի թուականիս հայոց ՌԺԷ (1566), մայիս ԺԷ (17) ար, ուրբաթ ԺԲ (12) ժամի... առ ոտս Մելքիսեդէկ եպիսկոպոսին ի մայրաքաղաքն ի Վենետիկ, ընդ հովանեաւ սուրբ Մարկոս անտարանչին ի Հայոց հոգետունն: Ի ժամանակ Սիմովնի ...Յիշեցէք ի մաքրափայլ աղաթս ձեր զաշխատողքս սորայ զառաջինքն և զմիջինքն և զվերջինքն և Աստուած յիշէ զձեզ իւր միս անկամ զարուստն... Ամէն ...ԲԾՀԲ (272) թուխտ է և ամէնն կոխած է, և իսկի գրչի գիր չկայի գիրքս բաւ է»—1565:

Պապական կղերի հարուցած հալածանքների շնորհիվ Աբգարն անցնում է Կ. Պոլիս, որտեղ նա տպում է առաջին անգամ **Քերականութիւնը**, որի համար հետին տարիների Մաղաքիա Ժամանակագիրը այլաբանորեն ասում է.

«Ի Հայրապետութեան Հայոց Տէր Միքայէլի ԻԱ (21) ամի կաթողիկոսութեանն, ի մայրաքաղաքն Կոստանդնուպօլիս, յերկրորդ ամի թագաւորութեանն օսմանցոց Սուլթան Սելիմի և չորրորդ ամի պատրիարքութեան Տէր Յակոբ Ռաբունապետին Կոստանդնուպօլսեցոյ, առ ոտս Յովհաննէս եպիսկոպոսին, ընդ հովանեաւ սուրբ Նիկողայոս եկեղեցոյն Հայոց՝ եղև ստամփա, այսինքն պատմա գիր, և տպեցաւ փոքր Քերականութիւն (Այբբենարան) տղայոց ձեռամբ անարուեստ կնքագիր դպրի և մերս Յոթօրին»:

Այստեղ Աբգարի անվան տեղ «կնքագիր դպիր» է հիշված, գուցե մեր այժմյան տպագիր ասածը այդպես կոչելով: Իսկ Հոթօր է ասած, որովհետև սա Մովսես մարգարեի աներոջ անունն է և ուզում է ասել, թե նորա պես Աբգարն էլ յուր ազգի գլխավորին ճանապարհ ցույց տվեց ազգը հեշտությամբ կառավարելու համար: Հետևյալ տարին տպված գրքի հիշատակարանում ավելի պարզ է ասված.

«ՌԺԷ (1568—69) ի Կոստանդնուպօլիս Նոր ստամփա գիր սահմանեցին, ի հայրապետութեան Տեառն Միքայէլին Էջմիածնի և ի պատրիարքութեան Կոստանդնուպօլսոյ Տէր Յակոբին, ընդ հովանեաւ սուրբ Նիկողայոս եկեղեցոյն, ձեռամբ Խորվիրապցի Առաքեալ արեղային, արհեստագործութեամբ Աբգար դպրին, և իւր թագազարմ Անտոնիոս Սուլթանշահ սարկաւագին, որոյ գրովքն տպեալ Տօնացոյցս յառաջ բերին»:

Բացի Տօնացոյցից հիշվում է նաև, որ Աբգարը և յուր գործակիցը Կ.

Պոլսում տպել են 1568—69 թվականներին Տաղարան, Ժամագիրք, Պատարագամատուց և Մաշտոց»\*:

Դորանից հետո այստեղ էլ կաթողիկ հոգևորականությունը հավաճանք է սկսում հավանականորեն Աբգարի դեմ: Գուցե և այդ է պատճառը, որ Աբգարի տպագրած եկեղեցական գրքերի մեջ պապական կղերի պահանջմամբ հոգուտ կաթողիկոսյան փոփոխություններ են եղել, որպիսի հանգամանքը պարզ է, որ Էջմիածնի մեջ խիստ դժգոհություն պիտի ստաջ բերեր: Արդյո՞ք այդ էր պատճառը, թե այլ հանգամանք, հայտնի չէ, միայն տպարանը այնուհետև դադարում է բոլորովին գործելուց: Կարճ ժամանակից հետո Աբգարն էլ վախճանվում է\*\*:

## Զ

Հայաստանը յուր քաղաքական իշխանությունը կորցնելուց հետո դառնում է մի վայր, դեպի որը իրենց աչքերն են ուղղում Ասիո խորքերից դուրս եկած թուրք-թաթարական ցեղերը: Դրանք արևելքից արևմուտք արշավելուց և որևէ քաղաքակրթությունից զուրկ լինելով, պարզ է, որ բարգավաճ քաղաքներ, ավաններ, գյուղեր պետք է զոհ գնային նրանց ընչաքստոցության: Բավական է հիշել Չինգիզխանի, Լենգթեմուրի անունները հասկանալու համար, թե այդ ցեղերի սերունդները ինչ բարբարոսությունների էին ընդունակ: Արևելյան երկրների հետ Հայաստանն ևս արյունաքամ է լինում և ժողովուրդը հյուծվում է անընդհատ միմյանց հաջորդող հարստահարությանց տակ:

Հայաստանի ավերն ու կոտորածը շարունակվում է դեռ երկար տարիներ, իսկ ԺԵ և ԺԶ դարերից սկսած Հայաստանը դառնում է նաև օսմանցվոց և պարսից մեջ կովախնձոր և կովող կողմերից յուրաքանչյուրը չի հապաղում հակառակորդից պակաս ավերել երկիրը և սրի անցկացնել հայ ժողովրդին: Բավական է կարդալ Առաքել վարդապետ Դավրիժեցու պատմությունը, որտեղ վատ գույներով նկարագրված է թշվառ հայրենիքի անպատմելի բարբարոսությունների ենթարկվիլը, որպեսզի պարզ լինի մայր երկրի դրությունը:

«...Եւ զայս ամենայն լսելով և գրելով մեր», գրում է Առաքել վարդապետը, «ճմլին սիրտք մեր և գալարին աղիք որովայնի մերոյ, և աչք մեր վտակս արտասուաց թորեալ իջուցանեն վասն եկելոց հասելոյ թշուառութեանս ժողովրդդեանս մերոյ: Եւ ոչ բաւիմք աստանոր, թէ որո՞վ օրինակա՛ւ և կամ որո՞վ տարագու ողբս անեալ աշխարհացուք ի վերայ բեկման ազգին և աշխարհին մերոյ...»:

ԺԷ դարի սկիզբը Հայաստանի համար ամենածանր ժամանակներից մեկն էր: Միմյանց հաջորդող պարսից և օսմանցվոց պատերազմները, սովը, չալախների և Ծահ-Աբասի արշավանքները, ժողովրդի վրա խիստ ծանր հարկեր դնելը,—այնպիսի մի վիճակ էին ստեղծել, ժողովրդին այնպիսի ծանր դրության մեջ դրել, որ ոչ ոք չէր համաձայնվում կաթողիկոս դառնալ: Հայրապետական գահի վերա բազմելը հոգևորականների կողմից մեծ զոհաբերություն և ազգասիրություն էր համարվում: Նշել է ժամանակ, երբ միաժամանակ երեք կաթողիկոս են եղել, բայց ոչ մեկը Էջմիածնում չի նստել. հարկերից ճնշված խույս են տվել ու ծածկվել:

Չնայած այսպիսի տաժանելի դրության, Էջմիածնի կաթողիկոսները իրենք մի բուն չունենալով, ուր իրենց գլուխը հանգիստ դնեին, այնուամենայն-

\* «Բագմավէպ», 1885, հուլիս, Աղ. Երիցյան, Պատմ. տեսութ. հայ տպագրության, Տըփլիսի, 1879, էջ 5:

\*\* Աղեք. Երիցյան, անդ, էջ 5:



Սակայն նա, յոր կարճատև կաթողիկոսության ընթացքում (1603—1605), ժամանակի ծանր պայմանների պատճառով, չկարողացավ տպագրական արվեստը հայերի մեջ մտցնել: Ուստի նա կտակում է յոր աշակերտ Գրիգոր Կեսարացուն յոր այդ փափագն իրագործելու: Վերջինիս էլ չի հաջողվում յոր ուսուցիչի կամքն ի կատար ածել և ինքն էլ յոր կողմից այդ կտակը հանձնարարում է Հովհաննես Անկյուրացուն, որ ծանոթ էր «ընդ ազգիս ֆռանկաց եթէ կարդալով և եթէ լեզուա»\*:


Հովհաննեսը գնում է Հոռոմ և չորս տարի չարչարվելով հայերեն տառեր է պատրաստել տալիս, և հայերեն ու լատիներեն երկիջյան մի Պատարագամատոց է տպագրել տալիս: Ապա իրեն համար ձուլել է տալիս նաև միջակ և բոլորգիր տառեր ու անցնում է Վենետիկ: Անկյուրացու մեծ ցանկությունն էր Աստվածաշունչ գիրքը տպագրել, որը նորան չի հաջողվում, ուստի և անցնում է Վենետիկ: Այստեղ սակայն նա կարողանում է 1642 թվին միայն Սաղմոս, Խորհրդատետր, և Ծնորհալու Յիսուս Որդին տպագրել: Այնուհետև նորա անունը այլևս չի հիշվում: Վերջին գրքի մեջ տպագրողի հիշատակարանը կրում է «Ծանուցում պայծառ ընթերցողաց» անունը, և սկսվում է այսպես. «Փառք եռակի անբաժանելի և մի տերություն Հօր և Որդույ և Հոգույն սրբոյ... որ ետ կարողությունն նուստ և տառապեալ անձին իմոյ Յովհաննէս Անկիրեցոյ թարքմանչի որ մականունն ըստ հոռոմայեցոց Ծիւանի Մօլինօ ասի, հասանիլ ի յաւարտ տպագրութեան արհեստիս, գոր բազում ջանիք և շատ նեղութեամբ տքնեալ և աշխատեալ այս Զ(6) ամ է գոր կախեալ կամ վասն տպագրութեան արհեստիս, ապաիներով ի յոյսն ամենեցուն, ի Քրիստոս Աստուած... Եղի ի մտի զտպագրութեան արհեստն առ ի պայծառությունն ազգիս Հայոց: Այլ և պատճառ աշխատանաց մերոց այս էր, զի յՈրհայեցի Սրապիոն կաթողիկոսն բազում փափաք ուներ վասն տպագրութեան արհեստիս, և ոչ եղև հասու: Եւ ետ պատուէր աշակերտին իւրոյ Տէր Գրիգոր քաջ բարունակետին Կեսարիոյ՝ լինի եթէ դու կարողանաս տպագրութեան արհեստին և նա ևս ոչ կարողացաւ: Իսկ նա ինձ մեղաւորիս և անարժանիս իբր հարկս ի վերայ եղեալ, պատուիրէր ինձ հանսպագ, եթէ լինի դու կարողանաս. վասն զի իմ ծանօթութիւն կայր ընդ ազգիս ֆռանկաց, եթէ կարդալով և եթէ լեզուա. այսպէս յանձին կալեալ ջան եղի աղօթիք անցաւ...»\*\*:

Այդ ժամանակ հայ գաղթականությունը Նոր Զուղայում հիմնում է Ամենափրկչյան վանքը, որտեղ ձեռագրերի և գրքերի հարուստ մատենադարան կար: Այստեղ տպարանի կարիք է զգացվում: Էջմիածնի միաբան Խաչատուր վարդապետը այդ գործի սկիզբն է դնում: Նա նվիրակ էր գնացել նոր Զուղա և տեղի ժողովրդի խնդրանք հանձն է առնում ս. Ամենափրկչյան վանքի առաջնորդության պաշտոնը 1620—1647 թթ.: Նա գիտուն էր և ազգասեր: Խաչատուրը աշակերտներ հավաքելով ոչ միայն անցա կրթում է և վարժեցնում Հին և Նոր կտակարանի գիտությանը, այլև «չինեաց զտպարան՝ որ համարի առաջին տպարան ի մեջ ազգի հայոց»\*\*\*: Ասիո մի խոլ անկյունում՝ Ասպահանում զանազան տառերի կաղապարներ էլ է պատրաստել տալիս, թեև շատ տձև և կոպիտ: Ապա յոր հիմնած տպարանում այդ տառերով նա տպագրել է տալիս 1642 թվին Հարանց վարքը, մանր տառերով, և՛ գրով՝ Ատենի ժամա-

\* Հ. Գ. Զարբհանայան, Հայկական մատենագիտություն. Վենետիկ, 1888, էջ 457:

\*\* Աղեք. Երիցյան, Պատմական տեսություն հայ տպագրության, Տփլիս, 1879, էջ 7—8:

\*\*\* Յարութիւն Տէր Յովհաննէանց, Պատմութիւն Նոր Զուղայու, որ յԱսպահան. հատ. Բ, Նոր Զուղա, 1881, էջ 18:



Մի էջ «Ատենի ժամագիրք»-ից (1642 թ., Նոր Զողա)

գիրք, որին կցված էին Սաղմոսը, Տօնացույցը և Օրհնութեանց քաղվածքը: Ասիո խորքում վառած այս լուսատու ջահը թեև ընդհատումներով, բայց յուր գոյությունը պահպանեց մասամբ մաքառելով նաև կաթոլիկ հոգևորականության դեմ:

Նոր Զողայի տպարանին ավելի զարկ տալու համար Խաչատուր վարդապետը դեռ 1639 թ. Եվրոպա է ուղարկում Հովհաննես վարդապետին առավել լավ ուսումնասիրելու և նոր տսւտեր պատրաստել տալու համար: Հովհաննես վարդապետը մի քանի տարի շրջագայում է Եվրոպայում, վերջը գալիս

Է Իտալիա և Հռոմում նոր տառեր պատրաստել տալիս զանազան մեծությամբ, բազմաթիվ տպարանական զարդեր, նույնիսկ նոտաներ երգերի և շարականների համար: Նա կարողանում է գեղեցիկ ու վայելուչ ձև տալ հայերեն տառերին: Սակայն, չկարողանալով ոչ մի գիրք տպագրել, անցնում է Լիվոռնո, որտեղ 1643-ին տպագրում է **Սաղմոսը** յուր նոր տառերով և այս տպարանը **վերցնելով** վերադառնում է Նոր Զուղա:

Այստեղ նա հուսախաբ է լինում, որովհետև Խաչատուր վարդապետն արդեն վախճանված է լինում, իսկ տգետ միաբաններն արգելք են հանդիսանում տպարանի հաստատելուն: Այնուամենայնիվ, Հովհաննեսը մեծամեծ արգելքների հաղթելով՝ կարողանում է տպագրել **Պարզատումար Ազարիայի 1647 թվին**, նաև **Լիակատար պատմություն** անունով մի գիրք, և ձեռք է առնում **Աստվածաշնչի** տպագրությունը, որը սակայն ավարտել չի կարողանում\*:

Այսպիսով մի ամբողջ դար շարունակ հայ սրտացավ հոգևորականի և աշխարհականի բաղձանքն է լինում Աստվածաշունչը տպագրված տեսնել, սակայն այդ չի հաջողվում:

## Է

Փիլիպպոս Աղբակեցի կաթողիկոսը 1649 թվին Էջմիածնում մի վարժարան է բաց անում, որի նպատակն էր կաթողիկոսյան ներկայացուցիչ Կղեմես Գալանոսի և մյուս քարոզիչների պրոպագանդայի առաջն առնելու համար մարդիկ պատրաստել: Փիլիպպոսի հաջորդ ուսումնասեր Հակոբ Դ Զուղայեցի կաթողիկոսի (1655—1680) առաջին ջանքն է լինում Էջմիածնում ևս տպարան բանալու մասին հոգալ: Նա տեսնելով Զուղայի տպարանի տառերի խորթությունը, այլ չհավանելով Հովհաննես Անկյուրացու պատրաստել տված գրերը, կամեցավ նոր գրեր հնարել տալ, ուստի և մի հարմար մարդ էր փնտրում, այդ նպատակով Եվրոպա ուղարկելու համար: Այդ ժամանակ Էջմիածնում էր Փիլիպպոս կաթողիկոսի քարտուղար Մատթեոս դայիր Ծարեցին, որին և 1656 թվին Եվրոպա է ուղարկում կաթողիկոսը տպագրական արվեստն ավելի լավ ուսումնասիրելու համար:

Մատթեոսը 1656 թվականին Զմյուռնիայից ճանապարհ է ընկնում դեպի Եվրոպա և քառասուն օր ծովով ճանապարհ անցնելուց հետո հասնում է «ի գեղազարդ քաղաքն և ի նաւահանգիստն ի Վենետիկ»: Այստեղ նա շրջելով բոլոր տպարանները և ցանկացածը չգտնելով, ստիպված է լինում գնալ Հռոմ: Մատթեոսը այստեղ էլ չի կարողանում յուր ցանկացած նարտար արվեստագետ անձանց գտնել, մանավանդ հալածվելով պապական կրոնական մոլեռանդությունից—«Բարեատեացք և հակառակասերք», ասում է նա, «գորգրեցին զմեծամեծս և զժողովս առ ի խափանել զայս գործ» և մինչև իսկ հրաման են հանել տալիս, թե «ոչ ոք յարհեստաորաց իշխեսցէ հանել զայս արհեստ. և տալ ի ձեռս հայոց և որք ըստ գտնեալ արասցէն զայս գործ ծածուկ և կամ յայտնի, պատիժ սաստիկ կրելոց են ի մեզ, և կամէին ահացուցանել»\*\*:

Այդ պատճառով Ծարեցին անցնում է Հոլանդիայի Ամստերդամ քաղաքը: Ամստերդամում հայերը մի փոքրիկ առևտրական գաղութ էին հիմնել: Հոլանդիան այն ժամանակ ազատվել էր պապական բռնակալության ձեռքից և բողոքական ազատ հանրապետություն կազմել:

Այստեղ արագությամբ և մեծ քայլերով առաջ էր գնում տպագրական գոր-

\* «Ազգասեր», Կակաթա, 1845, № 2, 4:

\*\* «Բազմավեպ», 1896, Բ:

ծը: Այդ ժամանակ Հոլանդիայում լավ հայտնի էր Քրիստափոր Վան-Դիկը, որն ուներ թե՛ տպարան և թե՛ տառերի ձուլարան: Մատթեոս Ծարեցին տրան է դիմում և 1658 թ. նոյեմբերի 27-ին պայման է կապում երեք տեսակ տառ պատրաստելու, Աստվածաշունչ տպելու համար: «Չորս տարի և նոյն-չափ ամիս աշխատեցինք և շատ նեղությունք քաշեցինք», ասում է նա, մանավանդ, «մերային զազանց սուտաձև կարգաւորաց և յաշխարհականաց թե՛ ի վեճետիկ և թե՛ աստ ի Ամստերդամ, որք փոխանակ օժանդակութեանն, զոր պարտն էին՝ դիմաբանեալ հակառակ էին մշտաբար»:

Այս մարդիկ իրենց թե՛ խոսքով և թե՛ գործով կամենում էին Ծարեցու ձեռնարկություններն արգելել և եթե օտար բարեպաշտ անձինք օգնել էին կամենում, «զայն ևս յուսահատեցուցանէին և ապաշատել տային բարեգործութեանն»: Սակայն, Մատթեոս Ծարեցին առանց հուսահատվելու, բոլոր դժվարություններին հաղթում է և 1660 թվին ստանալով տառերի մի մասը, սկսում է հրատարակել Ներսես Ծնորհալու **Յիսուս Որդին**: Բայց դեռ հրատարակությունը չվերջացած Ծարեցին ծանր կերպով հիվանդանում է: Ուստի և նա օր առաջ մտածում է յուր տպարանի վիճակն ապահովելու մասին:

Այն ժամանակ Ամստերդամում էր գտնվում վաճառականական գործերով Էրևանցի Ոսկան վարդապետի եղբայր Ավետիսը: Ծարեցին կանչում է սորան իրեն մոտ և նորան ընկերացնում է տպագրական գործի՛ն այն պայմանով, որ պարտքը և թե վաճառումից գոյացած օգուտը իրենց մեջ կիսեն: Ավետիսը շահադիտական նպատակ չունենալով՝ չի ընդունում Ծարեցու պայմանը, այլ յուր կողմից առաջարկում է տպարանը նվիրել **ս. Էջմիածնին և ս. Սարգսի Զորավարին**, որի համար նա պատրաստ էր թե՛ դրամով և աշխատությամբ օգնելու: Մատթեոսը համաձայնվում է և դեռևս յուր կենդանության ժամանակ գրում է գրքի վերջը դրվելիք հիշատակարանը, որը լրացնում է Մատթեոսի մահից հետո Ավետիսը. «Ես,—ասում է նա,—երիւանեցի Ղըլիջեճնց Ոսկան վարդապետի եղբայր Աւետիսու, որ լընկեր ի նորա դրամով, այլ օգնութեամբ, Աստուած իչն (ինչ) որ վաստակ տայ մեր մէջն, վաստակն կիսոյ լինի, որ ծաս որ մեռաւ, ես իբրև որք տարակուսեալ և պարապ մընաձի ես և սահմանք և գործն և մշակն. ամիս ժամանակ անցաւ. սկսան նաւերն գնալ ի դէմ արևելս ի քաղաքն Զըմրոնայ աթոռն սուրբ Պողիկարպոսի, որ է յեօթանանիցն. աննարութեանն մնացեալ, ԺԴ (14) տետրն տպագրեցի վախելով այսպէս սրբագրեցի. օրինակ ետի ի մի կողմ՝ տպագրածն մի կողմ մին կու նայի օրինակն՝ մի ի տպագրածն. յորժամ որ սղալ լինէր, կու մեկնի այսպէս սրբագրեցի. մընացիալ ԺԴ (14) տետրն. ապայ ուսայ ըզսրբագրեալն որ տուրին է. թիւն ՌԺԺ (1661) մարտ ամսին. ԻԵ (25) սուրբ Աստուածածին միչնորդ ունելով»<sup>67</sup>:

Ավետիսը այս հիշատակարանը գրելով, անկեղծությամբ խոստովանում է, որ յուր անունը դնելու կարիք չկար, բայց ստիպված դրեց հիշատակարանի մեջ, որովհետև մեծ աշխատանք ուներ գործի վերա թե՛ դրամով և թե՛ ուրիշ օգնությամբ, որովհետև «ուխտադիր եղեր եմ, որ մինչ ի մահս պիտի որ աշխատիմ, վասն սուրբ Էջմիածնուն...»: Իսկ 1661 թվին տպած **Սաղմոսարանի** հիշատակարանի մեջ Ավետիսի վերոհիշյալ ասածները ամբողջանում են: **Սաղմոսարանի** հառաջաբանի գրողն է Կարապետ վարդապետ Ադրիանացին, որի մեջ հիշում է Փիլիպպոս կաթողիկոսի նոտար Մատթեոս Ծարեցուն, «Որ բազում ջանիք և երկամբք քանդակել ետ և նորակերտեաց զազնի և զպատուական գիրս այս, հրամանաւ և կամօք երիցս երանեալ կաթողիկոսին Յա-

\* Աեռ, Հայկական տպագրություն, հտ. Ա. Թիֆլիս, 1901, էջ 150:

կորայ»<sup>7</sup>: Այս տառերի օրինակն ու ձևը Մովսես վարդապետն է տալիս, իսկ հիշատակարանի մեջ հիշում է Ղլիջենց Ավետիսին. «Որովհետև,—ասում է նա,—ինքն եղաւ պատճառ, որ այս ազնուակերտ և ընձալի տպագրարանս ընծայուի Էջմիածնի և սրբոյն Սարգսի Յուշոյ վանից: Զի Ծարեցին վերջին հիւանդութեան ժամանակ կոչել տուա զԱւետիս, և փոխ դրամ կուզէր իրմէ եօթն հարիւր հնգետասան մառչիլ, որպէս զի պարտապանաց հատուցանէ. այն ստակով, կըսէր, երկու հազար **Սաղմոսարան** և հազար երկու հարիւր **Յիսուս Որդի** կը տպագրենք, ու անոնց վաճառմանէն եղած շահը երկուքի կը բաժնենք, մէկն ինձ և միւսն քեզ: Իսկ եթէ մեռնիմ, քոյ տեսչութեան ներքև կըլլայ տպարանը ու կը վճարես պարտքս և ինձի տուածդ շահովը»: Ավետիս այս առաջարկության հանձնառություն չի ցուցնում: «Այլ, եթէ տպարանդ կ'ընծայես, ըսաւ, Էջմիածնի և սրբոյն Սարգսի, հետդ ընկեր կ'ըլլամ, ու ստակը տալով քեզ, ցորչասի կենդանի եմ, կ'աշխատիմ ի տպարանի. և դրամիս արդիւնքը վերոյիշեալ սրբոյն անունն կրող վանաց կը նուիրեմ. իսկ մահուրնէս ետքը՝ բովանդակը: Հաւանեցաւ Մատթէոս և կտակաւ որոշեց որ իր մահուրնէն ու երկուքին ալ պարտուց հատուցմանէն ետքը տպագրատունն յանձնուի Էջմիածնի և սրբոյն Սարգսի Մենաստանաց»<sup>8</sup>:

Մատթէոսի մահից հետո Ավետիսը վճարում է նորա թողած պարտքերը, ստիպում է Վան-Դիկին, որ տառերի փորագրությունը վերջացնի. ինքը հայերենի մեջ թույլ լինելով մի կերպ սրբագրում է, և **Յիսուս Որդի** գրքի տպագրությունը վերջացնում է և ապա հետևյալ հիշատակարանն է գրում.

«Վասն որոյ աշխատանք ունիմ ի վերա այս գործիս թէ՛ դրամով և թէ՛ այլ օգնութեամբ. և թէ ուխտադիր եղեր եմ որ մինչ ի մահս պիտի որ աշխատիմ վասն սուրբ Էջմիածնուն... Մատթէոսն որ մեռաւ թէ որ ես չէի՝, ո՞վ պիտի տիրէր ի վերայ քերխանային. հազար մառչիլ չոր պարտք քերխանային, որ հինգ հարիւր մառչիլ չէր արժէր...»<sup>9</sup>:

Ավետիսը մանրամասն նամակ է գրում տպարանի մասին նաև յուր եղբայր Ոսկան վարդապետին, որ Ուշի ս. Սարգիս վանքի վանահայրն էր: Ոսկանը նամակը տանում է և կարդում Հակոբ կաթողիկոսին, որը ուրախանալով՝ հրամայում է Ոսկանին գնալ Հոլանդիա և տեր կանգնելով տպարանին՝ ձեռնարկել **Աստվածաշնչի** տպագրությանը. բայց որովհետև Ոսկանը դեռևս զբաղված էր, ուղարկում է յուր աշակերտ Կարապետ վարդապետ Ադրիանացուն՝ եղբոր մոտ, որպեսզի սա գործն առաջ տանի մինչև յուր գնալը:

Ավետիսը տպարանը հանձնում է Կարապետ վարդապետին, որի հետ և հավասար ջանքով ու աշխատանքով սկսած տպագրությունները վերջացնում են և ձեռնարկում մեծ **Ժամագրքի** տպագրության: Բայց, ինչպես երևում է, Ավետիսին յուր առևտրական գործերը շատ էին խանգարում, ուստի և նա գրում է Հակոբ կաթողիկոսին և խնդրում է մի հասկացող մարդ հանձնարարել, որին կարողանա տպարանը հանձնել:

Ամատերդամի նման կենտրոն տեղում և վաճառաշահ քաղաքում տպարան ունենալը Էջմիածնի համար մեծ նշանակություն ուներ: Ուստի և Հակոբ Դ. կաթողիկոսը հովանավոր հանդիսանալով, արտոնում է Երևանցի Ոսկան վարդապետին 1662 թվին գնալ Հոլանդիա և տպարանի կառավարությունը յուր ձեռքն առնել:


(Ծարունակելի)

\* Հ. Գ. Զարրհանայան, Պատմություն հայկական տպագրության, Վենետիկ, 1895, էջ 100—101:

ՍԿՍՈՒԱԾՔ\*  
Ըստ ուրն ձայնից եղանակաց


94

Չափաւոր




Օրհ-նես-ցուք ըզ - տէր

զի փա - ոտր



է փա - ու - տր- եալ:

Չափաւոր




Օրհ-նեալ ես տէր Աստ-ուած հար-ցըն մե - ըոց




օրհ-նեալ փա-ու-տր-եալ ա - նուն քո յա - լի-տեան:

Միջակ




Մե - ծա-ցուս - ցէ աճճն իմ ըզ-տէր

եւ ցըն-ծաս-ցէ



հո - գի իմ Աս-տու - ծով փըրկ-չաւ ի - մով:

Միջակ



Ո - ղոր-մեա իճճ Աստ-ուած

ըստ մե-ծի ո - ղոր-մու-րեան




քում, ըստ բա-զում գը-թու-րեան քում քա - ւեա՛ զա - նօ - թէ - նու թիւնս իմ:

Չափաւոր կամ Միջակ



Օրհ-նե - ցէք ըզ-տէր յերկ-նից.

օրհ-նե - ցէք



ըզ - նա ի բար-ձանց:

\* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1972 թ. №№ 9-11-ից:

Չափաւոր կամ միջակ

Սկ. 

Օրհ-նե - ցեք ման-կուՆք ըզ-տեր եւ օրհ-նե - ցեք



զա-նու - նըն տեաՆԳ:

Չափաւոր կամ Միջակ


Հմբ. 

Համ-բար-ձի զաչս իմ ի Լե - ղիճս ուս-տի



ե - կես - ցէ ինձ օգ-նու - րիւն:

Միջակ

ճժ. 

Սի - րե - ցի զի Լուի-ցէ տեր ըզ-ձայն ա-ղօ - րից ի-մոց:


Չափաւոր կամ Միջակ

Առ. 

Օրհ-նես-ցուք ըզ տեր զի փա - ոօք




է փա - ոա - ւոր - եալ:


Դարձուածք 

փա - ոա - ւոր - եալ:

Չափաւոր

Հգ. 

Օրհ-նեալ ես տեր Աստ-ուած հար - ցըն մե - ղոց





օրհ-նեալ փա-ոա - ւոր - եալ ա-նուՆ քո




յա - ւի - տեան,

## Միջակ




Դարձուածք




## Միջակ



2ափաւոր կամ Միջակ



2ափաւոր կամ Միջակ



2ափաւոր կամ միջակ




Միջակ



Չափաւոր կամ Միջակ

ԴԿ.




Օրհ-նես -ցուք ըզ - տեր զի - փա - ոք Է փա - ռա - տր - եալ։

Դարձուածք




փա - ռա - տր - եալ։

Չափաւոր կամ Միջակ




Օրհ-նեալ ես տեր Աստ-ուած հար - ցըն մե - թոց օրհ-նեալ փա - ռա -




տր-եալ ա - նուց քո յա - լի - տեան։

Միջակ




Մե-ծա - ցուս - ցէ աճճն իմ ըզ-տեր եւ ցըն-ծաս - ցէ հո - զի իմ Աս-տու - ծով՝



փըրկ-չաւ ի - մով։

Չափաւոր




Ո - ղոր-մեա ինճ Աստ-ուած ըստ մե - ծի ո-ղորմու-թեան քում ըստ բա - զում




զը-րու-թեան քում քա-ւեա զա - նօ - թէ-նու - թիւնս իմ։

Չափաւոր կամ միջակ




Օրհ-նե-ցեք ըզ-տեր յերկ-նից օրհ- նե-ցեք ըզ-նա ի բար - ծանց։

Չափաւոր կամ միջակ



Օրհ-նե - ցեք ման-կուցք ըզ - տեր եւ օրհ - նե - ցեք զա-նու - նըն տեառն։

Մանր (եթե ստեղի (ինիցի))



Օրհ - նե - ցեք ման - կուցք ըզ - տեր եւ




օրհ - նե - ցէք զա - նու - նըն տեառն.

Չափաւոր կամ Միջակ



Համ-բար-ձի զաչս իմ ի լե - ղիցս ուս-տի ե - կես - ցե ինձ




օգ - նու - թիւն.

Միջակ կամ Յորդոր



Տէր թա- գա - ւոր - եաց զվա - յել - շու-թիւն ըզ - գե - ցաւ:





ԿԵՆԴԱՆԱԳՐԻ ԾԱԳՈՒՄՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՀԱՅ  
ՄԱՆՐԱՆԿԱՐՁՈՒԹՅԱՆ ՄԵԶ\*

ՀԱՅԵՐԵՆ ԿԵՆԴԱՆԱԳՐԵՐԻ ԾԱԳՈՒՄԸ

Հին հայ մանրանկարչության կարևոր ճյուղերից մին է զարդագիրը: Մինչդեռ դիմանկարները, տեսարաններն ու զարդերը (խորան<sup>1</sup>, սկզբնազարդ<sup>2</sup>, լուսանցազարդ) կարող են միևնույն ձևով գոյություն ունեցան լինել ուրիշ քրիստոնյա ազգերի մեջ ևս, հետևաբար և մեկից և մյուսին անցնելու, զարդագիրն, ընդ հավատակը, կրում է զուտ ազգային բնույթ, որով, համեմատաբար, ավելի ապահով է ազատ օտար արդեցությունից:

<sup>1</sup> Խորան են կոչվում զխավորապես ավետարանների սկիզբներում նկարված այլնազարդ դրվագները, որոնք ծառայում են իբրև համեմատության տախտակներ չորս ավետարանների նույնաբովանդակ գույնների համար: Դրանք են նաև ամուլյան խորաններ, հեղինակի՝ Ամովն Աղիքսանդրացու առնուով և կամ կանոնական խորաններ, որովհետև յուրաքանչյուր համեմատական տախտակ կրում է կանոն ա, կանոն բ, այլն վերնագիրը: Խորաններ կան նաև ուրիշ գրվածների, օրինակ՝ Նարեկի, սկզբին և նրանցում գրվում է բովանդակության նախադրությունը (argument և կամ որևէ վերտառություն բովանդակության վերաբերմամբ:

<sup>2</sup> Ազգնազարդ բառն առաջին անգամ գործածված էմ գտնում Հ. Գ. վարդ. Հովսեփյանի ուսումնասիրությանց մեջ. այդպես են անվանում որևէ գրվածքի կամ գլխի առաջին էջում գտնված վարդագույն դրվագները:

\* Մեսրոպ վարդապետ Մաքսուդյանը (1876—1918) իր այս աշխատությունը պատրաստել էր «Օռնակաթ» հայագիտական ժողովածուի Բ հատորի համար (տ. Գ. Հովսեփյան վարդապետի մահախոսականը), որը սակայն լույս չտեսավ: Ձեռագիրը պահվում է Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի արխիվում (թղթ. հմր. 98, վավ. 2):

Ձեռագիրը հրատարակության է պատրաստել Սեդրա Ավդալբեգյանը:

Այս էական պարագան աչքի առաջ ունենալով՝ հայ արվեստի, մանավանդ հայ մանրանկարչության յատմության ձեռնարկողը պարտավոր է իր գլխավոր ուշադրությունը զարդագրի վրա կենտրոնացնել նախ քան մյուս ճյուղերին անցնելը, եթե կամենում է արվեստի բուն ազգային դրոշմը ճշտությամբ երևան հանել:

Ինչպես հայտնի է, մեր ձեռագրերը հարուստ են զարդագրերով, որոնց մեջ հանդես բերված նրբությունն ու ճաշակը այսօր էլ դեռ հիացում կպատճառեն ամենից բժախնդի քննադատին անգամ: Նրանցից շատերը կարող են այժմ էլ գործածության դրվել, եթե ուզենք, իհարկե, հայ արվեստով զարդարել մեր ուղեբձները, շնորհավորականները, հրավիրագրերը, գեղարվեստական հրատարակությունները, ձեռագործերը և այլն: Երանի այս մասին ևս կարողանալինք օրինակ վերցնել եվրոպական ազգերից, օրինակ անգլիացիներից, որոնց մեջ միջին դարերի մանրանկարչական արվեստը նորից է կենդանություն առնում և կատարելագործված տպագրության ընձեռած դյուրություններով ավելի և ավելի ծավալվում և պայծասանում:

Որքան ինձ հայտնի է, հա՛յ զարդագրի ոչ ծագման, ոչ զարգացման մասին դեռ ոչ մի գիտական ուսումնասիրություն լույս չի տեսել: Ի նկատի ունենալով նյութի ընդարձակությունը՝ ներկա ուսումնասիրությունն հրապարակ է բերվում իբրև մի փորձ միայն, որ կարող է գոնե առիթ տալ ավելի լիակատար հետազոտությանց: Ավելորդ է ասել, որ առաջադրված խնդրի անթերի լուծման համար անհրաժեշտ էր մի առ մի համեմատության առնել ոչ միայն Մ. Աթոռի ձեռագրատան, այլև ուրիշ մատենադարանների հաշերեն ձեռագրերը, սակայն և այդպես անօգուտ չենք համարում, իբրև մի դույզն նպաստ հայ մանրանկարչական արվեստի պատմության, հրապարակ հանել այն քիչն ևս, ինչ որ կարողացել ենք դիտել ու

ձեռք բերել վերջին երկու տարվա ընթացքում մեր մանրանկարչական վերարտադրությանց միջոցին:

Մեր դիտողությանց արդյունք են հետևյալ եզրակացությունները.

Ա. Հայկական զարդագրերի, ինչպես առհասարակ զարդանկարների մեջ, իշխում են երկու իրարից բոլորովին տարբեր ոճեր, մանվածոյ՝ և սիմբոլական.

Բ. Մանվածո ոճի ծագումն ավելի հին է քան սիմբոլականինը:

Գ. Մեր կենդանագրերն առաջ են եկած չորս ավետարանների սկիզբներին իրրև սիմբոլ նկարված եզրկիկանս պատկերներից, այն է՝ **թևավոր մարդուց, թևավոր առյուծից, թևավոր եզից և արծվից:**

Դ. Ժամանակի ընթացքում սույն չորս սիմբոլների վրա ավելացած են երկու նոր սիմբոլներ, **ձուկ և օձ, ձուկն՝** իրրև քրիստոնեության խորհրդանշան, **օձն**

իրրև մեղքի կամ առաջին մարդու անկման օձի խարդավանքով:

Այժմ անցնենք սույն չորս կետերի բացատրության առանձին-առանձին:

Ա

Պատահական մի երևույթ չէ, որ հայ վիճակն արձանագրությանց և քանդակների վրա միակ իշխող մանվածո ոճն է: Ավելի ևս ուշագրավ է այն հանգամանքը, որ մինչև հայ քանդակագործության մեջ բացակայում է կենդանագիրը, հայ մանրանկարչության մեջ, ընդհակառակը, մանվածն իշխում, հարատևվում է կենդանագրի հետ մինչև վերջը: Բավական է մի ակնարկ ձգել հայ ձևագրերի վրա և կըզանք այս եզրակացության:

Բ

Հանդիպելու համար, որ մանվածի սկիզբն ավելի հին է, քան կենդանագրինը, պետք է համեմատության և առնել մի քանի կարևոր ավետարաններ՝:

Այս համեմատությունը պարզում է, որ մեր ձևագրերից մանրանկարչության պատմության համար ամենակարևորները բաժանվում են երկու մեծ ընտանիքի. մեկում չորս ավետարանների պատկերները, չորսը միասին, նկարված են տեսքի սկզբում առանց սիմբոլի. մյուսում յուրաքանչյուր ավետարանիչ նկարված է համապատասխան ավետարանի սկզբում, առանձին էջի վրա, ավետարանը գրելիս կամ (Հովհաննեսը Պրոքորոսին) թելադրելիս:

Այս ճյուղավորումն ենթադրել է տալիս, որ, արվեստի տեսակետից, մեր ձևագիր ավետարանները ընդօրինակված են երկու կամ (գուցե և էլ ավելի) նախատիպերից, երկուսի ծագումն էլ շատ հին, ուրուցից մեկում բացակայել է սիմբոլը, իսկ մյուսում ընդհակառակը՝ սիմբոլին տրված է մեծ կարևորություն: Մեր ձևի տակ գտնված ավետարաններից հնագույնները պատկանում են առաջին ընտանիքին, միայն թե մի քանի թեթև շեղումներով, որոնց ուշատակությունն ավելորդ չենք համարում:

Այսպես, օրինակ, Մ. Աթոռի ավետարաններից № 3784, թվակ. 1057, 3723, թվակ. ՆՂԴ=1045, ինչպես 1519, 974 և 378, որոնք թևե թվական չունեն, բայց գրված են համանման երկաթագրով և ունին միևնույն դիրքը, սրանց և դեռ սրանց մեծ շատերի մեջ 4 ավետարանիչների պատկերները բուն գրվածքից դուրս են, հատորի սկզբում: Ասացինք «թեթև շեղումներով» ակնարկելու համար, օր. 2374 (փղոսկրե ավ., թվակ. 989), որ 4 ավետարանիչները նկարված են դարձյալ սկզբում, սակայն ոչ թե չորսը միասին մի էջի վրա, այլ երկերկու, կողք-կողքի, երկու առանձին հանդիպակաց էջերում (6ր և 7ա),

3 Այս անունը փոխ ենք առնում Պ. Թորամանյանից: Սակայն հատկապես տառերի մասին խոսելով մեզ թվում է, թե կարելի է ավելի հաջող մի քան գտնել բերրոշելու համար այն կարգի հին հայկական զարդագրերը, որոնք կենդանագիր չեն: Վերջերս Աղթամարի ձևագրերից մեկում, որ կոչվում է «Հաւաքարան անուանց կթոսաց», պատահում ենք մի կարճատոտ հատվածի, — «Առաջին հատորն մագաղաթի վերայ գրեալ էր երկաթագրով, նշանագրով, գաւազանակերպ գրով», որից հետո մի քանի տառերի (Ա.—Ջ) օրինակով էլ, որ նկարել է գրիչը, բացատրում է, թե ինչ քան է գալվազանակերպ գիրը: Ձևագրերի մի այլ էջում գործ է ածվում ուղղակի գալվազանագիր բառն էլ: Ի նկատի ունենալով, որ մեր մանվածո անվանած տառերի ձևը մեկ կողմից շատ մոտ է նրբակիրթ գալվազանների ու գայիսունների ձևին, մյուս կողմից իր էական գծերով շատ էլ չի տարբերված «Հավաքարան»-ի ներկայացրած ձևերից, մեզ մտածել է տալիս, որ **գալվազանագիր** տիտղոսն սկզբում հավանորեն տրված է զարդագրի նույն տեսակին, որ մենք անվանում ենք **մանվածո**: Ինչպես հետո պիտի տեսնենք, կան ամբողջ ձևագրեր, որոնք բացառապես այս ոճի տառերով են զարդարված. դրանց մեջ առաջին տեղը կարելի է տալ մի երկաթագիր ավետարանի, որ գրված է 2ԺԾ=1286-ին, Հոռմկալում Հեթում Ա-ի հրամանով ու ծախսով և որ վերջերս Աղթամարից քերվեց Մ. Աթոռ: Ենթադրելի չէ՝ արդյոք, որ Հայաստանում մանրանկարչությունն սկզբում ծաղկած լինի երկու տարբեր միջավայրերում—պալատում և եկեղեցու հովանու տակ. առաջինում ծնունդ առած ու զարգացած լինի մանվածո ոճը, երկրորդում՝ սիմբոլական ոճը կամ կենդանագիրը (ըստ «Հավաքարան»-ի «նշանագիրը»):

4 Հն. Ix d'us հայտնի է, որ այս բառը կազմող հինգ տառերով սկսվում են քրիստոնեական դավանանքի էությունն արտահայտող հետևյալ բառերը—Հիսուս Քրիստոս Աստուծո որդի Փրկիչ: Ձկան մուտքը քրիստոնեական արվեստի մեջ շատ հին է և նրա ծագումը պիտի որոնել հնդկի դիցաբանության մեջ:

5 Ուսումնասիրության ընթացքում մեր համեմատությունները կատարված են հատկապես ավետարանների ու Աստվածաշնչերի վրայից՝ այն պարզ պատճառով, որ, ինչպես ընթերցողը պիտի տեսնե, հայ կենդանագրերին ծնունդ տվողն եղել են այդ իսկ մատյանները:



կամ՝ 5784, որ 4 ավետարանիչները նկարված են կրկին անգամ, այն է՝ մեկ՝ 11ա, չորսը միասին մի շարքի վրա, յուրաքանչյուրի ձեռին մի գիրք, մեկ էլ՝ 11բ, մի մանվածո խաչի չորս անկյուններում, յուրաքանչյուրն առնված մի-մի փոքրիկ շրջանակի մեջ, կիսանդրի ձևով: Մեր առաջադրած խնդրի համար այս կարգի շեղումների մեջ ոչ մի անհարմարություն չենք տեսնում վերը սահմանված ընտանիքների բաժանման տեսակետից: Էականն այն է, որ հնագույն ավետարաններում բացակայում է սիմբոլը և սիմբոլի հետ բացակայում է նաև կենդանագիրը:

Իհարկե ցանկալի չէ հապճեպով եզրակացություն հանել, սակայն անհավանական չէ, որ մանվածո գրերի սկիզբն էլ Ժ դարից հին չլինի, երբ ի նկատի ունենանք, որ հրապարակի վրա հայտնի հնագույն ավետարաններում (փղոսկրե, Լագարյան ճեմարանի, Ալեքսանդրապոլի յոթնվիրաց խորանի) զարդագիր քնավ չկա, ոչ մանվածո, ոչ կենդանագիր, այլ միայն 4 ավետարանների սկզբնատուները—Գ, Ս, Ք, Ի—գրված են ավելի մեծ դիրքով, քան դրանց հաջորդող տուները:

Այսպիսով հայ մանրանկար տառերի առաջին շրջանն որին իսկապես մի նախապատրաստական շրջան է, որ տեսնում ենք մի քանի պարզ, թեև մե-

ծաղիր, գլխագրերի միայն: Նման մեծադիր գլխագրերի հիշատակված ձեռագրերում, բացի ավետարանների սկիզբներից, կան նաև բուն գրվածքի ընթացքում, և սեծաղիր են առհասարակ այն տառերը, որոնց դիրքը ինքնին այդ է թելադրում, օր. Բ, Գ, Դ, Ը, Պ, և այլն<sup>6</sup>: Անվանենք այս շրջանը A.

Գալով մանվածո տառերին՝ սրանք կկազմեն մի երկրորդ շրջան՝ B: Այս շրջանին պատկանում են այնպիսի ավետարաններ, որոնց մեջ ոչ սիմբոլ կա, ոչ կենդանագիր, այլ զարդարված են միայն մանվածո տառերով: Այդ շրջանի ներկայացուցիչ են մեր ճանաչածներեն հետևյալ ավետարանները. Ա) 285 (թվակ. ՈՂ=1212, փոքր բոլորագիր). 4 ավետարանների սկզբնատուներն են միայն, որ զարդարված են սանվածո ոճով, մինչ շարունակությունը երկաթագիր է: Բ) 355 (թվակ. ՉԻԹ=1280, մեծ բոլորագիր). սկզբնատուները մանվածո են. ուրիշ զարդագիր քնավ չկա: Ճիշտ է, որ սույն ձեռագրում Մարկոս և Հովհաննես նկարված են բուն գրվածքի ընթացքում, յուրաքանչյուրն իրա հատուկ տեղում, սակայն ուշագրավ է և այն, որ նախ՝ դարձյալ բացակայում է սիմբոլը, երկրորդ՝ պատեղ յուրաքանչյուր ավետարանիչ նկարված է երկու պտույնի վրա կանգնած մի մանվածո խորանի տակ, ինչ որ ցույց է տալիս մի անցման շրջան ավետարանիչների պատկերների զարգացման վերաբերմամբ: Գ) 1519 (թվ. ՈՂԱ=1282 ըստ էջ 298թ, ծանոթ. Հ. Գարեգին վրդ.), սեծաղիր, երկաթագիր. ավետարանիչների պատկերների մասին ոչինչ չենք տեսնում, որովհետև սկզբից պակասում են թերթեր:

Սակայն պարզ է, որ պատկանում է սա հնագույն ձեռագրերի տիպին թե՛ դիրքով, թե՛ գրությամբ: Մարկոսի, Ղուկասու և Հովհաննես ավետարանների սկզբնատուները—Ս, Ք, Ի—նկարված են սեծաղիր և մանվածո, իսկ սրանց անմիջապես հաջորդողները կիզբն, անգի, սկզբա—նկարված են փոքրադիր մանվածո. (տ. Չոպ. «Հայ էջեր». նկ. 29): Պարունակություն ընթացքում կան դարձյալ բազմաթիվ գլխագրեր, սակայն բոլորն էլ մանվածավոր, իսկ կենդանագիր՝ քնավ: Վերջապես Դ) 878 (թվ. ? գրիչ՝ Թորոս, ստացողներ Վախտանգ և Խորիշահ ամուսիններ, սեծաղիր, երկաթագիր). սույն ձեռագիրն ընդօրինակված է մի այնպիսի ժամանակ, երբ թոշնագրի մասին գաղափար կար, այդ պատճառով էլ պատահում ենք էջ 96թ, 101ա, 261բ, 262բ, 268թ, որի թեկը ներկայացնում է մի թոշնագույն, մինչ մնացած ամբողջը մանվածո է էջ՝ 215ա և 270բ՝ Հ, որի գլուխը կազմված է մի փոքրիկ թոշնագլխից, մինչ մնացալը

<sup>6</sup> Այսպիսով քննակնորեն բացատրվում է գլխագրերի ծագումը՝ գեթ հայերենում: Տառերից ոմանք երկարելու ընդունակ են և երկարել են դեպի վեր կամ դեպի վար, ոմանք էլ, ինչպես Ջ, Ջ, ևն, հարմարություն ունին դեպի աջ, դեպի ձախ ձգվելու: Այսպիսով սկիզբն է առնում ու զարգանում գլուխների ու տների սկիզբներին մեծատառ գրելու սովորությունը, որի հետևանքը լինում է վերջիվերջո, մանավանդ փոքր երկաթագիր ու բոլորգրի հանդես գալուց հետո, գլխագրերի ստանձին շարք կազմելը:

մանվածո է էջ՝ 43ա, 165բ, 202ա, 277ա, և 278բ Յ կազմված մի գույգ թռչուններով: Այս բացատրությունները, որոնց թիվն իսկապես շատ չնչին է համեմատան սովոր մեծամասնության հետ, որ մանվածո է, ցույց են տալիս միայն, որ սույն ձեռագիրն ընդօրինակված է սիմբոլյան շրջանում նախասիմբոլյան մի օրինակից: Այն պետք է ուշադրությունից չփախցնել: Ե այն պարագան, որ այստեղ նկարված թռչնագրերի մեծ մասը, օր. Ի և Հ, ոչ այնքան մի տիրապետող ոճի արձագանք է, որքան նկարչի անձնական խառնվածքի ու վայրկենական տրամադրության, կամ, սովելի ուղիղ բացատրությամբ, սուկ գրչախաղ: Նկարիչը միայն կարող է տեսնել այն մուրբ հարաբերությունը, որ շատ անգամ պատահում է սի գր՝ ս մանվածո զարդի ու մի փոքրիկ թռչնագրի միջև: Մի առերևույթ նմանությամբ № 1519 էջ՝ 222բ մանվածո Հ-ի վերին գլուխը 378 էջ՝ 370բ Հ-ի գլխի հետ, որ թռչնի է, մինչ տառի մնացած մասը աջորդողի մանվածո է: Սույն 4 տարբեր ձեռագրերից երկուսը՝ 285 և 355 ներկայացնում են B շրջանի սկիզբները, երբ մանվածով զարդարվում էին ավետարանների 4 սկզբնատուները միայն—Գ, Ս, Զ, Ի: Մանվածի տիրապետություն և սիմբոլի բացակայություն՝ այս է B շրջանի հատկանիշը:

4.

Սույն կետն ընդգրկում է մի քանի շրջաններ, և այստեղ ամենադժվարինը կենդանագրի կամ հենց սիմբոլի ծագման ժամանակի խնդիրն է: Սիմբոլի գործածությունն, ինչպես տեսանք, ուշ է մուտ գործում հայ նկարչության մեջ և հավանորեն ուղղակի բյուզանդականից, որից է անցել՝ նույնպես դեպի արևմուտք՝ մյուս քրիստոնյա ազգերին: Բյուզանդական մանրանկարների զիսավոր ստանձնահատկություններն են, ինչպես կարդում ենք մանրանկարչության մի անգլիերեն ձեռնարկում (Guide to the art of Illuminating by George Aschdown, LLD էջ՝ 5) ոսկու շոայ, զանգվածային գործածությունն ու վառ գույների հաճախությունը: Այս հատկություններն երևան են գալիս մեր մանրանկարչության մեջ ոչ թե վերը հիշատակված և նման ձեռագրերում, այլ այնպիսիների մեջ, որոնք կենդանագրով են հարուստ և սիմբոլի ներկայությունն ակներև է: Այլև հաճախ կարելի է պատահել մեր ավետարանների մեջ այնպիսի օրինակների, որոնք ավետարանների սկիզբներին, իբրև վերտառություն, կրում են հունարեն *Kατὰ Ματθαίον, κατὰ Μάρκον* և այլն: Հիշենք նաև երկու կարևոր ձեռագիր, որոնց կամ ընդօրինակողները կամ նկարիչները ձեռի տակ են ունեցել հունական կամ որ նույնն է բյուզանդական օրինակներ. ա) 379Յ (թվակ. շր.=1058), Ավետարան<sup>7</sup>, երկաթագիր, սիմբոլական շրջանի: Այս ձեռագրում, էջ 240բ, ուր նկարված է Հովհաննես ավետարանիչը իր Պրո-



քորու աշակերտի հետ միասին, վերջինիս անունը գրված է հունարեն վերից վար: ք) 206 (թվակ. 24Է=1318), Եսայի Նշեցու Աստվածաշունչ, մանր բոլորագիր. այստեղ էլ, էջ 446ա, նկարված է, ամբողջ էջի վրա, Փրկչի մկրտությունը Հովհաննեսից: Պատկերի վերին եզերքում կա հետևյալ վերտառությունը կես հայերեն, կես հունարեն «Մկրտություն ՏՆ» ՅΗ ΒΑΠΤΙΣΜΟΣ:

Թե որքան հին է սիմբոլի ծագումը բուն իսկ բյուզանդական արվեստի մեջ, ինձ հայտնի չէ, իսկ հայկականում՝ 1053 թվից առաջ պետք է եղած լինի և ոչ հետո, քանի որ այդ թվին գրված վերոհիշյալ № 379Յ ավետարանում արդեն սիմբոլը գոյություն ունի: Բայց սիմբոլի մուտքն ու կենդանագրերի սկիզբն հայ ձեռագրերում միաժամանակ տեղի չեն ունեցած, այլ աստիճանաբար, մեկը մյուսից հետո: Ցույց տանք այդ աստիճանավորումը՝ ընդգծելով իրենից իրերահաջորդ նորագույն շրջանների մանրանկար տառերի զարգացում:

Այս կողմից ամենահետաքրքրականը Մայր Աթոռի Մատենադարանի № 2743 ձեռագիրն է, որ հայտնի է «Թարգմանչաց ավետարան», անունով: Սույն ձեռագիրը, գրված ՌՁԱ=1232-ին ներկայացնում է մեզ հետևյալ բնատիպ պատկերը՝ մեր հետազոտած հարցի տեսակետից: Ամովյան մանվածո խորաններինց հետո (էջ 1բ—10ա) սկսում է բուն ավետարանական տեքստը: Չորս ավետարանիչներն իրանց տեղերում են, թեև Մարկոսի և Դովաթի պատկերներն

<sup>7</sup> Այս ավետարանում որոշ էջեր ներքևից համարագրված են հունարեն տառերով: Անշուշտ մի ապացույց էլ այս է բյուզանդական ազդեցության:



ընկած: Ավետարանների չորս սկզբնատատերը—Գ, Ս, Ք, Ի—նկարված են մանվածո և յուրաքանչյուրի կողքին կամ մեջը՝ (Ս-ի)՝ համապատասխան սիմբոլը: Զուտ մանվածո են նաև խորաններն ու լուսանցազարդերը՝ վերջիններս վերևից ավարտելով միշտ մի խաչով, ինչպես տեսնում ենք առհասարակ հնագույն ձեռագրերում: Ամենից ավելի աչքի է ընկնում երկու բան. նախ՝ կենդանագրի իսպառ բացակայությունն ամբողջ ավետարանում, մինչ մանվածո զարդագրերի կարելի է պատահել գրեթե ամեն էջում. երկրորդ՝ 4 ավետարանիչների նկարները իրանց հատուկ էջերում: Այս վերջին հանգամանքի վրա չէ կարելի ուշ չդարձնել, երբ ի նկատի ունենանք, որ մեր առհմանած առանձին ընտանիքի ձեռագրերում ինչպես սիմբոլն ու կենդանագիրն են բացակայում, այսպես և ավետարանչական պատկերները տեքստի մեջ: Հայ մանրանկար տառերի այս շրջանը, որ սիմբոլական ընտանիքի սկզբնավորության շրջանն է և որի հատկանիշն է սիմբոլի առանձին հավելումը ավետարանի սկզբնատառի կողքին կամ մեջը, անվանենք C. կարելի է սույն շրջանին հատկացնել նաև այն ձեռագրերը (օր. 379, ավետարան, մեծ բոլորագիր. թվականն անհայտ, բայց ոչ

ուշ, քան ՌԴ=1855, ստացող Հովհաննեսի դրած թվականը), որ սիմբոլը նկարված է տառից հետո, խորանի ուղղակի տակը: Ժամանակի խնդիրն ինչպես առհասարակ մեր այս նոր սկավոր հետազոտության մեջ, նույնպես և այստեղ բախում է մեծ դժվարության: Պարզ է, սակայն, որ ինչքան էլ այս շրջանից հիշատակել կարողանանք միայն թարգմանչաց ավետարանը, գրված 1232-ին, պնդումներով նրանում երևան բերված արվեստը մի քանի դար ավելի հնից է գալիս, որովհետև ուրիշ սուլկի հին ձեռագրեր, օր. 3798, թվ. ՇԲ=1053 և 311, թվակ. ՇԺԵ=1066, երկուսն էլ ավետարան, ժամանակով ավելի հին են և սակայն ներկայացնում են սիմբոլի զարգացման ավելի ուշ շրջաններ համեմատությամբ թարգմանչաց ավետարանի: Նույնիսկ վերջինիս մեջ կա ակնհայտնի ապացույց, որ մինչև 1232 Շ շրջանն անց է կացել որոշ հեղաշրջումներ. այն ապացույցը լուսապատկի բացակայությունն է Նարկոսի, Ղուկասու և Հովհաննես սիմբոլներից, մինչ Մատթեոսի սիմբոլը լուսապատկ ունի գլխին: Սկզբում բոլոր սիմբոլներն էլ ունեցել են լուսապատկ, ինչպես տեսնում ենք եզևկիկյան տեպի պատկերներում, որովհետև բոլոր չորս կենդանիներն էլ հավասարապես սուրբ էին համարվում, որքան կարող էր սուրբ համարվել իրա ավետարանչի անձնավորությունը, մինչ ժամանակի ընթացքում նկարիչների մեջ առաջ է գալիս մի տեսակ խոճախարություն անբան կենդանիների սրբությունն լուսապատկով զարդարելու:

D շրջան. Գեղասիրական ճաշակն օգտվեց սիմբոլի ներկայությունից և կազմեց 4 ավետարանների սկզբնատառերը, այսինքն՝ թևավոր մարդուց՝ Գ, թևավոր առյուծից՝ Ս, թևավոր եգիպտացի Ք և արծվից՝ Ի, չորսն էլ լուսապատկով և չորսն էլ մի-մի գիրք բռնած, որ նույն ինքն ավետարանն է: Բնական է, որ սիմբոլի իմաստն անվթաբ արտահայտելու համար այս շրջանում, որ նշանակում ենք D, աշխատեին յուրաքանչյուր տառը ձևակերպել միայն մի կենդանով առանց որևէ բարդության: Այսպես՝ Գ-ն կազմում էին թևավոր մարդու թևերի բացվածքից ձևացնելով Գ-ի վերին բոլորակ մասը. № 206 աստվածաշունչ, թվակ. 24Է=1818, էջ 444ա կամ՝ պարեգոտից բռնել տալով. Ս-ն ձևացնում էին առյուծը նկարելով պտկած կամ վազելու դիրքով և թևերը երկուստեք վեր բարձրացրած, առաջի երկու թաթերով էլ ավետարանը բռնած, Ք-ի ձևակերպման համար նկարում էին մի եզ գլուխն ուղիղ դեպի վեր բարձրացրած, թևի մեկը կախ ձգած, իսկ մարմնին տալով վազելու դիրք. վերջապես Ի-ն ձևակերպում էին նկարելով մի արծիվ, թևի մեկը բարձրացրած դեպի վեր, Ի-ի առաջին երկար ուղղահայաց գծի փոխարեն, իսկ Ի-ի երկրորդ ուղղահայաց գծի տեղը արծվի գլուխն էին թեքում դեպի առաջ՝ ավետարանը բերնին:

Այս շրջանի լավագույն ներկայացուցիչ կարող է համարվել, արվեստի կողմից էլ անգուգական № 311 ավ.-ը, որ դժբախտաբար պակասավոր է. Մատթեոսի և Հովհաննեսի թև պատկերներն և թև ավետարան-

Արի սկզբներն ամբողջովին բացակայում են, ինչպես նաև Ղուկասի միայն պատկերը: Իսկ Ի-ի համար № 358, ալ., թվակ. ՊՂԱ=1442, գրիչ՝ Հովհաննես քահանեա, գրության տեղ?: Սակայն սույն շրջանի հիշյալ 4 տառերը վերերևում են հետագա դարերի Աստվածաշունչների մեջ, օր. 352 թվակ. ՊԻ=1371 (Գ, Ս, Ի), 188, թվակ. ՌՂԲ=1643(Գ). 189, թվակ. ՌՂԸ=1649(Գ, Ս), 200, թվակ. ՌՃԷ=1658 (Ս), ևն:

Հիշատակված ձեռագրերից հնագույնը, № 311 ավետարան, Ա-ի կազմության մեջ մտցրել է մի հավելում, որ նույն Ա-ի մեջ ուրիշ տեղ չենք պատահում, այն է՝ մի պարեգոտավոր երիտասարդ, գլխին լուսապսակ և երկու կողմից գրած ՅԱ ՔԱ: Մի բացառիկ հանգամանք, որ բուն տառի ձևի հետ ոչ մի կապ չունի, այլ գորացնում է միայն սիմբոլի նշանակությունը: Եթե սույն ձեռագրից պակասած չլիներ Մատթեոսի ավետարանի սկիզբը, թերևս հնար լիներ որևէ նմանություն կամ առնչություն գտնել Մատթեոսի սիմբոլի և սույն պատկերի միջև:

Սույն շրջանում առաջ է եկած մի շեղում Բ-ի ձևակերպման մեջ, որի վրա սակայն երկար կանգ առնելու հնարավորություն չունիք: Սկզբում Բ-ի կազմող եզր նկարվում էր գլուխը բարձր և լուսապսակով, ինչպես տեսնում ենք 311-ում (այնպես որ Բ-ի գաղափարը լրացնողն իսկապես եզան լուսապսակն էր: Ժամանակի ընթացքում, այն է՝ լուսապսակի վերացումից հետո, կարիք է զգացվում եզան գլուխը թեքելու դեպի առաջ՝ Բ-ի ձևն ավելի որոշ դարձնելու համար, ինչպես տեսնում ենք, օր. 200, 203, 204 Աստվածաշունչներում Ղուկասի ավետարանի սկզբին: Սրանց մեջ հատկապես ուշադրության արժանի է 200, թվակ. ՌՃԷ=1658, գրիչ՝ Հովհաննես, «Ի գիողաքաղաքն Ջուղայ», ուր, էջ 484ա եզան գլուխը թեքված լինելով բացակայում է նաև լուսապսակը, մինչդեռ միևնույն Աստվածաշունչի մեջ, Մարկոսի ալ-ի սկզբին, Ա-ն իր նախնական վիճակից շատ քիչ է հեռացած):

Սույն շրջանից առաջ կամ հետո, բայց ըստ էության անբաժան է նրանից խորաններն ու լուսանցազարդերն ևս համապատասխան սիմբոլներով զարդարելու գաղափարը, հմբ. 358 ալ., Մատթ. և Հովհ. սկիզբները: Նպատակից դուրս համարելով խորանների ու լուսանցազարդերի զարգացման մանրամասն պատմությունը՝ այստեղ հարևանցիորեն այսբանը միայն պիտի առնենք, որ սկզբնական շրջանի ձեռագրերում խորանները նկարված են մանվածո ոճով, մինչև հետո նույն մանվածի մեջ մտն է գործում կենդանական տարրը և այն, մեր կարծիքով, միևնույն սիմբոլների միջոցով, բացի ամուլյան խորանների ճակտին նկարված հանդիպակաց սիրամարգներից, որոնց ծագումը անհայտ է մեզ: Սիմբոլական կամ սիմբոլազարդ խորանների լավագույն նմուշները կարելի է տեսնել 206 Աստվածաշունչի մեջ:

Այսբանով նշում ենք մեր դիտողությունները D շրջանի մասին:

E շրջան.—Ինչքան էլ հայ մանրանկարիչը օժտված լիներ ստեղծագործող տաղանդով, անկարող էր այ-



նուսանապարզ ըստառաջ չզնայ ճաշակի նորանոր պահանջներին տառի գաղափարի հետ նաև գեղեցկի և պարզության որոշմը տալու իր նկարած կենդանագրին: № 206 Աստվածաշունչի ծաղկողը՝ Թորոս, անմիտելի տաղանդի տեր է և նրա նկարած Գ-ն, որ D շրջանին է պատկանում, իբրև նկար, անպայման գեղեցիկ է, սակայն իբրև տառ, պարզ չէ: Սենք կոժվարանանք նրանում տեսնել Գ, եթե օգնության չհասնեն մեզ հաշորդ տառերը՝ -ԻՐՔ: Այս հանգամանքը պիտի ստիպեր արվեստագետին մտածել ոչ միայն սիմբոլի, այլ և տառի բացորոշ պատկերացման մասին: Այսպիսով սկիզբն է առնում մի նոր շրջան՝ երկու տարբեր նյութավորումով, այն է՝ կամ օգտվել մանվածո ոճի ընձեռած դյուրություններից և նրանում գեղեցիկ սիմբոլը, և կամ սիմբոլն հանդես բերել նոր բարդություններով:

Այս շրջանն անվանել կարող ենք E, իսկ հիշատակված նյութերը EA և EB:

№ 3793 մեծ երկաթագիր ավետարանում, թվակ. ԵԲ=1053, հարցի առարկա տառերը պատկանում են E շրջանի EA նյութին: Էջ՝ 4ա Գ-ը իսկապես ամբողջովին մանվածո է, միայն թե օգտվելով տառի ձևից՝ Գ-ի բոլորակի մեջ տեղավորել է մի մարդկային դեմք՝ առանց ավետարանի: Էջ 80ա, Ա-ն կեսից ցած ամբողջ մանվածո է, իսկ վերին մասերը մի-մի կես տալուձներ՝ քամակ-քամակի և լեզուները դուրս հանած, դարձյալ առանց ավետարանի: Էջ 144ա, Բ-ն ամբողջովին մանվածո, ներքևում, կարծես իբրև պատվանդան, նկարված է մի թևավոր եզ՝ ավետարանը բռնած երկու առաջի ոտքերով: Էջ 241ա Ի-ն



մանվածո. վերին մասն սկսվում է մի արծվի պատկերով, առանց ավետարանի: Սույն չորս սիմբոլներն էլ ներկայացրած են առանց լուսապակի: 4 ավետարանների սկզբնազարդն ևս զուտ մանվածո են, մինչ էջ 1ր և 2ա ամուլյան խորանների ճակտին կան ծագումով մեզ անծանոթ զույգ-զույգ թռչուններ: Սույն կարևոր ձևագիրը պարունակում է 19 գլխագիր, բոլորն էլ մանվածո:

ԵՅ ճյուղին պատկանող ձևագրեր շատ կան, մնում է ցույց տալ այն աստիճանավորումը, որին ենթարկված են պարզ սիմբոլական տառերը: Ամենից առաջ կրկնվում է Ս-ն կազմող այուծը և կրկնվելով փոխում նաև իր դիրքը: Սույն կրկնումի նախնական պատկերն արդեն տեսանք ԵԱ ճյուղին պատկանող № 3798 երկաթագիր ավետարանում: Ուրիշ ավետարանների մեջ առյուծների իրանը չի ընդհատված և ներքևից պոչերով միանում են իրար և այսպիսով ձեվացնում Ս, օրինակ՝ Արքաեղբոր ավետարանում № 197, էջ՝ 105ա: Առյուծների կրկնումով հաճախ կրկնվում է և ավետարանը, ինչպես սույն 197-ում. հաճախ էլ սակայն մնում է մեկ և երկուստեք բռնում են առյուծները, օր. № 198 ավետարան, բողոքագիր, գրված Բաղեշում, թվակ. ՌՀԷ=1628, էջ 189ա: Հենց սույն ձևագրից, ինչպես և Արքաեղբոր ավետարանից արդեն նկատելի է, որ հայ նկարիչները չէին կարողանում առյուծի դեմքը ճշտությամբ պատկերացնել, որից առաջ է գալիս մի մեծ շփոթություն շան ու առյուծի միջև—դեմքով շուն, բաշերով առյուծ: Այս շփոթությունն ավելի ևս ակներև է դառնում վերջին ժամանակներում, երբ սիմբոլի գաղափարը բանի գնում, աղոտանում, ջնջվում է և նկարիչը կեն-

դանու մեջ սկսում է տեսնել սուկ զարդի ու գեղեկության նյութ: Ոչ միայն առյուծն է տեղի տալիս շան<sup>8</sup>, այլև եզը, որի կնդակներն ու եղջյուրները անմիջապես չէին ջնջվում շնակերպ Բ-ի վրայից:

Առյուծի կրկնապատկումը դյուրացնում է անցքը դեպի տարբեր սիմբոլների ի մի հյուսումը: Մենք տեսանք արդեն, որ Մատթեոսի Գ-ն և Դուկասի Բ-ն իրանց սկզբնական շրջանում իրրև տառ ձևափոխվելու կարիք չէին զգացնում: Բարեփոխումն սկսվում է Բ-ից, ուր եթե մի նկարիչ եզան գլուխը դեպի առաջ շուտ տալով էր նպատակի հասնում, մի ուրիշն օգտըվում է Հովհաննու սիմբոլից, որ վաղուց արդեն նկատվում էր ոչ այլևս բուն արծվի կենդանությամբ, այլև իրրև սուկ թռչուն:

Մատթեոսի սկզբնատառ Գ-ի կրած փոփոխությունը մեզ հայտնի ավետարանների սկզբին այնքան էլ զգալի չէ: Այնպիսի փոփոխություն, որպիսին տեսնում ենք № 200 Աստվածաշունչի մեջ (թվակ. ՌՀ=1858), էջ 480ա, ուր Մատթեոսի սիմբոլը ձևովն րոնել է գրեթե մեր ժամանակի ոճով նկարված մի ճյուղ, ճյուղի վրան մի քանի ծաղիկներ, ուշ ժամանակի ստեղծագործություն է և մի բացառիկ երևույթ անշուշտ օտար, հալմանական պարսիկ արվեստի ազդեցության տակ առաջ եկած, որովհետև հին ձևագրերում այդ ձևի ուսերն ու ծաղիկներ երբևք հանդես չեն գալիս հայ կենդանագրերում: Ավելի հետաքրքիր է համեմատել № 2629 ալ. (թվ. շուրջ 1275, ըստ Գար. Վ-ի), էջ 14ա և 979 (Հեթում Բ-ի ճաշոց, թվակ. ՉԼԾ=1286), էջ 64բ: Սրանցից առաջինի մեջ Մատթեոսի լուսապակի սիմբոլն այնպես է բռնած իր պարեգոտից՝ Գ-ի բողոքակը ձևավորելու համար, որ նույն դիրքից օգտվել է Արքայական ճաշոցի նկարիչը կամ սրա նախատիպի հեղինակը՝ պարեգոտի այդ մասի փոխարեն, ճիշտ միևնույն տեղում և միևնույն դիրքով, մի թռչնիկ (ծագած Հովհաննու սիմբոլից) նկարելու, պահպանելով միևնույն ժամանակ թողնելիք տպավորության նույնությունը:

F շրջան.—Հայ կենդանագրի սույն շրջանին ենք պարտական մեր ուսումնասիրած արվեստի ամբողջ ճոխությունն ու զարգացումը: Այս շրջանում մեկ կողմից սիմբոլն սկզբնատառից անցնում է հարակից տառերին, մյուս կողմից ձևերի բազմազանություն առաջ բերելու համար նկարիչներն անխտիր ի մի են բերել չորս սիմբոլներն էլ, ու միայն չորս սիմբոլները: Ո՛չ ձուկ, ոչ օձ այս շրջանի կենդանագրերում դեռ տեղ չունեն ամբողջ ավետարանում. № 206 Աստվածաշունչ (թվակ. ՉԿԾ=1818), էջ 444ա, Մատթեոսի սկիզբն -Գիրք- չորսն էլ ներկայացնում

<sup>8</sup> Մասնագետ ընթերցողի ուշադրությանն է հանձնըվում այն հանգամանքը, որ հայ կենդանագրի հնագույն հիշատակարաններում, ուր առյուծն իրրև Մարկոսի սիմբոլ է նկարված, նրա դիրքը ծանր է և լուրջ միանգամայն համապատասխան իր անվան ու համբավին, մինչ երբ փոխվում է շան, փոխվում է և արտահայտությունը և մենք տեսնում ենք շունը նկարված խեղկատակ դիրքերով և խաղերով:

են միևնույն լուսապակավոր սիմբոլը ավետարանի ձեռնից, միայն թե Գ-ն նկարված է թևավոր, իսկ մյուսները՝ ոչ, երկրորդ տողը՝ **ՃՃՃՃ** թռչնազգիք է, որիչ խոսքով՝ ներկայացնում է Հովհաննու սիմբոլը = լուսանցազարդը՝ պնմված թռչուններով՝ օգտված է նույնպես Հովհաննու սիմբոլից. իսկ երրորդ տողն ամբողջ մանվածու է: Նրա ձեռագրում էլ՝ 488ա (տ. 2ոպ. «Հայ էջեր», ԱԿ. 37) Ա-ն կազմված է չորս սիմբոլների միավորումից, բայց ոչ թե դասավորված Հովհաննու Հայտնության<sup>9</sup> համաձայն, ինչպես գրում է Հ. Գար. Վ. («Անամիտ», 1911, էջ՝ 115), այլ ըստ Եզեկիելի տեսլան, որ, ինչպես վերը հիշեցինք, այն առաջին աղբյուրն է: Որից բխում է հայ կենդանագրերի չքնաղ արվեստը: Ս-ին հաջորդող երեք տառերը՝ կիզ կազմված են Մատթեոսին հատուկ սիմբոլներով. երեքն էլ մարդագրեր են ավետարանը ձեռներին և գլխներին լուսապակ:

Գիտենք այժմ, էջ 478ա: ՔԱՆՋԻ—բոլոր տառերն էլ, բացի Բ-ից, կազմված են 4 սիմբոլների խառնուրդից: Սակայն ուշադրության արժանի է այն պարագան, որ Ավետարանը այլևս բոլոր սիմբոլներից անբաժան չէ, ոչ էլ բոլոր տառերից, այլ նկարված է այնտեղ միայն, որ տառերի ներդաշնակության արգելք չի լինում. բացի դրանից այստեղ սիմբոլի գաղափարն արտահայտված է համապատասխան կենդանու գլխով միայն: Վերջապես վերցված է նաև լուսապակը բացի Մատթեոսի սիմբոլից և սկզբնատառի մեջ<sup>10</sup>:

Էջ 498ա Հովհաննու ավետարանի սկիզբն է. Ի-ն կազմված է չորս ամբողջական սիմբոլների միացումից և վերևում Մատթեոսի սիմբոլի գլխին, կրում է քազմած Հիտուսի պատկերը: Չորսն էլ ձեռներին ունին ավետարան, իսկ լուսապակ միայն մեկն ունի, Մատթեոսի սիմբոլը: Նույն սիմբոլներից է կաշմված նաև լուսանցազարդը, որ Մատթեոսի սիմբոլը նկարված է երեք տեղ, Մարկոսինը՝ երեք տեղ, Լուկասինը՝ մի տեղ, իսկ Հովհաննեսինը՝ չորս տեղ:

Խորանը բացատարպես կրում է միայն Հովհաննու սիմբոլը, նկարված հինգ տեղ, այն է՝ մի հանդիպա-

կաց գույգ խորանի մեջ, մի գույգ խորանի նակտին և մի երկգույգ կենտ դարձյալ խորանի նակտին, զծի ճիշտ մեջտեղում:

Այս շրջանում սիմբոլի նվիրականության գիտակցությունն հետզհետե թուլանալով հայ նկարչի, մանավանդ երկրորդականների մեջ, նախապես իրեն սիմբոլ նկարված, թվով բավական ճոխ, տառերի, այն է՝ ավետարանների առաջին, շատ անգամ երկրորդ տողերում պատահած **Գիրք ՃՃՃՃ**, **սկիզբն ավետարանի**, ևն, շարքը շուտով դուրս է գալիս իր հնագույն գործածության ներ սահմաններից և անցնում նախ նույն ավետարանի գլուխները զարդարելու, ապա և որիչ գրքեր: Իրեն սիմբոլ գործածված կենդանիներից էլ ամենից շատ նախապատվություն ստանում են թռչունն ու շունը, որոնցից վերջինս, ինչպես հիշեցինք այսուծի ու եզան տեղը է բռնում:

Այս շրջանի հետ ենք ուզում կապել նաև մարդագրերի ստացած կերպարանափոխություններն ու իրանց պարունակած խորհուրդը: Ուշադիր հետազոտողն անշուշտ նկատած կլինի, որ տակ մարդագրերի (Շոշի կամ Սպահանի դարոց, ԺԶ—ԺԷ դդ.) և սանկագրերի (Նիզանի և Բաղեշի դարոցներ, ԺԷ դ.) բավական տարածված մի գործածություն տիրում է հատկապես Մատթեոսի սկզբում **Գիրք ՃՃՃՃ** բառերի մեջ: Առաջիններից այն է՝ մարդագրերի, շարքը ներկայացնում է մի քանի հասակավոր մարդիկ, որոնց թե դիրքը, թե հագնվածքը<sup>11</sup> լուրջ է: Անշուշտ սրանք պատկերացնում են տիպերն այն նախապետների, որոնք բնագրում հիշվում են—Արթահամ, Իսահակ, Հակոբ ևն: Երկրորդ շարքը, հանձին ուրախ զվարթ պար եկող, խաղացող կամ նվագող **երկես** մանուկների արտահայտիչ է ճննդյան գաղափարի և առաջացած «ծնա» բառի հաճախակի կրկնության ազդեցությամբ: Մարդագրերի (այս դեպքում ավելի ճիշտ կլինեք ասել այրագրերի) իրեն օրինակ կարելի է հիշատակել Մայր Աթոռի ձևագրերից № 189 Աստվածաշունչը մանր բոլորագիր գրված Շոշ քաղաքում, ՌՎԼ—թ=1649—50-ին, ծաղկող՝ Հայրապետ: Իսկ մանկագրերի համար արժե հիշատակել № 198 ավետարան, միջադիր, բոլորագիր, գրված Բաղեշում ՌՎԷ=1628-ին, գրիչ և ծաղկող Սահակ քահանա: Սակայն այս երկու տեսակ խմբերն իրարից բոլորովին անկախ չեն, գոնե բառ ծագման: Այդ է ենթադրել տալիս մեզ ծ տառը, որ երկու խմբի մեջ էլ միևնույն դիրքով է նկարված և առաջին իսկ ակնարկից իսկույն աչքի է ընկնում:

Ձանգազանությունը շատ չնչին է. մեկում մարդը գլխին փաթթոց է կրում և ձեռին բռնել է մի բան, որ կարծես միրգ լինի, մինչ մանուկն առանց գլխարկի է և թթի վրա կրում է մի խաչ և դատարկ ձեռն էլ երկարել է դեպի առաջ:

Գ շրջան.—Կան ձեռագրեր, որոնց մեջ միամամանակ բացակայում է թե ձուկը և թե օձը կենդանա-

<sup>9</sup> Ըստ հայտնության, Գ. 7, «Եւ էր կենդանին առաջին նման առիծու, և երկրորդ կենդանին նման գուարակի, և երրորդ կենդանին ունէր երեսս մարդոյ և չորրորդ կենդանին՝ նման արծուոյ թողցելու»: Հմ. այս կարգը «Հայ էջերում» արտացոլված Ս-ի ներկայացրած չորս սիմբոլների դասավորության հետ:—Անշուշտ հետաքրքրությունից գուրկ չէ այն պարագան ևս, որ սույն (Եսայի Նչեցու) Աստվածաշունչի մեջ Հայտնության գրքի գլխագրերի մեջ քառասիմբոլյան տառեր չկան, այն ինչ Եզեկիելի սկզբնատառ Ե-ն կազմված է միևնույն ավետարանական չորս սիմբոլներից:

<sup>10</sup> Ինչպես տեսնում ենք, լուսապակի բարձում ևս բոլոր սիմբոլներից միաժամանակ տեղի չի ունեցած, այլ աստիճանաբար, նախ անբան կենդանիների, ապա մարդու գլխից: Առանց այս դժվար թե առաջ գալին ապագայի չքնաղ կենդանիները, որոնց մեջ սիմբոլի ոչ մի հետք այլևս նկատելի չէ:

<sup>11</sup> Գլուխներին ունին փաթթոց և հագած են երկար կապա, մեջքներին գոտի: Այդպիսի կապակներ այսօր էլ դեռ Հայաստանի զանազան կողմերում, ինչպես, օրինակ, Ակնում հայերի մեջ գործածական են:

գրերի հյուսվածքում: Այսպիսի ձեռագրերից են, օրինակ 2ԽԴ=1295, գրիչ՝ Ստեփանոս. 2670, ավ. գրված Ռստան քաղաքում, «յանապատից Սր. Վարդանայ», թվակ. ՊԿԸ=1419: Կան ուրիշներ, որոնց մեջ բացակայում է մին կամ մյուսը, օր. № 206 (Ե. Նշեցու Աստվածաշունչ) և 846, Աստվածաշունչ, «յանապատին Նորշենայ», թվակ. ՊԼԹ=1890, ծաղկող Հովհաննես Վարդապետ: Իսկ Արքանդրոս ավետարանում, № 197, ձկնատառ պատահում է միայն մի անգամ, Ո տառի մեջ, մինչ ամբողջ ձեռագիրը լի է ուրիշ ամեն տեսակ կենդանագրերով:

Այս փաստերը ցույց են տալիս, որ սույն երկու կենդանիների մուտքը հայ կենդանագրերում համեմատաբար ավելի ուշ է տեղի ունեցած, քան մյուսներից: Իսկ թե ո՞րը սույն երկուսից ավելի հին է, դժվարանում ենք ճշտիվ որոշել: Թվում է սակայն, որ ձուկն ավելի հին պիտի լինի, որովհետև տեսնում ենք այնպիսի ձեռագրեր, որոնց մեջ օձն է միայն բացակայում, ինչպես Եսայի Նշեցու Աստվածաշունչը: Իսկ այնպիսի ձեռագրերից, որոնց մեջ օձ լինի և ձուկը բացակայել, չենք պատահած:

Այս ենթ որոնքն ձուկից:

Ձկան ծագումն բացատրելու համար պիտի դիմենք կրկին № 206 Աստվածաշունչին, որ, ինչպես տեսանք, սիմբոլիզմի տեսակետից լավագույն աղբյուրներից է մեզ համար: Սրանում ձուկը հանդես է գալիս Ե, Ծ և Պ տառերում միայն: Ամենից առաջ տեսնում ենք Ե-ի մեջ, և այն՝ Հովհանի մարգարեության սկզբում միայն—«Ե տեղ քան ՏՆ...» էջ 858բ (տ. ԱԿ. 18): Ե-ի մեջ ձուկը պատահում է նույնպես մի անգամ, Պետրոս առաքյալի բ. թղթի սկզբում, էջ՝ 589ա—«Ծմաուն Պետրոս ծառայ ԱՅ...»: Երրորդը ձկնատառ Պ է, որ պատահում է հետևյալ էջերում. 307բ, Երեմիայի մարգարեության սկզբում—«Պատգամ ԱՅ...». 587բ Պետրոսի և թղթի սկզբում—«Պետրոս առաքյալ Յի ԲԻ...». 564բ և 571ա, Պողոսի թղթերի սկիզբներից:

Շատ պարզ է, որ ձկնագիրը սույն սկզբնական գործածությունից էլ ընդհանրացել և ճյուղավորվել է: Նրա հիմքը կազմում են կետից կլանվող Հովհանի Ե-ն և ձկնորս Ծմավոն—Պետրոսի Ծ-ն և Պ-ն: Զարմանալի է, որ նույնիսկ հին ժամանակներում կենդանագիր Ե-ի մեջ ընդհանրապես ձուկը երևան է գալիս, իսկ Հովհանի Ե-ից մի անմիջապես ածանցում տեսնում ենք ՌՂԵ=1648-ին Շոշում գրված մի բողոք-գիր Աստվածաշունչի մեջ, № 2587, էջ՝ 310ա, Առակաց գրքի սկզբում, Ծ տառի մեջ:

Ձկան մուտքն անվանենք G շրջան:

Սակայն ձուկը կենդանագրերի մեջ ինչքան էլ ծագած լինի Հովհանի պատմությունից կամ Ծմավոն—Պետրոսի արհեստից, այնուամենայնիվ ժամանակի ընթացքում նույնպես ստանում է սիմբոլի նշանակություն, սիմբոլի, որ մարմնացնում է իր մեջ ավետարանի քրիստոնեության գաղափարը: Այլապես ի՞նչ կերպ բացատրել, որ ձեռագրերից մի քանիսում այս կամ այն ավետարանչի կողքին նկարված է լինում ձուկ փոխանակ համապատասխան սիմբոլի, օր. № 2670 ավետարան, գրիչ՝ Աստվածատուր արեղյա, Ռստան քաղաք, «յանապատին սր. Վարդանայ», թվակ. ՊԿԸ=1419, էջ՝ 15բ: Կան նաև ուրիշ ձեռագրեր,

որոնց համեմատությունը ցույց է տալիս, որ ձուկն իբրև սիմբոլ բաժանված տարածված է եղել:

H շրջան.—Այն շրջանում սկիզբ է առնում օձի գործածությունը հայ կենդանագրի մեջ: Սրա ծագումը պետք է որոնել Աստվածաշունչի մեջ, Ծննդոց գրքի սկզբում, որ ընդհանրապես մեկ կողմից տեսալի սկզբին Ի (սկզբանէ արար Աստուած...) տան է զարդարված լինում օձով, մյուս կողմից հանդիպակաց էջում նախատեղծ գույգի պատկերի մեջ է հանդես գալիս խաբող օձի պատկերը: Եվ այս վերջին օձի ծնունդ է առնում առաջինը: Այս ենթադրությունն անում ենք հետևյալ հիման վրա. նախ, ինչպես հիշեցինք, հնագույն ավետարաններում թե ձուկ, թե օձ իսպառ բացակայում են երկրորդ Աստվածաշունչներից մի քանիսում, որ բացակայում է օձը Ծննդոց գրքի սկզբում, բացակայում է նաև սիմբոլը ձեռագրերում, սկզբից մինչև վերջը, և, ընդհանրապես, երբ սկզբում կար օձ, կար նաև շարունակության մեջ: Իհարկե այստեղ ևս շատ հավանական է, որ նախապես միայն մի տեղ, Ծննդոց Ա զբխում նկարված լինել օձը, որ ժամանակի ընթացքում դառնում է արտահայտություն կամ սիմբոլ մեղքի: Դժբախտաբար Աստվածաշունչի այդ շրջանի ձեռագիր մեզ չի հանդիպած:

Հիշենք այժմ մի քանի կարևոր Աստվածաշունչներ, որոնց մեջ օձագիր բնավ չկա, 180, Աստվածաշունչ Հեթում Բ-ի, գրիչ՝ Ստեփանոս, թվակ. 2ԽԴ=1295. 206, Եսայի Նշեցու, թվակ. 2ԿԷ=1318 (Ծննդ. սկիզբը տ: 2ոպ. «Հայ էջեր», ԱԿ. 34). 846, ծաղկող Հովհաննես Վարդապետ, «յանապատին Նորշենայ», թվակ ՊԼԹ=1890. 2585, թվ. գրիչ՝ ?, թղթ., բոլորագիր:

Վ Ե Ր Զ Ա Բ Ա Ն

Այս է սկիզբն ու համառոտ պատմությունը հայ կենդանագրերի: Իսկ թե այնպիսի տաղանդավոր նկարիչներ, ինչպես Արքայական ճաշոցի<sup>12</sup> ծաղկողներից ամենաճաշակավորը, հյուսել, հորինել կն սիմբոլական և ոչ սիմբոլական կենդանիներից էլ (օր. Վագր և շուն), որանով չի խախտում զարգացման այն ընթացքը, որով մինչև այդ և հաջորդ դարերի գուտ գեղարվեստական շրջաններն անցել են հայ կենդանագրերը: Մենք չենք պատահում և հիշատակված և այլ ձեռագրերի մեջ այնպիսի կենդանագրերի, որոնց կազմը չբացատրվեր մեր ուրվագծած տեսությամբ: Նկարիչների յուրաքանչյուրի բնական տաղանդին պետք է վերագրել տեղի ունեցած շեղումները, որոնք սակայն տևական նշանակություն չեն ունեցել հաջորդ շրջանների համար և մինչև հետին դարերի ձեռագրերում էլ, իր էության մեջ, մնացել է սիմբոլի հետքը՝ միշտ անբաժան չըբնաղ մանվածքից:

1915

Ս. Էջմիածին

<sup>12</sup> Այս չքննադ ժաշոցը մի նկարչի զարդարած գործ չէ, այլ առնվազն երկու նկարչի, ինչպես պարզ նկատելի է գույների և հյուսվածքների ակնհայտին տարբերություններից: Դժբախտաբար հիշատակարանը կիսատ է և նկարիչների մասին չկա որևէ տեղեկություն:



ՄԻՒՂՐԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՄՈՒՐԱԴՅԱՆ

## ՀԱՅՐԵՆԱՍԵՐ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆ Տ. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՔԱՀԱՆԱ ՏԵՐ-ՄՎԻՐՏՅԱՆ

(Սարդարապատի հերոսամարտի 54-րդ տարեդարձի առթիվ)

Ծուտով լրանում է Սարդարապատի հերոսամարտի փառավոր հաղթանակի 54-րդ տարին: Այդ օրհասական օրերին, հաշագգի փրկության գործի մեջ իր մեծ ավանդն է դրել Էջմիածնի շրջանի աշխարհագրայինների մեկ մեծ խմբի գլուխն անցած Գրամփա գյուղի քահանա տ. Հովհաննես Տեր-Մկրտչյանը:

Նա ծնվել է 1863 թվին Գրամփա գյուղում: Սկզբնական կրթությունը ստացել է Էջմիածնի հնգամյա ծխական դպրոցում, այնուհետև ուսումը շարունակել է Հռիփսիմեի վանքի մի վարդապետի մոտ: «Այդ ոտս աշակերտությանը» չորս տարի սովորելուց հետո կյանք է մտնում պատրաստված, անհրաժեշտ գիտելիքներով: Այնուհետև զբաղվում է ինքնագաղթագնամբ: Ամուսնանում, ունենում է երկու տղա և մեկ աղջիկ և ձեռնադրվում է քահանա 1895 թ.: Իր պարկեշտ և համեստ բնավորությանը վայելում էր ս. Էջմիածնի վանքի միաբանության հարգանքը: Ամենայն հալոց կաթողիկոսները Բյուրականի ամատանոցից վերադարձին իջեվանում էին նրա տանը և վայելում նրա ջերմ հյուրասիրությունը: Խրիմյան Հայրիկը առանձին սեր էր տածում այս բարձրահասակ և առնական քահանայի հանդեպ: 1913 թվից Մայր Աթոռի կողմից տ. Հով-

հաննեսը նշանակվեց յոթ գյուղերի առաջնորդական տեղապահ: Անցան խաղաղ տարիներ, բռնկվեց առաջին համաշխարհային պատերազմը, ամեն ինչ տակն ու վրա եղավ: 1918 թ. թուրքական յաթաղանից փրկված հարյուր հազարավոր հայերի քեկորները հասան Էջմիածին. մեր գյուղերը լցվեցին նրանցով: Տ. Հովհաննես քահանան նշանակված էր մեր եկեղաշրջանում գործող որբանոցների տեսուչ և սովյալ ժողովրդին պարենով մատակարարող կոմիտեի նախագահ: Նրա ջանքերով հազարավորները փրկվեցին սովից:

Տաճիկների երևալը Էջմիածնի մատույցներում միանգամից զգաստացրեց բոլորին: Արդեն 1918 թ. մայիսի 11-ին Մայր Աթոռի միաբանությունը գործի անցավ. վարդապետ և եպիսկոպոսներին գործուղեց գյուղերը, որոնք հայրենասիրական վառ ճառերով ելույթ էին ունենում, ժողովրդին կոչ անում դիմելու ինքնապաշտպանության: Ես անձամբ լսել եմ հանգուցյալ Գարեգին եպիսկոպոս Հովսեփյանցի կրակոտ ճառը ս. Հռիփսիմեի վանքում և Գրամփա գյուղի եկեղեցում, մի քանի գյուղերից հավաքված հոծ բազմության առաջ: Մայիսի 22-ի վաղ առավոտյան Մայր տաճարի զանգերի ոգևորիչ դողանջներին միացան ս. Հռիփսիմե, ս.

Գայանե, ս. Շողակաթ վանքերի և շրջակի բոլոր գյուղերի եկեղեցիների տազնապահար զանգահարությունները: Էջմիածին քաղաքում և շրջակի գյուղերում կյանքը մնան էր փոթորկահույզ ալեկոծ ծովի, բոլոր տղամարդիկ դուրս էին եկել հրապարակ, խոսում, վիճում, բորբոքվում էին: Մայր տաճարին մոտիկ հրապարակի (մեյդան) մեջ տեղը «Քանթան»-ի արտեզյան ջրհորի վրա ընկած կես մետր բարձրության հասնող տաշած քարը ծառայեց որպես հետտորների ամբիոն:

Մայիսի 22-ին, Մայր Աթոռի իշխանության թույլտվությամբ, Գևորգյան ճեմարանի ուսանողների անջարանը վեր էր ածվել աշխարհագրայինների ցուցակագրման կետի: Ցուցակագրվում էին մեծահասակներ ու պատանիներ (մինչև 40 տարեկանները որպես զինվորներ գտնվում էին ռազմաճակատներում), զենք ստանում, հիանալի և հարյուրյակներով, ոտքով մեկնում Սարդարապատ: Իսկ զենք ունեցողները Էջմիածնի հրապարակից ու գյուղերից տարերայնորեն իրենց գցում էին կովի դաշտ: Այդ օրերին Սարդարապատ տանող ճանապարհը մնան էր ուխտատեղի գնացողների:

Այդ օրը ես էլ ցուցակագրվեցի, բայց ժամը 4-ին Սարդարապատի ռազմաճակատի հրամանատարությունից կարգադրություն ստացվեց, որ դադարեցնեն աշխարհագրայինների առաքմանը, որովհետև թուրքը գլխավոր ջարդված նահանջել է, իսկ աշխարհագրայինները այնքան շատ են, որ հնարավոր չէ բոլորին կազմակերպել և օգտագործել ճակատի գծում:

Մայիսի 22-ին, արևը դեռ չծագած, Գրամփա գյուղի եկեղեցու զանգերը տազնապահար դողանջում էին: Ամիջապես գյուղի մեծահասակ տղամարդիկ զինված հավաքվեցին եկեղեցու մոտ գտնված երկու դարավոր չինարիների տակ, միաժամանակ տեղի հոր առաջարկով սուրհանդակներ ուղարկեցին շրջակա մոտիկ վեց գյուղերը, հանուն ազգի, հանուն իրենց զավակների փրկության, շտապ գալու և միանալու իրենց:

Կարճ ժամանակաընթացքում վեց գյուղերի զինված աշխարհագրայինները, ով ինչով որ կարող էր, ուտելիքի և փամփուշտի պաշարով եկան միացան մեր գյուղացիներին: Այդ ժամին տ. Հովհաննեսը անձանաչելի էր դարձել, իր ազդու դեմքով նա մնան էր քաջ գորավարի՝ իր զեն ու զրամի մեջ: Տեղ հայրը դիմեց քաջերին կարճ ճառով, օրհնակ քերեց Ավարայրի ճակատամարտը, թշնամու դաժանությունը Արևմտահայաստանում, այստեղ մնացած հայ ազգի բնաջնջման և Էջմիածնի սրբավայրերին սպառնացող վտանգը: Ապա, խաչը ձեռքն

առավ, օրհնեց բոլորին և առաջ ընկավ: Նրան հետևեցին 150 աշխարհագրայինները: Անցնելով Սամաղար, Հայքաղ և Քյորփալու գյուղերի միջով, խմբին միացան ևս 50 հոգի և 200 հոգու գլուխն անցած, քալի ու քրտիկների մեջ կորած ժամը 12-ին հասան Սարդարապատ: Ռազմաճակատի զորահրամանատար Դանիել-Բեգ Փիրումյանը տեղի հոր խմբին սիրով ընդունեց և նրանց կցեց այսպես կոչված «մահապարտների» 5-րդ գնդին:

Տ. Հովհաննեսը իր խմբով դիրքերից դուրս չեկավ, մասնակցեց բոլոր ճակատամարտերին, մայիսի 22-ից մինչև 28-ը, մինչ թշնամու ջարդելով չհասցրին Ալեքսանդրապոլ: Վերադաս մարմինների կարգադրությամբ, հայ բանակին թույլ չտրվեց հետապնդելու թշնամուն, որը Ադին կայարանում կանգ առավ: Ջորահրամանատար Դանիել-Բեգ Փիրումյանը տ. Հովհաննեսին իր խմբով հավաքեց իր շուրջը, ամբողջ բանակի առաջ նախ բռնեց աջը, համբուրեց ճակատը, շնորհակալություն հաշտեց խմբի աշխարհագրայիններին, ասելով. «Տեղ հայր, թեև հայ բանակը ետակի անգամ փոքր էր թշնամու բանակից, բայց ձեր մնան հոգևոր հայրերի և աշխարհագրային հայր ու պապերի անձնագրի կերպով մարտերին մասնակցելը այնքան ուժ ու եռանդ անբշնչեց նրա հոգում, որ նա անհաղթելի և անխոցելի դարձավ: Բարի ճանապարհ և խաղաղություն ձեզ»: Բանակի մարտիկների «ուռա»-ների տակ խումբը գնացք նստեց դեպի Էջմիածին:

Հունիսի 4-ին Բաթումում կնքված հաշտությունը երկար չտևեց: Սարդարապատում կրած պարտության վրեժը թուրքերը ցանկանում էին լուծել, միայն հարմար պահ էին փնտրում:

Շնքի փաշան Սարդարապատում ջարդված իր դիվիզիան համալրելով, հունիսի 15-ին, գիշերը, այն մոտեցնում է Քյորփալու գյուղի մոտ մեր սահմանին և առավոտյան հարձակում գործում: Սահմանապահները՝ այգետերերի հետ պաշտպանվում են, մինչև գյուղից մեծ ու փոքր հասնում են օգնության: Մյուս կողմից էլ Էջմիածնում գտնված 5-րդ և Սամաղարում՝ պարտիզանական զոհեր 5 թնդանոթով նույնպես տեղ հասան, որոնցից երկուսը Ջելվա գյուղից, երկուսը՝ Քյորփալուի, և մեկն էլ դաշտերի միջից շանթ ու կրակ էին թափում թշնամու գլխին. միաժամանակ Էջմիածնից և շրջակա գյուղերից աշխարհագրայինների հոսանքը ձգվում է Քյորփալու և միանում երեք կիլոմետր երկարությամբ խաղողի այգիների մեջ դիրքեր բռնած հայ կովողներին: Քյորփալուից գաղթյալների շարանը հասավ Գրամփա: Տ. Հովհաննես-

սը իր անելիքը գիտեր, անմիջապես եկեղեցու զանգերի միջոցով տագնապ բարձրացրեց: Մեր գյուղացիները անմիջապես զինված հավաքվեցին չինարիների տակ, սուրհանդակների միջոցով նորից վեց գյուղերից էլ եկան-միացան մերոնց: Տ. Հովհաննեսը Սարդարապատի օրերի նման նույնպես զինվեց, խմբի գլուխն անցավ: Սրընթաց ժամը 1-ին 150 աշխարհագորայիններով Քյորփալու գյուղից դուրս եկավ, բաց դաշտով արշավեց դեպի ռազմավար՝ այգիները, ուր տեղի էին ունենում կատաղի մարտեր:

Տեր Հովհաննեսի խմբի աշխարհագորայինների օգնության լուրը տարածվեց ռազմականատի մեկ գլխից մինչև մյուսը: Հայերը խանդավառված, նոր ոգի և շունչ առան, հերոսական անձնագործությամբ, «ուռա»-ներով, գրոհեցին թուրքերի վրա և նրանց ետ շարտեցին իրենց ելման դիրքերը:

Փառավոր հաղթանակ տարած զորամասերին ընդհանրապես, իսկ տ. Հովհաննես քահանայի խմբին հատկապես, գյուղերի միջով վերադառնալիս ժողովուրդը ցնծությամբ դիմավորեց, որպես ազատարար բանակի, և «ուռա»-ներով ճանապարհեց:

Հայ ժողովրդի կենաց և մահու կովին Էջմիածնի շրջանի գյուղացիությունը ընդհանրապես և Գրամփայի գյուղացիությունը հատկապես, տ. Հովհաննեսի ղեկավարությամբ, ամենատեսնդուն մասնակցությունը


ունեցավ հայ ազատագրական պայքարի գործում: Գրամփա գյուղը, հակառակ իր փոքրության, պատմական անցյալ և անուն ունի: Գտնվում է Էջմիածնից 3 կմ հեռավորության վրա, Քասախ գետի ափին: Մ. թ. ա. մոտավորապես 4-րդ դարում ուրարտացիների կողմից այստեղ կառուցվում է բազալտ քարերով անառիկ բերդ, որի ավերակները փոխված են 5 հեկտար տարածության վրա:

Տեր Հովհաննես քահանան մինչև իր կյանքի վերջը ապրեց խաղաղ ու հանգիստ և վայելեց ժողովրդի ամեն խալի սերն ու հարգանքը: Նրա ամբողջ կյանքը եղավ ազնիվ հոգևորականի և քաղաքացու մի տիպար, անբիծ ու անաղարտ օրինակ:

Տեր Հովհաննեսը վախճանվեց 1936 թ. փետրվարի 12-ին և հողին հանձնվեց Գրամփա գյուղի գերեզմանատանը: Հուղարկավորությանը մասնակցեցին շրջանի բոլոր գյուղերի քահանաները, ժողովրդի մեծ բազմություն և ս. Էջմիածնի Մայր Աթոռի միաբանության վարդապետներ և եպիսկոպոսներ:

**Ծանոթություն**—Տեր Հովհաննես քահանայի իր աշխարհագորայինների խմբով մասնակցության մասին Սարդարապատի հերոսամարտերին և Քյորփալուի ճակատամարտին տես Հ. Գ. Թուրջյանի «Սարդարապատի հերոսամարտը» գրքի երկրորդ հրատարակության 141, 156 և 225 էջերը:





Օ. Ս. ԵԳԱՆՅԱՆ

ՍԱՐԳԻՍ ԱՐՔԵՊՍ. ԶԱԼԱԼՅԱՆՅԻ  
«ԾԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ Ի ՄԵԾՆ ՀԱՅԱՍՏԱՆ»  
ԳՐՔՈՒՄ ՀԻՇԱՏԱԿՎՈՂ ԶԵՌԱԳՐԵՐԸ

Սարգիս արքեպս. Զալալյանցն իր «Ծանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան» գրքի Ա (Տփխիս, 1842) և Բ (Տփխիս, 1858) հատորներում զանազան առիթներով վկայակոչում է 18 տարբեր վայրերում տեսած 29 գրչագիր մատյաններ:

Ստորև անդրադառնում ենք այդ մատյաններին, վայրերը պայմանականորեն համարակալելով Ա—ԺԸ, իսկ մատյանները՝ 1—29:

Ա. ՍԱՆԱՀԻՆ

1. (Հատոր Ա, էջ 16). «Քեթոնկ [Սանահրնի]»: Այն Մատենադարանի № 3031 ձեռագիրն է, և գրատուն է մուտք գործել անցյալ դարի 90-ական թվականներին:

2. (Հատոր Ա, էջ 40—42). «Աւետարան». ունի ՌՃԼ (1681), ՌՃԼԲ (1683), ՌՃԿԶ (1717) թվականների հիշատակագրություններ: Այն Մատենադարանի № 9999 ձեռագիրն է, և ձեռք է բերված 1960 թվականին Թիֆլիսում՝ Հովհաննես Մելիք-Նուբարովից: Տե՛ս մեր «Սանահրնի գրատուն հայերեն ձեռագրերի հավաքածուն» («Պատմա-բանասիրական հանդես», 1970, № 3, էջ 292—294):

Բ. ԱՐՅԱՆ ԳԱՎԱՌ

3. (Հատոր Ա, էջ 159—161). «Ի միում հին ձեռագրի, գոր տեսի յԱրցախ գաւառի...», ուր պատմվում է, թե ինչպես Վարա-

զա վանքի վանահայր Ղուկասը 1231 թվականին Վարագա Խաչը բերում է Նոր Վարագ (Հախում գյուղ): Զալալյանցը մատենագիտական տվյալներ չի տալիս, և հայտնի չէ, թե ինչ ձեռագիր է: Վարագա Խաչի Նոր Վարագ տեղափոխման հարցին անդրադարձողները նման ձեռագիր չեն հիշատակում և վկայակոչում են միայն վանքի վիմական արձանագրությունը:

Գ. ԹԱՐԳՄԱՆԶԱՅ ՎԱՆՔ

4. (Հատոր Ա, էջ 167). «Աւետարան», հիշատակ Սյունյաց Գրիգոր իշխանի 1312 թվականից: Այն Մատենադարանի № 2743 ձեռագիրն է, և գրատուն է մուտք գործել 1890 թվականին:

5. (Հատոր Ա, էջ 168—169). «[Ժողովածոյ] յորում էր գրուած [գՊատմութիւնք] Թովմայի Մեծփեցոյ, Սոկրատայ Յոյն պատմագրի, Միքայելի Ասորոյ, Մաղաքեայ Արեղայի, Թղթակցութիւն Դիոնէսիոսի Արիպագացոյ ընդ Աւետարանչին Յօհաննոս, Հարց ժողովոյն անուանեալ, Թուղթ Ակակա հայրապետին Պետրոսին, և քանի մի Կանոնք: Գտաւ աստ և Պատմութիւն անցից Գօշ Միսիթարայ»:

Թարգմանչաց վանքի ձեռագրերին նվիրված մեր հոդվածում («Էջմիածին», 1971, № Ե, էջ 57—58) ասել ենք, որ հիշատակված նյութերը միատեղ ամփոփող ձեռագիր մեզ հայտնի չէ՝ գլխավորապես նկատի ունե-

նարով «Գույս աստ և Պատմություն անցից Գօշ Մխիթարայ» արտահայտությունը: Սակայն, այն-բավականին անորոշ է և կարող է վերաբերել ինչպես ձեռագրերին, այնպես և գրատանը: Եթե «գույս աստ»-ը երկրորդ ինստիտուտով հասկանանք, ապա կարելի է կարծել, որ հիշատակված ժողովածուն Մատենադարանի № 3076 ձեռագիրն է, որի մեջ կարելի է գտնել թվարկված բոլոր նյութերը, բացի Գոշի Վարքից: Այն գրատուն է մուտք գործել 1879 թվականին՝ ի շարս Ջալալյան-ցի 80-ից ավելի ձեռագրերի:

Դ. ԳԵՏԱՆՆԵՆ

6. (Հատոր Ա, էջ 172—173). «Աւետարան», ժամանակ՝ ՉԽԴ (1295): Այն Մատենադարանի № 6290 ձեռագիրն է, և գրատուն է մուտք գործել 1922 թվականին: Տե՛ս մեր «Գետաշենի Ավագ սուրբ Նշան մասրան հայերեն ձեռագրերը» («Էջմիածին», 1971, № Թ, էջ 54—55):

Ե. ՆՈՐԱՆՆԵՆ

7. (Հատոր Ա, էջ 180). «Աւետարան», ստացող՝ Աշոտ Սյալապետ: Այն Մատենադարանի № 6202 ձեռագիրն է, և գրատուն է մուտք գործել 30-ական թվականներին՝ ի շարս Գարեգին Հովսեփյանի 50-ի չափ ձեռագրերի: Մակար Բարխուդարյանը այն արձանագրել է Մեծշենի սուրբ Գևորգ եկեղեցում («Արցախ», Բարս, 1895, էջ 219—220):

Զ. ԾԱՐԱՆ՝ ՎԱՆԵՐ

8. (Հատոր Ա, էջ 208—209). «Յովհաննէս վարդապետ Ծարեցի, որ գրեաց զպատմութիւն իրում ժամանակի...»: Ջալալյանը թեև կոնկրետ ձեռագիր չի ակնարկում և տալիս է ըստ բովանդակության, բայց նկատի ունի Մատենադարանի № 2776 ձեռագիրը, որը գրատուն է մուտք գործել անցյալ դարի 80-ական թվականների վերջերին:

Է. ԳԱՎԱՌ՝ (ՆՈՐ ԲԱՅԱԶԵՏ)

9. (Հատոր Բ, էջ 126). Ա. «Աւետարան», ժամանակ՝ ՌԻԷ (1578), ուղղելի՝ ՌԻԵ (1576): Այն Մատենադարանի № 7869 ձեռագիրն է, և գրատուն է մուտք գործել 1938 թվականին՝ Երևանի Գրական թանգարանի հավաքածուի կազմում:

10. (Հատոր Բ, էջ 126). Բ. «Աւետարան», ժամանակ՝ ՋՀԱ (1522), գրիչ՝ Յակոբ, տեղ՝ «ի նահանգին Գեղեցիկ Չորոյ»: Ձեռագրիս ուր գտնվելն հայտնի չէ:

11. (Հատոր Բ, էջ 126). Գ. «Աւետարան» գրեալ ի Յօհաննէս վարդապետէ Ծուռուտեցոյ: Այն Մատենադարանի № 7881 ձեռագիրն է, և գրատուն է մուտք գործել 1938 թը-

վականին՝ Երևանի Գրական թանգարանի հավաքածուի կազմում:

12. (Հատոր Բ, էջ 126). Դ. «Աւետարան» գրեալ ի թագաորութեան Ծախ-արաւիճ... և յառաջնորդութեան Ստաթի Ստեփաննոս արքեպիսկոպոսի, ի վան Մարդ Աղաւնեաց: Ձեռագրիս ուր գտնվելն մեզ հայտնի չէ:

13. (Հատոր Բ, էջ 127). «Աւետարան»: Հիշատակարանում պատմվում է Երևանի 1679 թվականի երկրաշարժի մասին: Ձեռագրիս ուր գտնվելն մեզ հայտնի չէ:

Տե՛ս մեր «Նոր Բայազետի հայերեն ձեռագրերի հավաքածուն» («Պատմա-բանասիրական հանդես», Երևան, 1969, № 4, էջ 271—277):

Ը. ՎԱՐՈՂԱՆՆԵՆ

14. (Հատոր Բ, էջ 216). «Աւետարան», ժամանակ՝ ՈԶԱ (1232), տեղ՝ «ուխտս Հաւապակոյ», գրիչ՝ Ստեփաննոս, ստացող՝ Վանենի: Ձեռագրիս ուր գտնվելն մեզ հայտնի չէ: Այն Մակար եպս. Բարխուդարյանը տեսել և արձանագրել է Գյոգ-Բուլաղի ս. Աստվածածին եկեղեցու ձեռագրերի շարքում (տե՛ս «Աղուանից երկիր», էջ 234—236):

15. (Հատոր Բ, էջ 380). «Աւետարան»: Ունի ՈԼԲ (1183) թվականի հիշատակագրություն. «...և ոչ մնաց ամենևին ճարակ ձիավարժաց ազգիս հայոց»: Այն Մատենադարանի № 2877 ձեռագիրն է, և գրատուն է մուտք գործել անցյալ դարի 80-ական թվականներին:

Թ. ԱՐՋԱԶՈՐ

16. (Հատոր Բ, էջ 241—243). «Աստուածաշունչ», ունի ՋԷ (1458) թվականի հիշատակագրություն. «...մէկ մարդ մեռաւ Արապայ հողին, վեր գնացինք պարոն Արապային մոտ երեք Սարհատին վեր արին կապեց, Արապայ հողն երէտ Ուլուբեգին, Սարհատն շինեց Առջածորայ ջուրն... Ես Յօհաննէս կաթողիկոս որդի Ջալալին, թոռն մեծ Աթաբեգի վկայ...»: Ձեռագրիս ուր գտնվելն մեզ հայտնի չէ:

Ժ. ԱՎԵՏԱՐԱՆՈՑ, ԿՈՒՍԱՆԱՑ ՄԵՆԱՍՏԱՆ

17. (Հատոր Բ, էջ 246). «Աւետարան», ժամանակ՝ ՌԺԻ (1671), գրիչ՝ Գայանէ մայրապետ, տեղ՝ Ավետարանոց: Ձեռագրիս ուր գտնվելն մեզ հայտնի չէ:

ԺԱ. ՏԱԹԵՎ

18. (Հատոր Բ, էջ 270). «Քեօթոյն Տաթետու»: Այն Մատենադարանի № 6271 ձեռագիրն է, և գրատուն է մուտք գործել 20-ա-

կան թվականներին՝ ի շարս Տիրայր վրդ-  
Տեր-Հովհաննիսյանի ձեռագրերի:

ԺԲ. ՎԱՐԱԶԱԲՈՒՆ

19. (Հատոր Բ, էջ 340). «Գրչեայ մատ-  
եան մի, յորում գրեալ կային բանահիսու-  
թիւնք Յօհաննէս Թուկուրանցոյ... յորոց  
վախճանի գրէ Խն Յօհաննէս Թուկուրան-  
ցի»: Մատենագիտական տվյալների բացա-  
կայությունը թույլ չի տալիս փնտրությունը  
կատարել:

ԺԳ. ՆԱԽՋԻՎԱՆԻԿ

20. (Հատոր Բ, էջ 340—341). «Ի տան  
քահանայի գեղջս եղեալ են բազմահատոր  
ձեռագիր մատենանք... քահանայն ծածկեալ  
է զնոսս ընդ հիմանք անորակտոց եկեղեց-  
ւոյն... Մին ի... մատենից մնացեալ էր... ան-  
թաղ... գոր ընկալայ առ իս՝ յորում են...  
նառք նախնեաց և Մեկնութիւն Դուկասու... ի  
Մատթէոս վարդապետէ Տաթևացոյ»: Ձե-  
ռագրիս ուր գտնվելն մեզ հայտնի չէ և չի  
արձանագրված Սարգիս Զալալյանցի մահ-  
վանից հետո Սինոդի կողմից 1879 թվակա-  
նին կազմված ցուցակում (Մատենադարանի  
արխիվ, Կաթողիկոսական Դիվան, թղթ. 228,  
վավ. 15):

ԺԴ. ՍԱՐՈՒԾԵՆ

21. (Հատոր Բ, էջ 342). «Աւետարան եր-  
կաթագիր... Գերեցաւ Աւետարանս ի Պար-  
սից ի 1826 ամի, բայց յետոյ գնեալ ի հայոց  
ի Թարեզ քաղաքի՝ վերադարձաւ անդէն ի  
Սարուշէն...»: Ձեռագիրս Զալալյանցից հե-  
տո հիշատակել են և ուրիշները. Հ. Թուր-  
նյան («Յուդայական ժողովածուաց Դարեան Խա-  
չիկ վարդապետի», մասն Բ, Վաղարշապատ,  
1900, էջ 47, № 16), Մեսրոպ Տեր-Մովսիս-  
յան («История перевода Библии на ар-  
мянский язык», Петербург, 1902, стр. 164,  
№ 22), Գարեգին Հովսեփյան («Յիշատա-  
կարանք ձեռագրաց», հատոր Ա, Անթիլիաս,  
1951, էջ ?, № ?): Ձեռագրիս հետագա  
նակատագիրն անհայտ է:

ԺԵ. ԾԱԼԵԹ, Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ

22. (Հատոր Բ, էջ 377). «Գոյր աստ ի  
միում արկեղ բազում ձեռագիր մատենանք,  
բայց մերձեալ են խոնարհիլ ի հող գերեզմա-  
նի. զմինն միայն ի անցանէ առի ընդ իս, յո-  
րում էին զանազան ճառք երանելի նախ-  
նեաց...»: Ձեռագիրս Ս. Զալալյանցի ձեռքն  
անցնելուց հետո, ինչ-ինչ հանգամանքներ-  
ում բաժանվել է երկու մասի և Մատենա-  
դարան մուտք գործել որպէս երկու տարբեր  
ձեռագիր՝ №№ 2756, 2784:

23. (Հատոր Բ, էջ 377—378). «Ի վկայ

հնութեան այսր մեծաստանի, պատշաճ վար-  
կայ դնել զպատճէն կոնդակին, զոր գտի ի  
միում ձեռագրի». «Եւ ընդ շնորհագեղուն  
թղթոյս ծանուցումն լիցի օրհնեալ երկրնե-  
րացոյ Ծաքո, Ղապալու, Արաշբասանու, Աղ-  
դարու, որք են թեմ և փճակ սուրբ Ծալե-  
թի...»: Թե ինչ ձեռագիր է, հայտնի չէ:

ԺԶ. ԱՍՏՐԱԽԱՆ, Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ

24. (Հատոր Բ, էջ 440). «...ի ...զանգա-  
կատան անկեալ մնային անհնամ զանազան  
ձեռագիր և տպեալ մատենանք՝ ժողովեալք...  
ի Յովսեփայ արքեպիսկոպոսէ Արղութեանց,  
ի միջի որոց էր և Մեկնութիւն Երգ Երգոց  
Գրիգորի Նիսացոյ՝ գրեալ ի թուին հայոց  
ՅԽԲ (893), զոր եզիտ ի Սանահին: Ես հա-  
նեալ անտի... ցուցակագրեցի և զպատճէն  
ցուցակի առաքեցի ի սուրբ Էջմիածին յան-  
կորուստ պահպանութեան: Այն Մատենա-  
դարանի № 2884 ձեռագիրն է, և գրատուն  
է մուտք գործել 1879 թվականին՝ ի շարս  
Զալալյանցի ձեռագրերի: Թվականը ուղղե-  
լի՝ ՆԻԲ (973):

25. (Հատոր Բ, էջ 441). «Աւետարան  
...գրացաւ... վասն հայոց բնակելոց ի Ղա-  
զան... ի թուին հայոց ԹՃԼ (1681)»: Ձեռա-  
գրիս ուր գտնվելն մեզ հայտնի չէ:

ԺԷ. ՆՈՐ ՆԱԽԻՋԵՎԱՆ,  
Ս. ԼՈՒՍԱՎՈՐԻՉ

26. (Հատոր Բ, էջ 457). «Աւետարան...  
գրեալ ձեռամբ Կոստանդիանոս կաթողիկո-  
սի Կիլիկեցոյ, յորում նկարեալ է նոյն կա-  
թողիկոս զպատկեր Հէթում թագաւորի...  
(իմա՝ Լևոն թագավորի)»: Այն մատենադա-  
րանի № 8321 ձեռագիրն է, և գրատուն է  
մուտք գործել 1938 թվականին՝ Երևանի  
Գրական թանգարանի հավաքածուի կազ-  
մում:

27. (Հատոր Բ, էջ 457—460). «Աւետա-  
րան», ժամանակ՝ 2ԽԶ (1297), գրիչ՝ Ստե-  
փանոս քհ., ստացող՝ Մանուէլ քհ.: Այն Մա-  
տենադարանի № 7663 ձեռագիրն է, և գրա-  
տուն է մուտք գործել 1938 թվականին՝ Երե-  
վանի Գրական թանգարանի հավաքածուի  
կազմում:

28. (Հատոր Բ, էջ 460). «Ի բազմաթիւ Ա-  
ւետարանաց զմինն առի ընդ իս, ըստ որում  
արտագրեալ էր յիսկական ձեռագրէ սրբոյն  
Սահակայ...»: Զալալյանցը մատենագիտա-  
կան ոչ մի տվյալ չի նշում, և դժվար է որո-  
շակի բան ասել: Հավանական է, սակայն, որ  
այն լինի Մատենադարանի № 2848 ձեռա-  
գիրը, որը նույնպէս գրատուն է մուտք գոր-  
ծել 1879 թվականին՝ Զալալյանցի հավաքա-  
ծուի կազմում:

ԺԸ. ՆՈՐ ՆԱԽԻՋԵՎԱՆ, ԳԱՎԻԹ ԳԵՆՐԳՅԱՆ ՕԴԱԲԱԾՅԱՆՑ

29. (Հատոր Բ, էջ 463). «Աւետարան», ժամանակ՝ ՈՒԲ (1193), տեղ՝ Պողոսական Եկեղեցու տարածքում: Ձեռագիրը այժմ գտնվում է Բալթիկյան համալսարանի մեջ (№ 532):

Այսպիսով, Սարգիս արքեպս. Ջալալյանցի հիշատակած 29 ձեռագրերից 16-ը (№№ 1, 2, 4—9, 11, 15, 18, 22, 24, 26—28) այսօր գտնվում են Մաշտոցի անվան Մատենադարանում, 1-ը (№ 29)՝ Բալթիկյանում, իսկ մնացած 12-ի (№№ 3, 10, 12—14, 16, 17, 19—21, 23, 25) հետագա ճակատագիրն անայժմ հայտնի չէ:

Ստորև բերվող հին և նոր թվահամարների համեմատական տախտակում հերթական թվահամարի համարիչը ցույց է տալիս վայրը, իսկ հայտարարը՝ ձեռագիրը:

ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՏԱԽՏԱԿ  
ՍԱՐԳԻՍ ԱՐՔԵՊՍ. ՋԱԼԱԼՅԱՆՑԻ  
«ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ Ի ՄԵԾՆ  
ՀԱՅԱՍՏԱՆ» ԳՐԲՈՒՄ ՀԻՇՍԱԿՎԱԾ  
ՁԵՌԱԳՐԵՐԻ ՀԻՆ ԵՎ ՆՈՐ  
ԹՎԱՀԱՄԱՐՆԵՐԻ

| №№ ը/կ | Մատենադարան | №№ ը/կ | Մատենադարան | №№ ը/կ | Բալթիկյան | Մատենադարան |
|--------|-------------|--------|-------------|--------|-----------|-------------|
| Ա/1    | 3031        | Է/11   | 7881        | Ժ 1/21 | —         | —           |
| Ա/2    | 9999        | Է/12   | —           | ԺԵ/22  | —         | 2756        |
| Բ/3    | —           | Է/13   | —           | ԺԵ/23  | —         | 2784        |
| Գ/4    | 27 3        | Ը/4    | —           | ԺԶ/24  | —         | —           |
| Գ/5    | 307         | Ը/     | 28.7        | ԺԶ/25  | —         | 2684        |
| Դ/6    | 29          | Թ/16   | —           | ԺԶ/26  | —         | 8321        |
| Ե/7    | 6.02        | Թ/17   | —           | ԺԶ/27  | —         | 7663        |
| Զ/8    | 2776        | ԺԱ/18  | 6271        | ԺԶ/28  | —         | 2848        |
| Է/9    | 7869        | ԺԲ/19  | —           | ԺԸ/29  | 532       | —           |
| Է/10   | —           | ԺԳ/20  | —           |        |           |             |

